

ԱՐԵԱՆ ՏԱԿԱԶԻՋ

ԵՐԿԵՐ



ՀԱՅՈՒՏՏՐԱՆ







# ՍՄԲԱՏ ՃԱՀԱԶԻՋ

## ԵՐԿԵՐ

Նոպակից,

Կենսագրություն ևլ ծանօթություններ գրեց  
գիտության վաստակավոր գործիչ

ԵՐՎԱՆԴԻ ՇԱՀԱՅԻՋ

ՀԱՅՊԵՏՀԱՐԱՏ  
ԵՐԵՎԱՆ, 1947

Смбат Шахазиз  
с ОЧИНЕНИЯ  
(на армянском языке)  
Армгиз, Ереван, 1947



Սմբատ Շահովզյանը յուր 30-ամյա հորելյանի ժամանակ



## ՍՄԲԱՏ ՇԱՀԱԳԻՎՅԱՆՔ ՃՆՎԵԼ Է ԱՉՏԱՐԱԿ Գյուղում 1841 թ. սեպտեմբերի 5-ին ՀԱՄԱԴՐԱՄ Ա.ՄՓՈՓՈՒՄԸ

1. Սմբատ Շահագիվյանք ճնվել է Աշտարակ գյուղում 1841 թ. սեպտեմբերի 5-ին:

2. Նա Աշտարակի «Հովակիմենց» մեծ ընտանիքից էր: Նրա հայրը՝ Հովակիմենց Տեր-Սիմոնը սովորել էր Երևանի հոգեոր դպրոցում և ժամանակի հասկացողությամբ կրթված մարդ էր: Պերճ Պռոշյանն իր մանկական հիշողությունների մեջ Տեր-Սիմոնի մասին, որի «մոնթն» է եղել ինքը 7—8 տարեկան հասակում, ասում է: «Մի ուրիշ տեսակ քահանա էր հոգին դրախտում ինդացող Տեր-Սիմոնը. նա ոչնչով նման չէր յուր շորս ընկեր տերտերներին, ոչ քուչումն էր նստում, լավ ու վատ գործերի և խոսքերի ներկա լինում, ոչ անվայել կատակներ ու սրախոսություններ անում, ոչ բարձր էր խոսում, ոչ ժամումն էր իրան անկարգ պահում և ոչ էլ իր ժողովրդի հետ իր հասույթի համար անբավականություն անում, ինչ որ տալիս էին, առանց վրան նայելու գրպանն էր դնում: Գինու համը միայն պատարագ անելուն էր տեսնում: Մի ժանր, մի համեստաբարո, մի անշահասիեր, մի առաքինի քահանա էր նա, գյուղի մեծ ու փոքրից սիրված ու հարգված: Մենք, Տեր-Սիմոնի մոնթերս, սիրում էինք մեր ուսուցչին և գիտեինք, որ ուրիշ տերտերների նման «ֆալախա» դնել, ավազի վրա բաց ծնկներով չոբացնել կամ ուրիշ անխիժն պատիժներ տալ չուներ, սակայն էն էլ գիտեինք, որ մեր համբերատար տերտերին բարկացնողը ինք չէր դուրս տանիլ. մին կտար ու փիր կտար»:

3. Սմբատի մայրը, Խոսրովիդումստը կամ «Խոսրով նանց»՝ Մկրտչենց, կամ, ինչպես աշտարակցիք ասել են, «Ճանճապաննենց» տանիցն էր, նա գյուղի գեղեցիկ աղջիկներից էր՝ միշահասակ, կարմրայտ և առողջակազմ: Նա շատ սիրով մայր է սղեւ, բայց միևնույն ժամանակ կարուկ ընավորության տեր: Տան մեջ ամենքը լսել են նրան, նրա խոսրով կառավարվել, մանավանդ որ նա առողջամիտ, տնտես ու տնարար կին է եղել. մինչև իսկ տերտերը ճանաշել է նրա հեղինակությունը տնային գործերում և նրա խոսքից դուրս չի եկել: «Տիրուհի Խոսրով նանք,—ասում է Պռոշյանը իր նույն հիշողությունների մեջ,—ամենիցս սիրված ու հարգված էր: Խոսրով նանին միայն մենք չեինք

Ներում, ամբողջ գյուղը պատվում էր այն հարգելի կնոջը, գյուղի մեջ ուրիշ տերտերակիններ ու աղաների կնանիք էլ կային, բայց խոսրով նաև բուրրից ավելի հարգված էր» (Տես «Ղարաբաղ» թերթի 1912 թվի 13 համարը Պերճ Պոռշյանցի «Մանկական հուշատերից»):

4. Տեր-Սիմոնն ուներ վեց որդի, որոնցից անդրանիկը կոչվում էր պապի անունով Հովհանիմ, իսկ մյուսները՝ Եփրեմ, Կամսար, Սահակ, Սարիբեկ և Սմբատ Ալսափիսով Սմբատն իր եղբայրների մեջ կրտսերն էր Տերտերը սիրել է ուսումը, ուստի և իր որդիներից երեքին՝ Հովհանիմին, Կամսարին և Սահակին տվել է երեանի հոգևոր դպրոցը, մտածելով նրանց ավարտելուց հետո, դպրոց ուղարկել Սարիբեկին ու Սմբատին, որովհետև Եփրեմը վախճանել էր դեռ վաղ պատանեկան հասակում: Նա սակայն չի համում իր նպատակին և մեռնում է 1847 թվի ունիթ խորհրդ տարին», երբ Սմբատը 6—7 տարեկան մանուկ էր և Հովհանիմը նոր միայն ամուսնացած և պաշտոնի մտած երեանի Կոնսիստորիալում և այդտեղից էլ փոխադրվում Վաղարշապատ եցմիածնի Սի-նոդը:

5. Տեր-Սիմոնը միջակ կարողության տեր է եղել. ունեցել է մի այդի ռևուրաններում» (Խոպաններում) — «Թուրքի իգի», մի նորատանկ ածեր «Սեվահողերում», «Շլորանի» ճանապարհի մրա, մի ջրարքի արտ «Միջնահանդում» և բավարար վարելանող անջրդի «Զաղի-դուզում» ու սեփական տուն «Մողնութափ» տակ հին գյուղում, որ կիսաբանդ վիճակում մինչև օրս էլ գոյություն ունի և Սմբատի ծննդյան տեղն է. նա իր այդ ունեցածից այնքան եկամուտ է ստացել, որ կարողացել է համեստ ու անկարոտ ապրել: Բայց երբ մի կողմից բահանայի մահվանը (1847 թ.) եկամուտն է պահասում, մյուս կողմից էլ 1848 թվին մորեխն է հայտնվում և դաշտ ու անդամատան, ալդի ու պարտեզ ուսում, չորացնում՝ ընտանիքը չքավորության է մատնվում:

6. Ընտանիքի հոգսերը հոգալու ժանրությունը այդ նեղ օրերին ամբողջովին ընկնում է անդրանիկ որդու՝ Հովհանիմի վրա: Նա իր մահվան բոխն առնելուն պես, հասնում է Աշտարակ և ընտանիքի կառավարության գործը իր ձեռքն է առնում: Հացի պաշար է պատրաստում և միջոցներ որոնում ապահովելու ընտանիքը և ապագայում, որի համար Սահակ եղբորը տանում է իր մոտ, որ շարունակել տա ուսումը և վերջը մի գործի, պաշտոնի դնի: Կամսարի համար ձեռք է բերում՝ իր հոր տեղը քահանա ձեռնադրվելու իրավունք, մնում է միայն տեղավորել Սարիբեկին, որի ուսանելու ժամանակը հասել էր, իսկ Սմբատը գեռ փոքր էր և կարող էր համբերել Ահա հենց այդ ժամանակ նրա գլխում ծագում է մի միտք՝ խնդրել Լազարյան ճեմարանի վարությանը՝ Սարիբեկին ձըրի գիշերօթիկ ընդունելու համար: Խնդրել ուղարկում է և դրա հետ միասին դիմում է ներսես կաթողիկոսին՝ միջնորդելու այդ մասին ուր հարկն է:

7. Անցնում է մի երկու տարի: 1851 թվին ստացվում է Ճեմարանից մի պաշտոնական թուղթ, որով հայտնվում է, թե տված խնդիրը հարգված է և Սարիբեկը ընդունված է Ճեմարան, իբրև Ճեմար Լազարեանց սան: Հովհանիմը շտապում է Աշտարակ, ավետում է ուրախալի լուրը մորը և պատրաստություն է տեսնում ուղարկելու Սարիբեկին, բայց սա կամակորում և չի ուղղում գնալ, մինչև իսկ մնից փախչում, գնում է Կարբի գյուղը, որով շափա-

զանց վշտացնում է մորն ու եղբորը Սմբատը տեսնելով ընդհանուր վիշտը և կամենալով ուրախացնել իր սիրած մեծ եղբորը և մորը, առաջ է ընկնում և առաւմ, թե «ինքը Մոսկով կերպա, թող Սարիբեկի տեղը իրեն ուղարկեն»:

8. Սմբատը մի ժիր, կայտառ, թովոան և սրամիտ մանուկ էր և ընտանիքի սիրելին: Ամենքը երես էին տալիս, նամանավանդ մայրը և մեծ եղբայր Հովհակիմը, որոնք երրեք նրա «խաթիհն» չեին կպչում, որովհետև նա ընտանիքի մեջ ամենափոքրն էր... Ամենքի սիրով ու գգվանքով շրջապատված՝ մեծերի կոշտ ու կոպիտ վարմունքից աղատ լինելով, նրա մեջ զարգացել էր վստահությունը, համարձակությունը: Ով որ էլ լիներ, ինչ դիրքի և աստիճանի մարդ էլ որ լիներ իր առաջ կանգնած, նա չէր բաշվում, այլ ճակատը բաց, համարձակ պատասխան էր տալիս նրա հարցերին: «Պետ էր, պեծ էր փոքրիկ Սմբատը,—ասում է Պողոսանը նրա մանկության մասին,—ինքը գեռ չէր կարգում, գեռ, յուր ասելով, տերտերը եկող տարին պետք է գնար էջմիածին, որ իրենց Գեորգ Վարդապետից մի տեսար ուզեր, բերեր իրեն դաս տար, բայց այդ լը-զար-մղար շեկի ու կենդանի և, որքան միտս է, երեսը փերոտ երեխան աւմենքիս դասերից մի մի կտոր անդիր գիտեր: Հենց որ մենք չորում էինք տերտերի առաջին և դասերս սկսում, մեկ էլ բակի մյուս ծայրից վազելով գալիս էր ու բերաններիցո խլում հետևյալ բառն ասում: Այս, ժե, ճե, ու, կարգում էր մի երեխա, բեն, ինի, մեն, սե, շարունակում էր Սմբատը: Բեն, այս, բա, սկսում էր գողալով մի երեխա: բեն, եւ, բե, վրա էր բերում Սմբատը: Դե՛, հերիք է, Սմբատ ջան, գնա՞ մորդ ասա, թող քիչ հաց ու պանիր տա, թող էս ծույզը դասն ասի, տեսնենք սովորե՞լ է: Եվ Տեր-Սիմոնը կիսա-յպիտ ճանապարհ է ցուց տալիս իր շար Սմբատին»:

9. Երբ ամեն բան պատրաստ է լինում ճանապարհի համար, մայրը տանում է նրան էջմիածին, որ ներկայանա կաթողիկոսին և իր շնորհակալությունը հայտնի նրա միջնորդության համար Կաթողիկոսը սիրով ընդունում է Խոսրով նանիին, օրհնում է երեխային և ճանապարհ է դնում, հրամայելով տալ երեխային մի բուրք շամիչ, որ վեհարանից գուրս գալուն պես, Սմբատը հենց այնտեղ, դասն առաջ թափում, շաղ է տալիս, ասելով մորը, թե՝ «այդ պառավ մարզը կարող էր իրեն շամշից ավելի լավ բան տալ»: Հովհակիմը եղբորը տանում է Թիֆլիս, որտեղից Սմբատը հետագայում Շիլլերի շնորհալի թարգման Գեորգ Բարիսուդարյանի հետ ուղևորվում է Մոսկա:

10. Գեորգ Բարիսուդարյանի՝ իր այդ ճանապարհորդության մասին գրած հիշողություններից (ան՝ «Իմ հիշողություններից» 1894 թվի սԱրձագանք»-ի 3, 5 և 7-րդ համարները) իմանում ենք, որ նրանք գուրս են եկել Թիֆլիսից 1851 թվի սեպտեմբերի վերջերին Փուրդոնով և շորս օրվա մեջ անցնելով Կովկասան լեռները, հասել են Վլադիկավկազ, որտեղ մնացել են 10 օր, որովհետև Ռուսաստան գնացող կառք իսկույն չի ճարվել Նոյեմբերի 20—25-ին, վերջապես հասնում են Մոսկվա, որտեղ Բարիսուդարյանը Սմբատին տանում է ձեմարան, իսկ ինքը մեկնում Գորպատ:

11. 1894 թվի ապրիլի 11-ին Գեորգ Բարիսուդարյանը Թիֆլիսից ուղարկելով իր լուսանկարը Սմբատ Շահազիզյանին և փոխադարձարար նրա պատկերը խնդրելով, գրել է պատկերի ետքը մի ոտանավոր, որի մեջ նա վերստին հա-

մառուտաբար հիշում է իր նրա հետ միասին դեպի հլուսիս կատարած ճանապարհորդությունը.—

Ազնիվ բարեկամ, Սմբատ Շահաղիզ,  
Ավելի քան թե չորս տասնյակ տարի,  
Անցավ այն օրից, երբ մեզ երկուսիս  
Հարկ եղավ գիմել երկիրն օտարի,  
Որ հագեցնենք մեր ուսման փափագը,  
Զարգացնենք մեր միտքն ու ճաշակը,  
Եվ ձեռք բերելով գիտության գանձը,  
Պիտանի անենք ազգին մեր անձը:

Այն ժամանակ մենք թե դու և թե ես,  
Մատաղահաս էինք—մանուկներ անփորձ,  
Բայց վստահ էինք, չեն վախեցնի մեզ  
Ապագայումը աշխատանքն ու դործ:

Այնուհետ իրարից մենք բաժանվեցանք,  
Եվ այնուհետեւ, թեև ունեցանք  
Զանազան վիճակ, բայց մեկ ասպարեզ  
Եվ էլ շտեսանք իրարու երես:

Այժմ երկուս էլ ալեզարդվելով,  
Նորոգում ենք մեր բարեկամություն,  
Եվ իմ պատկերը բեզ ուզարկելով,  
Քոնն ստանալու ունիմ ցանկություն:

Իրար պատկերի դիմացը կանգնած,  
Ուկի մանկությունն հիշենք, որ դնաց,  
Եվ միիթարվենք, որ մեր ասպարեզ  
Մենք կատարել ենք խղճով, պարզերես:

12. Լազարյան Ճիմարանը այդ ժամանակներն ուներ վեց գիմնազիոնական դասարան, երկու մասնագիտական արեելագիտության դասարան (լիկեռն) և մի նորաբաց նախակրթարան՝ հատկապես հայ անպատրաստ մանսպերի համար։ Սմբատը ընդունվում է այդ նախակրթարանը, որովհետև բոլորովին անպատրաստ է եղել և ոռուարեն էլ իսպառ չի իմացել։ Ուստի և, բնականարար, զատ դժվարություն է քաշում, մինչև որ կարողանում է ընտելանալ նոր անծանոթ կյանքին, սովորել անծանոթ լեզուն և իր հասակին համապատասխան զարգացում և գիտություն ձեռք բերել։ Այնուհետև արդեն նա կարողանում է իր տոկուն աշխատասիրությամբ ոչ միայն անսայթաք առաջ դնալ, այլև առաջադեմ աշակերտ հանդիսանալ, հատկապես նա առաջադիմ է հանդիսացել հայոց լեզվի գիտության մեջ, և այդ ոչ շնորհիվ իր երկարամյա ուսուցիչ-

Ների՝ Մկրտիչ էմինի և Մաերի, որոնց նա երբեք չի հավանել, և միշտ էլ պիտու-  
լաստիկ է անվանել, այլ իր աշխատափությամբ՝ հայ հին մատենագիրների ու-  
սումնասիրությամբ և հարատև ընթերցանությամբ։ Ճեմարանի հայ ուսուցիչ-  
ներից նա միայն հավանել, համակրել և սիրել է Նալբանդյանին, որի ուսուցչու-  
թյունը, թեև շատ կարճատև է եղել Ճեմարանում, բայց նրա ցանած սերմերը  
հասուն պտուղներ են առ առ իսութերը՝ «հայերեն մտածեցեք» և «հայե-  
րեն պետք է մտածել», Ճեմարանի աշակերտության մեջ ավանդաբար անցել են  
սերնդեւ սերունդ։ Ահա նրա այդպիսի սիրու և համակրության հետևանքով էր որ  
հետագայում, երբ Նալբանդյանը բանտումն էր, Շահազդիզյանն իր ուսուն-  
վշտի մեջ նրան նվիրել է հետևյալ տողերը.—

...Բայց թեզ հանում եմ այս տիսուր դասից,  
Ով նոր հայախոս և ազնիվ մըշակ.  
Թեզ կարող էի անմահ փուշերից  
Քաշ մարտիրոսի բոլորել պսակ։

Քնարիդ լարերն ազատ շարժվում են,  
Երբ ազատ քո կամք, ազատ քո հոգին.—  
Այդպիս սոխակներ ներդաշնակում են,  
Հեռու վանդակից, թիերի միշին։

Սրտիդ կոկիծը, կոկիծ է ազգին,  
Եվ ու մի դիմակ կեղծավորության.  
Գրչիդ վաստակը—մեծություն Հայի,—  
Թեև հայասերը են քո դավաճան։

Ո՞վ ազգի անդամ, հավերժ հարդելի,  
Թող մխիթարի կուրծքիս հառաջանը  
Պայծառ ճակատի Հայրենասերի,  
Որի վարձն եղավ ապերախտ զրկանք։

13. 1860 թվին Շահազդիզյանն ավարտում է Լազարյան Ճեմարանի գիմ-  
նազիոնական ընթացքը և մտնում է լիկեռն, որ ինչպես ասացինք, բաղկացած-  
էր երկու դասարանից և կազմում էր Ճեմարանի վեց դասարանի շարունակու-  
թյունը, նրա յոթ և ութերորդ արեկելագիտության մասնագիտական դասարան-  
ները։ Այդտեղ էլ նա իր գլխավոր ուշադրությունը դարձնում է հայերենի վը-  
րա, անդադար կարդայով, կատարելագործվելով գրաբարագիտության մեջ և  
հետզհետե կոկելով, մշակելով իր աշխարհաբար լեզուն, նախապատրաստվելով  
և տալով նրան այն ձևու ու գուշնը, որ տեսնում ենք նրա «կեռնի վշտի» մեջ։  
Սեղուակ Մանդինյանը, որ Ճեմարանի այդ ժամանակվա աշակերտներից է ե-  
ղել, վկայում է, որ աշակերտները սիրում էին լսել նրա սահուն և ուսում-  
ցած» աշխարհաբար լեզուն, որ իր կանոնավորությամբ, իր ճկունությամբ և  
քաղցրահնչունությամբ, իբրև մի նոր, չլաված ու չտեսնված բան, տարբեր ե-  
ղածներից, գրավում, հմայում էր ամենքին։

14. 1862 թվին Շահազիզյանն ավարտում է լիկեռնի գասընթացը և մըտնում կյանք Նրա անունը, իբրև առաջադեմ աշակերտի և ուսանողի, գրվում է ոսկի ասխատակի վրա՝ նախկին առաջադեմ աշակերտների և ուսանողների շարրում Ճեմարանի վարչությունն ի նկատի առնելով Նրա առաջադիմությունը և ընդունակությունները և առաջնորդվելով Ճեմարանի կանոնադրությամբ, որի գորությամբ Լազարյան թոշակավորները շրջանավարտ լինելուց հետո, պարտական էին վեց տարի ծառայելու Ճեմարանում, —միջնորդել է հոգաբարձուի առաջ և նրան թողել Ճեմարանում, իբրև վերակացու և նախակրթաբանի ուսուցիչ:

15. Իբրև նախակրթաբանի ուսուցիչ, Շահազիզյանն օրինակելի էր Աշակերտները սիրում էին Նրան և Նրա պատվերը կատարում անպայման: Նա իր փոքրահասակ ունկնդիրներին իմացել է գրավել, հարցասիրության ընտելացնելով Նա գասավանդում էր երեխանների ըմբռուղությանը մատչելի եղանակով, հաճախ համեմենով իր խոսակցությունն ու զրուցները զվարճաբանությամբ և կատակերով. Կամ խրատական, զվարճալի պատմություններ է արել և լավ-լավ հերիաթներ է պատմել, ուրախացրել նրանց ու ինքն էլ ուրախացել նրանց հետ Ասում են, որ Նա մի անդամ դասարան է տանում մի փոքրիկ երաժշտական գործիք և պահում է ամբիոնի մեջ Դասի ժամանակ նկատելով որ աշակերտներն սկսում են ձանձրանալ, ժածուկ է գործություն է մի քաղցր, անուշ մեղեդի, որ գրավելով փոքրիկների ուշադրությունը, վանում է նրանց ձանձրությը, որից հետո նա հաջողությամբ շարունակում է իր ընդհատած դասը: Եվ այդպիսի դասաւության հետևանքը եղել է կատարյալ հաջողություն. Երբեք և ոչ մի անդամականություն, գժգոհություն չի պատմել, ամենքն էլ, սակալ բացառությամբ, բավարար առաջադիմությամբ փոխադրվել են առաջին դասարանը և այնքան պատրաստություն են ստացած եղել, որ այնուհետև հեշտությամբ կարողացել են շարունակել և հաջորդ դասարաններում: Նա մեզ պատմել է, որ իր դասավանդության գործում նա ոչ մի դասարանում այնքան բավականություն չի ըստացել, որքան փոքրիկների մեջ, նախակրթաբանում, որտեղ եղել եղամափակակ, և դասատու, և դասագիրք Նա ինքը հենց նախապատրաստվել էր այդտեղ և լավ ժանոթ էր նախակրթաբանի բոլոր հանգամանքներին. պաշտոնն էլ, ըստ ամենայնի, համապատասխան էր Նրա ներքին հակումներին ու խառնվածքին. Նա մի կողմից պիտի լիներ դաստիարակ-վերակացու բոլոր աշակերտների համար, մյուս կողմից էլ Ճեմարանի համար, հայ աշակերտների կոնտինգենտ պատրաստող:

16. 1867 թվին, օգոստոսի 11-ին Շահազիզյանը նշանակվում է հայոց լեզվի կրտսեր ուսուցիչ Ճեմարանի առաջին երեք դասարաններում, որի համար և ստիպված է լինում նույն ամսմին գնալ Պետերբուրգ և Համալսարանի արևելյան բաժնում կանոնիդատի բնության ենթարկվել, որովհետև Լազարյան լիկեռնը այդ ժամանակները իր շրջանավարտներին միջնակարգ դպրոցներում ուսուցիչ լինելու ցեղական կամ արտոնություն գեռ չեր տալիս: Նրա քննությունները զինում են բանավոր և գրավոր բանավոր հարցաբաննվում է հայ-վրացական հյուղի բոլոր առարկաներից և դիտություններից: Ներկայացնում է նաև առան-

ձին գիտական շարագրություն (գիտերտացիա) իր մասնակիտությունից, որ արժանանում է համալսարանի խորհրդի հավանությանը, և նույն 1867 թվի սեպտեմբերի 4-ին ստանում է «արեւելան լեզուների թեկնածուի» գիտական տատիման:

17. 1873 թվին վախճանվում է Մսեր մագիստրոսը, որ ծեմարանի կրոն-ուառցն էր և բարձր դասարանների հայոց լեզվի ուսուցիչը Շահազիզյանն ըստանում է նրա հայոց լեզվի դասերը, նշանակվում է նույն առարկայի ավագ ուսուցիչ, կենտրոնացնելով իր ձեռքին բարձր դասարանների հայոց լեզվի բոլոր դասերը՝ սկսած երրորդ դասարանից: Թասավանդվում էր միայն գրաբարը, ուստի և Շահազիզյանն էլ ստիպված է լինում շարունակել նույնը: Սակայն, աշխատում է նրա բովանդակությունը, բայց հնարավորության, ամենալայն շափերով աշխարհաբարացնել, ավելի թարմություն և կենդանություն մտցնել մեռած լեզվի դասատվության նղանակի մեջ, որով և միանդամայն հանդիսանում է հակապատկեր իր նախորդներին, որոնք, կարծես, դիտավորյալ այնպիս էին վարդել, որ փոշոտածն ավելի փոշոտվի, հնացածն ավելի հնանա և մեռածն իսպան հույս լունինա հարություն առնելու նա, նախ և առաջ, զեն է շպըրտում «ճարտասանությունը», որ անցնում էին Միքայել Սալլանթյանի գրքավ և Մսերի «Հրահանգ ճարտասանութեան ի պէտս աշակերտաց» ձեռագիր տետրակով. հանում է գործածությունից նույն Սալլանթյանի և էմինի քերականություններն իրենց պատմական, պարապական, նախորդիվ տրական հոլովներով և բազմաթիվ հոլովմունքներով: Նա իրեւ դասարանական ընթերցանության գիրը, պահում է երրորդ-չորրորդ դասարանների համար էմինի ունտիր հատվածը», իսկ մյուս դասարաններում կարդում է հայոց մատենագիրներին, հաշվի առնելով դասարանի գիտության և պատրաստության ու աշակերտների զարգացման պատիճանը, իսկ իրեւ քերականության ձեռնարկ, պատրաստում է իր սեփական ձեռագիր տետրակը, որի մեջ ամփոփված էին միայն լեզվի գլուխվոր կանոնները և ընդհանրապես քերականությունը շատ համառոտած և պարզված էր: Բացի այս բոլորից, նա մտցնում է «աշխարհաբարի շարագրությունը»:

18. 1897 թվին լրանում է Շահազիզյանի ուսուցչական գործունեության 35-ամյակը և նա իր դիմումի համաձայն, ազատվում է պաշտոնից: 35 տարվա ծառայության ընթացքում նա միշտ հարգված, գնահատված էր և սիրված էր պաշտոնակիցներից և աշակերտներից:

19. Պաշտոնից արձակվելու հետեանքով նա ստիպված է լինում իսպառ թողնել ծեմարանը, որտեղ ապրում էր Մոսկվա ժամանելու առաջին օրից: Թե ինչ ժանր ազգեցություն է թողել նրա վրա իր աշակերտներին, դասարանը և բնակարանը թողնելը, կարելի է տեսնել նրա՝ իր եղբորորդում 1897 թվի մայիսի 25-ին գրած նամակից.—«Այստեղ (Մոսկվայում) պիտի լինի Տեր-Հակոբյանի ավագ գուստրի հարսանիքը մոտաբար 10 հունիսի, և եօ հրավիրված եմ որպես խաչեղբայր: Բացի սրանից, պիտի տունս դասարկեմ ու իրեղնները հանձնեմ պահեստի: Պատրաստ բնակարան դժվար է գտնել, որ ինձ մեծ հոգս է պատճառում, ծեմարանը արդեն, կարելի է ասել, թողել եմ, և հայտնել գարշելի պարոնին (Գևորգ Քանանյանին): Ես ամենայն մասամբ ծերացել եմ, բայց որպես դասատու, ասում եմ առանց պարծենալու, կամ և կմնամ նույն-

պես կայտառ ու կենդանի, որպես ձեր ժամանակներում. թե երբեմն աշխարհը գլխիս մթնում է և հուսահատությունը դառնում է ինձ անբաժան ընկեր, մի հույս է, որ ինձ պահում է կենդանի, լուսավորում է հոգիս, մարրում է միտքս, հանգստացնում է զղերս, այդ իմ հավերժ սիրահար և մշտադաշտ դասարանն է. ես իմ երիտասարդ ընկերակցության մեջ գտնում էի այն, որ ոչ ինձ չեր կարող տալ, ոչ դու, իմ սիրելի, ոչ հարստությունը, ոչ պաշտոնական մեծությունը, և ոչ նույնիսկ երկինքը՝ Հավատա ինձ, որ այս տողերս գրում եմ և արտասուբք հեղեղի պես թափվում է աշքերից ների ինձ, երվանդ, որ և դու պիտի շարժվիս ինձ հետ, սորա համար և կտրում եմ խորսրութեավ դու ինձ այլ մի հիշեր սրա մասին Կշռված է և որոշված. այլևս Սմբատդ Ճեմարանում էլ—

— Ուրիշ շատ բաներ կամենում էի գրել, բայց այժմ անկարող եմ», և ալլին.

46 տարի շարունակ Ճեմարանում առաջ իրրև աշակերտ և լիկենոնի ուսանող, հետո իրեկ վերակացու-դաստիարակ նա ապրել է իրեն հատկացված բնակարանում, ազատ բնակարանի հոգսից Ճեմարանը թողնելուց հետո սկսվում է նրա թափառական կյանքը բաղարում մի բնակարանից մյուաք—մի տեղ բնակարանն է անհարմար լինում, մյուս տեղ աղախինն է նրան կողոպտում, մի այլ տեղ մի ուրիշ պատճառով և այսպես միշտ ու շարունակ և ոչ մի տեղ հանգստ և դադար, մինչև որ, վերջապես, հաստատվում է Մայանիցի բաղարամասում Կուզնեցովի տանը «Շվեցարիա» կոշված հյուրանոցի երկու օթեանից բաղկացած համար 65 սենյակում։

20. Շահազիզյանն իր պաշտոնակիցներից միայն մեկի հետ չի կարողանում կորրեկտ և լավ հարաբերություն պահպանել—«Գամառ-Քաթիպա» գրական ընկերության անդամ, Ճեմարանի տեսուչ զգլարցի Գևորգ Թանանյանի հետ, որ էմինից հետո կարգվել էր տեսուչ, իսկ վերատեսուչ Նիկողայոս Դիլանյանից հետո, ստանձնել էր և Ճեմարանի վերատեսչի պաշտոնը Այդ թշնամական հարաբերությունը Ճեմարանի երկու հայ աշխատակիցների միշտ հին բան էր. դա սկսվել էր 1865 թից և հետզհետե զորանալով, սուր բնավորություն էր ստացել և շարունակվել մինչև վերջը, անընդհատ արյուն պղտորելու պատճառ լինելով երկուսի համար էլ, անընդհատ լարված վիճակի մեջ պահելով երկուսին էլ, երկուսի մազձն էլ խառնելով Այդ թշնամության սկզբնապատճառը եղել է այն բողոքագիրը, որ ուղարկվել էր Ճեմարանի հոգաբարձու Խաչիկ աղա Լազարյանին Շահազիզյանի մասին, երբ նա զեռ երրորդ տարին էր, որ ծառայում էր Ճեմարանում. Բողոքը նոր լուսու տեսած «Էկոնի վշտի» առթիվ է եղել, որ իր բովանդակությամբ, ընդհանուր ուղղությամբ ու ոգով, դուր չէր եկել Մսերին, Էմինին և դրանց համախոհներին, որոնք Սմբատ Շահազիզյանի մեջ տեսել էին իրենց մի նոր հակառակորդին, Նազարյան-Նալբանդյանի մի նոր եռանդուն գաղափարակցին, Նազարյանին և Նալբանդյանին նրանք համարում էին իրենց թշնամիները, իսկ նրանց հրատարակած «Հյուսափալլա» ուղղությունը՝ վիճասակար ազգի համար թղթին ընթացը է տրվել և ուղարկվել Ճեմարանի ժամանակի վերատեսուչ իվան Կոնդրատիշ Բարստին բննելու և հետեւանթի մասին զեկուցելու թե ինչ պատիժ է սպառնացել Շահազիզյանին,

կարելի է հղրակացնել վերատեսչի պաշտոնականի վերջին խորեցից.—«Он любим всем заведением; энергичен, честен. Возможно ли его уволить?... (Տես այդ մասին «Հոբելանի տարեդարձը», էջ 45, 1893 թ.) Շահազդիզանն ինքն էլ փաստորեն չի իմացել, թե ո՞վ է ստորագրած եղել բողոքագիրը, բայց հաստատափես համոզված է եղել, որ դրա մեջ մատն են ունենուի և էմինոր, և Մսերը, և Քանանյանը»:

21. Շահազիլյանը բացի նրանից, որ հարգված և սիրված էր իր պաշտոնակիցներից, միշտ շրջապատված է եղել նաև լավ, մտերիմ ընկերներով և սրտակից բարեկամներով, որոնց մեջ առաջին տեղը բռնում էին Ս. Նաղարյանցը, ծեմարանի վերակացու Կարապետ Արգանդովյանը, Միքայել Միանսարյանը, Մանուկ Սադաթյանը, Հովհաննես Տեր-Հակոբյանը, Մելքոն Փանյանը և մյուսները: Նրա տանը մենք հաճախ պատահել ենք Նաղարյանին այն ժամանակ, երբ վերջինս պատրաստություն էր տեսնում «Հապտամատարակելու», և նրա մահից առաջ Մանուկ Սադաթյանին և Շահազիլյանին միմյանց հետ կապող այն հոգեկան միությունն էր, ներքին աշխարհի այն համանանությունը, որ կար նրանց խառնվածքի մեջ. Սադաթյանն էլ բանաստեղծ էր, Լեմմոնտովի «Թեվի» հրաշալի թարգմանությունը ցուց է տալիս, որ եթե բնությունը ավելի երկար կյանք պարգևած լիներ նրան, մեր աշխարհաբար գրականությունը մի զորեղ բանաստեղծով ավելի կունենար: Գրքախտարար, թորախտը զեռ մանուկ հասակից բռն դրած լինելով նրա մեջ և տարիների հետ հետզհետեւ աճելով ու զարգանալով, մահվան դուռն է հասցընում նրան: 1865 թվին նա, բժիշկների խորհրդով, ստիպված է լինում թողնել Մոսկվան և փոխադրվել Երևան, որտեղ և վախճանվում է 1866 թվի փետրվարին: Շահազիլյանը պատմում էր, որ «Թեվի» թարգմանությունը և «Հեռնի վշտի» գրությունը կատարվել են միաժամանակ. մի սենյակում Սադաթյանը թարգմանում էր «Թեվի», մյուսում Շահազիլյանը գրում էր իր «Հեռնի վիշտը», որ, ինչպես ասում են, նալբանդյանը բանտում կարդալով բացականչել է, թե՝ «Հեռնի վիշտը» իմ վիշտն է»:

22. Շահազիլյանի հոբելյանը կատարվել է երեք անգամ. առաջին անգամ  
նրա 25-ամյակի (1887 թ.), երկրորդ անգամ 35-ամյակի (1897 թ.) առթիվ՝  
նրա աշակերտների ձեռքով, և երրորդ անգամ 30-ամյակի՝ առթիվ 1892 թվի  
ապրիլի 9-ին Մուկվայի հայ հասարակության նախաձեռնությամբ՝ Ճեմարանի  
աշակերտությունն ընդհանրապես սիրել և հարգել է նրան, իրեն մայրենի լեզուն  
իրենց սիրել տվող ուսացչի և ազնիվ ու շիտակ մարդու ինքը Շահազիլյանն  
էլ փոխադարձարար սիրել է իր աշակերտներին։ Շահազիլյանի 30-ամյակի հո-  
բելյանը կատարվում է վայելով հանդիսավորությամբ, որի հետևանքը լինում  
է «Հոբելյանի տարեդարձ» խորագիրը կրող շքեղ հրատարակությունը բանաս-  
տեղծի ութ նոր ոտանավորով (1893 թ.) և «Արովյան-Նազարյան Գոնդ»-ի  
կողմակերպումն այն գումարով, որ Մուկվայի հայ հասարակությունը իր մեջ  
հավաքելով, դրել էր Շահազիլյանի տրամադրության տակ՝ նրա հոբելյանի առ-  
թիվ։ Ֆոնդի սկզբնական գումարը եղել է հինգ հազար 705 ռուբլի, որ հետո  
ունել դարձել է 10 հազար 138 ռուբլի, որի առկոսները հոբելյանի միջոցով բա-

ժանվել է կարիքավոր գրականագետներին։ Շահազիզյանի Հոբելանին Մոսկվայի  
համալսարանի պրոֆեսոր Ներսես Ներսիսյանը ընդարձակ ճառ է ասում, իսկ  
ԱԼ. Մատուցյանը կարգում է Հոբելարին նվիրած իր հետեւյալ բանաօտեղծու-  
թյունը

Դառն է մեր կյանքը, ախուր մեր օրեր,  
Չկա' մեզ հանգիստ, չկա' խնդություն.  
Միայն տառապանք և անվերջ վշտեր,  
Մեր հեգ սրտերից բամում են արյուն...  
Նայում ենք վերև—ամպամած երկինք,  
Նայում ենք ներքեւ—շիրիմ ոտքի տակ,  
Նայում ենք մեր շուրջ—խոռվահույզ մրրիկ,  
Իսկ մեր ձեռքերին, շղթա ու կապանք.


Եվ որպես խավար, մռայլված գիշեր,  
Անզոր ողբում են մեր սիրտն ու հոգին.  
Եվ բանի՝ ըղձեր, բանի խորհուրդներ  
Ճնշված նիրհում են մեր կրծքի տակին...

Դառն է մեր կյանքը, ախուր մեր օրեր,  
Մեզ կաշկանդել է թմրության շղթան.  
Օ՛, երգի՛չ, երգի՛ր մեզ հզոր երգեր,  
Բոցավա՛ռ երգեր, ոգեսրության.  
Երգի՛ր մեզ անահ, կորովի ձայնով  
Փառք և հաղթանակ փայլուն գործերի.  
Երգի՛ր, որ ազատ բնարիդ լարերով  
Ցնցիս թելերը թմրած սրտերի...


Երգիր մեզ այն հին երգը դարավոր,  
Որ մի ժամանակ թնդալով ուժգին  
Կովի փոթորկում՝ վսեմ փառավո՛ր  
Դափնիք էր ձոնում մեր բազ պապերին...

Երգի՛ր... թող քո երգը անկեղծ, ոգելից,  
Որպես չերմ աղոթք հայրենասերի,  
Տրվե մռայլը վհատ սրտերից,  
Բանա մեզ աղբյուր ոսկի՛ հույսերի  
Թող քո ոգեշոնչ, կարող երգերով,  
Ծովի պես հուզվի հայրենի աշխարհ.  
Թո՞ղ նորա մեր ժանը ուղին հարթելով,  
Պատրաստեն մեզ մի նոր կյանքի համար..

Դառն է մեր կյանքը, ախուր մեր օրեր,  
Մեզ կաշկանդել է թմրության շղթան.  
Օ՛, երգի՛չ, երգի՛ր մեզ հզոր երգեր,  
Բոցավա՛ռ երգեր ոգեսրության...



Այս տաճ լուսանկարը Աշտարակի հին գյուղամասում, որտեղ ծնվել է  
Ս. Շահազիզը



23. Շահապիզյանը մանուկ հասակում դուրս եկած լինելով Աշտարակից, իր ամբողջ կյանքը մնացել, անց է կացրել Մոսկվայում և միայն մի անգամ 1873 թվին նա այցելում է իր ծննդավայրը, և այդ էլ պառաված մորը տեսնելու համար։ Այդ հանգամանքը չպետք է մեկնել այն մտքով, որ նա չի սիրել իր ծընթափայրը և բնիկ երկիրը, այլ զուտ ընտանեկան հանգամանքներով։ Նա չերմ սիրով սիրել է Աշտարակը և իր հայրենիքը և միշտ էլ հեռու հյուսիսից ուրախակից է եղել նրանց ուրախությանը և վշտակից՝ նրանց վշտերին։ Նա սիրել է իր ծննդավայրը և նրան նվիրել իր «Աշտարակ» ուսանավորը, իսկ մորը նվիրել է իր «Երազ», «Մրտի կակիծը» և «Կերչին Հրաժեշտը» բանաստեղծությունները։ Թե ինչպես է եղել նրա մուտքն Աշտարակ, նրա այդ առաջին և վերջին այցելության ժամանակ, կարելի է տեսնել իր բարեկամ Մելքոն Փանչյանին 1873 թվի հունիսի 17-ին երևանից գրած հետեւյալ սրտաշարժ նամակից։

«Թե ինչպես եղավ իմ մուտքը մեր մայրենի աշխարհը, —գրում է նա, —մը նում է պատմել ինձ երես առ երես, երբ կհաջողվի հասնել այդտեղ։ միայն այսքան ունիմ ասել թեզ, որ իմ մուտքն Աշտարակ այնքան տիրական և սըրտաշարժ։ Էր, որ շունչս սպառած գարձել էի ես մի արտասուրի ծովլ։

Վո՞ն, մեծ է սերը հայրենյաց, թեև տնանկության և թշվառության մեջ։

Բոլոր ճանապարհը երևանից մինչև Աշտարակ լցված էին ձիավորներով, աշուահյակ կտրելով առաջ և աշխատելով մի աջողակաշարժ ձիախաղությամբ ցուցանել յուրյանց արվիստը։ Բոլոր Աշտարակի բռչաները և կտուրները լի էր կանանցով, երեխաններով և մարդերով, և դոքա բոլորերյան մի նազելի գլխաշարժությամբ, ասես, աշխատում էին մեղմացնել սրտիս կսկիծը, որ արդեն արտասվախառն հոսում էր աշքերից։

Բայց, վո՞՞ն, բարեկամ, իմ մեջքս ու հոդիս բնավին կոտրվեցավ, երբ տեսա իմ ալեզարդ պառակ ու հալուսմաշ եղած մայրս ի մեջ բազմամերսիս գյուղի կանանց, զրկված երեք վաղամեռ թագավորի պես որդիներից։ Զիս ուղղեցի մորս կողմը և կալա ձեռից։ բոլոր ճանդիսակիցը զարմացած մտառությանս, աղաղակեցին միաբերան, «Օրհնյալ զավակ և որդի»։

Տիրական է պատմությունս, տոլորյալ սիրոս, թառամյալ հոգիս, ողբալով ողբացի և արտասվելով արտասվեցի իմ երեք եղբարց գերեզմանքը և ահա նամակս գրելս տակավին գնում են այդ արտասուրն ողորմելի աշքերից... Այսպես մեծ է կորուսը և անդառնալի։ Սիրեցին ինձ իմ գյուղացիքս և մասնակից եղան իմ նվիրական արտասվաց։

24. Շահապիզյանը միակն է մեր նոր հեղինակների մեջ, որ ունեցել է իր սևիական կարողությունը, ապրել է իր ցանկացածի պես և չի կարուել ոչ ոքի օգնության, այլ, ընդհակառակը, ինքն է օգնել ուրիշներին։ Ամուսնացած լինելով՝ նա ունեցածը կտակել է ազգին՝ Գևորգյան ճեմարանին և մեր նախկին թեմական գպրոցներին՝ յուրաքանչյուրին 20 հազարական ոռորի։

Շահապիզյանի մահից հնոտ նրա թղթերի մեջ գտնվել է նրա ինքնաձեռագիր գրվածքը «Կտակիս շարժափիթը» խորագրով, որ անտեղի չենք համարում այս մեջ բերել։ — Իմ առաջին ազգականն իմ ազգն է։ Որովհետև ազգը, ինչ-

պես հավաքական միություն ավելի երկար կյանք ունի, բան թե առանձին անհատը, այս պատճառով ևս էլ իմ գուցիս մեծ մասը կտակել եմ իմ ազգիս Եթե մի ինտելիգենց կամ առհասարակ մի կրթված մարդ յուր հարստությունը կտակում է միայն յուր ազգականներին և մոռանում է հասարակությանը, այդ ասել է, որ նրա կրթությունը դեռ իոր արժատ չի արձակել նրա մեջ, այդպիս է վարվում և ամեն մի անկիրթ կամ եսական կյանքով ապրող մարդ, թեև երբեմն այդ անկիրթների մեջ էլ տեսնում ենք այնպիսի անհատներ, որոնք իրենց բնական բարեսիրությամբ մեծամեծ գումարներ են թողել ազգի զարգացման համար:

Եթե իմ ազգակից ժառանգները անբավական մնան ինձանից, որ թիշ եմ կտակել նրանց կամ թե ոչինչ չեմ կտակել, փույթ չեմ, ես ինքս բավական եմ ինձանից, որ այս տեսակ կտակ եմ արել:

Ինձ հարակավոր չէ ոչ մի նյութական արձան կամ պսակ, ես ինչպես իմ կենդանությամբ փախել եմ այդ ժամանակավոր ցուցերից, այնպես էլ փախշում եմ դրանից և մահից հետո, միակ արօասոս, որ կարող էր ընծալի ինձ հասարակությունը, —այդ այն է, որ բարի մարդիկ հետևեն իմ օրինակին և զոհաբեր լինեն իրանց դժբախտ ազգի վիճակը թեթևացնելու:

Ես, ինչպես իմ կենդանության ժամանակ, այնպիս էլ իմ մահից հետո ավանդում եմ իմ բազմաթիվ աշակերտներին այն համերաշխության պատվիրը, որով մենք շաղկապված ենք եղել ձեմարանի հարկի տակ. աղաշում եմ անմոռաց, հիշել մարդասիրության սկզբունքը և աշակցել հասարակաց պահանջներին:

25. Շահապիջանն առողջակազմ մարդ էր և երկարատև ու ժանր հիվանդություններ իր կյանքում չըր քաշել Նա կանոնավոր կյանք է վարել, խուսափելով բուրոք չափազանցություններից: Ամառները միշտ ապրել է կամ Մոսկվայի շրջակա ամառանոցներում, կամ Բալթիկ ծովի ափին Գուրեխնում, կամ Կիսլովոդսկում և կամ Ղրիմի Յալտայում, Ալուպկայում և Գուրզուֆում: Նրան անհանգիստ է արել միայն խրոնիկական փորկապությունը, որի գեմ նա իր ամբողջ կյանքում մաքառել է և միջոցներ գործ գրել ել զարմանալին այն է, որ նա այդպիսի եռանգով մաքառել է այդ հիվանդության դեմ, որ նրա կյանքին վտանգ չի սպառնացել, բայց ընհակառակը, չի նկատել, կամ, լավ է ասել, մի առանձին ուշադրություն չի դարձել իր մեջ հետզհետեւ զարդարող սրտի հիվանդության վրա— Angina pectoralis, որը և վերջ ի վերջո նրան գերիզման տարավ:

26. Իր կյանքի վերջին տարիներին (1907) նա շատ ձախորդություններ է տեսել, շատ անախորժ պատահարների է հանդիպել և հուզումնալից օրեր անցկացրել, Ամենամեծ հուզմունքը պատճառել է նրա մտերիմ ընկեր Հովհաննես Տեր-Հակոբյանը, որը Շահապիջանից ստացած լինելով «բարեկամական մուրհակներ», իր կարիքը լրացնելուց հետո, այդ մուրհակները չի վերադրել արդուզ, այլ ներկայացրել է դատարանին և պահանջել նրանից իր իրք թե նրան տված պարտը, մի վարմունք, որ մինչև սրտի խորքը վիրավորել է բանատությունը, վշտացրել, հուզել: Այսպիսի հուզումնալից կացության մեջ նա վե-

րադարձել է Մոսկվա և դեկտեմբերի 24-ին, երեկոյան ժամը 9—10-ի մեջ հանկարծամահ եղել իր բնակարանում՝ 66 տարեկան հասակում: Դեկտեմբերի 29-ին, Հայտալսարանի հերձարանին կից «դատական-բժշկական ինստիտուտում» կատարվել է դիակի հերձում: Այդ մասին կազմված արձանագրությունից պարզվել է, որ Շահազդիզանի ուղեղի բաշը եղել է 1350 դրամ, սիրտը մեծացած է եղել. նրա երկարությունը եղել է 15, լայնությունը 14 սանտիմետր, իսկ բաշը 660 դրամ: Դիակի արտաքին և ներքին հստագոտությունը երևան է հանել, որ մահը առաջ է եկել ոչ թունագորելուց կամ մի այլ բռնի պատճառից, այլ բնական հանապարհով: Նրա սիրտը չափից ավելի մեծացած է եղել, պատերը հաստացած, արյունատար անոնթները կրակալած և պնդացած և մայր-զարկերակի ներքին մակերեսությը խոցակալած: Այս հիվանդագին փոփոխությունները, բժշկի կարծիքով, բավական են եղել առաջ բերելու նրա անակնկալ մահը:

27. Դեկտեմբերի 30-ին կատարվել է փառավոր հանդիսավորությամբ նրա հուղարկավորությունը և թաղումը, որի ամբողջ ծախսը հոգացել է Մոսկվայի հայ հասարակությունը, հավաքելով 1636 ոռութիւնի մի գումարությունը և հիշատակ Շահազդիզանի փոխադրվել է Թիֆլիսի սովորական նպաստամատուց հանձնաժողովին 400 ոռութիւնի, պատրաստվել է նրա մահվան դիմակը և մի շրեղ արծաթյա պսակ Մոսկվայի հասարակության կողմից, որ դրվել է նորա դագաղի վերա պատշաճ մակագրությամբ և հետո ուղարկվել է էջմիածնի թանգարանը Մահվան դիմակի-պատրաստով եղել է արվեստագետ և հմուտ նկարիչ Տարագրոս Վարդանյանը, որ հետագայում նվիրել է այն երեանի թանգարանի գրական բաժնին:

28. Շահազդիզանը չի սիրել շքեղ, բազմամարդ հանդեսներ և խուափել է ամեն մի հավարություն, որ հանդեսի բնույթ է եղել, ուստի և կտակած է եղել իր բարեկամներին՝ իրեն համեստ հուղարկավորությամբ թաղել—ոչ պսակ, ոչ դամբանական, այլ լուս ու մունջ Սակայն հուղարկավորության և թաղման հանձնաժողովը չի կամեցել կատարած լինել նրա կամքը և, ինչպես ասել ենք, կազմել է այնպիսի մի շքեղ հուղարկավորություն, որին նա արժանի է համարել նրան: Դրված են եղել նրա վրա շքեղ պսակներ, արտասանվել են թե եկեղեցում և թե գերեզմանի վրա բազմաթիվ դամբանականներ, որոնց մեջ աշքի է ընկել Գրիգոր Խալաթյանի դամբանականը եկեղեցում և վեսելովսկու աշբերը լի արտասուրվ արտասանած մի քանի թաք խոսքերը գերեզմանի վրա: Բայց դըրանցից էլ ավելի սրտառուշ է եղել, երբ Ա. Շատուրյանը կարդացել է Շահազդիզանի «Զոհեր» բանաստեղծությունը: Շահազդիզանը թաղվել է իր մտերիմ բարեկամ և ուսուցիչ Ստեփանոս Նազարյանցի կողքին: Հետագայում, ժառանգների հոգատարությամբ, նրա գերեզմանի վրա դրվել է հայկական ոճով շինված մարմարինե նուրբ մահարձան, որ ներկայումս էլ զարդարում է նրա հողաթումը Մոսկվայի Վագանկայումք:

## Ս. ՇԱՀԱԶԻՋՅԱՆԻ ԹՐՂԱԾ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1. Երեք գրաբար ոտանակոր, գրված 1857 և 58 թվերին և տպագրված Մսեր Մագիստրոսի «Ճռաբաղլի» 1859 թվի թ. և ժմ տետրակներում.

2. «Ազատության ժամեր» Սմբատ Շահազիլյանց, աշակերտի վեցերորդ դասարանի Լազարյան Ճեմարանի արևելյան լեզվաց, հատոր երկրորդ. Մոսկվա, ի տպարանի Լազարյան Ճեմարանի, 1860 թ.:

3. «Էլեմնի վիշտը», ժամանակակից վեպը չորս գլուխ բաժանված և զանազան բանաստեղծություններ; Մոսկվա, ի տպարանի Լազարյան Ճեմարանի, 1865 թ.

4. Երեք ոտանակոր, երկուսը տպագրված «Հյուսիսափայլի» 1862 թվի ապրիլի և հուլիսի տետրակներում և մեկը՝ 1864 թվի հունիսի տետրակում:

5. Ութ ոտանակոր, տպագրված 1893 թվին «Հորելյանի տարեդարձ» զբուգում.

6. «Հրապարակախոս ձայն», Մոսկվա, Կողոքատեսի տպարան, 1881 թ.:

7. «Մի պատասխան», գրված 1884 թվի օգոստոսի 10-ին և տպագրված «Մշակի» նույն թվի 161 համարի բանասիրականում, սեպտեմբերի 10-ին:

8. «Մի բանի խորհրդածություններ», տպագրված առանց ստորագրության «Մշակի» 1882 թվի 156 համարի բանասիրականում, օգոստոսի 26-ին:

9. «Ամառային նամակներ», տպագրված Մոսկվայում Քրիստինե Բարխուդարյանի տպարանում, 1897 թ.:

10. «Հիշողություններ Վարդանանց տոնի առթիվ», տպագրված Մոսկվայում, ք. Բարխուդարյանի տպարանում 1901 թ.:

11. «Մի բանի խոսք իմ ընթերցողներին», տպագրված Մոսկվայում, ք. Բարխուդարյանի տպարանում, 1903 թ.:

Շահազիլյանն առաջին անգամ սկսել է գրել ու տպագրել 1857-58 թվերին, երբ հինգերորդ և վեցերորդ դասարանների աշակերտ է եղել: Թի ո՞րն է նրա առաջին գրվածը, մենք չենք կարող ասել, որովհետև այդ մասին ոչ մի գրավոր տեղեկություն կամ հիշողություն չի պահպանվել Համենայն դեպս պետք է կարծել, որ նրա առաջին գրվածը եղել է գրաբար և մտել այն գըրվածքների շարքը, որոնք կազմել են «Ազատության ժամերի» առաջին հատորը: Որ այդ կորած հատորիկը ամբողջապես բաղկացած է եղել գրաբար ոտանավորներից, այդ մենք գիտենք հեղինակի այն հայտարարությունից, որ նա տպագրել է «Ազատության ժամերի» II հատորի շապկի կողըին—«Անաջին հատորը» (որ գրոց լեզվով է), եթե հաջողի, մի բանի ժամանակից դուրս կփառ:

29. Շահազիլյանի բոլոր առանձին գրքերով և գրքուկներով լուսած երկասիրությունները, որոնք տպագրված են՝ մաքուր, թանկարժեք թղթի վրա, հրատարակված են իր ծախսով, բացի «Հրապարակախոս ձայնից», որ հրատարակված է «Բարեվա արդու վաճառական» թ. Գ. Սարգսյանցի ծախսով: Նա շատ սիրում էր, որ իր գրքերը խնամքով տպագրված լինեն և շատ վշտանում էր, երբ տպագրվելուց հետո նկատում էր, որ նրանց մեջ այստեղ ու այնտեղ կետադրությունը խառնված է և սպրդած է այս ու այն

Վրիպակը: Մաքուր տպագրության համար նա չէր խնայում ոչ դրամ և ոչ աշխատանք, ուստի և հաճախ ինքն էր հանձն առնում կատարել սրբագրության սրտամաշ աշխատանքը: Նա ուշ-ուշ էր գրում և երկար ընդհատումներով, բայց երբ սկսում էր մի բան գրել, կորցնում էր հանդիսան ու սրտի անդորրությունը, աշխատելով շարունակ և անընդհատ, որ ինչպես ինքն էր ասում, չսառի և մտրի թելը չկորցնի: Այդ ժամանակներն այնքան հուզված էր լինում, որ հիվանդի տպագրություն էր գործում անծանօթների վրա, անդադար խոսում էր իր գրվածքի մասին, հատվածներ էր բերում նրանից և զրադեցնում էր խոսակցին իր գրվածքի նյութով և բովանդակությամբ: Նրա այցպիսի հոգատարությունը՝ մանավանդ սաստկանում էր, երբ գրվածքը վերջացնելուց հետո, ուղարկվում էր գրաբննչության, օրեցօր սպասում էր գրվածքի շուտ հետ ստացվելուն և, ուշանալու դեպքում, նամակներ էր գրում, հեռագրեր ուղարկում և շատ փախնում էր, որ գրաբննիչը կարող էր այս կամ այն հատվածը չնշած լինել և իր մտքերը խանգարած: Եվ երբ կարողանում էր անփոփոխ հատանալ ձեռագիրը և տպագրության հանձնել, պարծենալով ասում էր, «Ես գրել եմ այն, ինչ-որ կարելի էր և այն, ինչ-որ կարելի չէր»:

Տպագրության ժամանակ էլ նա չէր հանդստանում. արդեն գրաբննված ձեռագրի մեջ շարունակ փոփոխություններ էր մտցնում, հապավելով և ավելացնելով ոչ միայն առանձին խոսքեր ու տողեր, այլև ամբողջ հատվածներ ու պարբերություններ, որով և հաճախ հարուցանում էր գրաբննիչների դժգոհությունը իր գրերը նա սովորաբար վաճառքի չէր հանում, այլ մեծ մասամբ ընծա էր ուղարկում իր բազմաթիվ բարեկամներին ու ծանոթներին, հայկական դպրոցներին և հրմնարկներին:

Նա պատվերով երբեք բան գրած չէր ու չէր գրում. մինչև իսկ իր հարազատ ու շատ սիրելի մոր համար տապանագիր գրած չէր, երբ այդ մասին Աշտարակից նրան գրել և խնդրել էին: Մի խնդիր պետք է շատ զրադեցրած, ոգեգործ լիներ նրան, որ նա գործ վեր առներ: Մի անգամ միայն իր կյանքում նա մի տապանագիր էր գրել իր մտերիմ ընկերներից մեկի կնոջ խնդրանքով, խնդիրը, որ նա ոչ մի կերպով չէր կարողացել մերժել: Այդ մասին նա իր մի նամակում գրում է, «Եյսօր նամակ ստացա տիկին Տեր-Հակոբյանից, որ խընդրում է իրանց վաղամեռիկ Մկրտչի վրա մի տապանագիր գրեմ ոտանավորով: Ուղիղն ասեմ, գլուխս ոչինչ շի գալիս. ես իմ կյանքում մի ապսպրած բան չեմ գրած. հենց որ խնդրում են գրեմ, մեխի պես «բանդ» է լինում. չգիտեմ ինչ անեմ»: Մեջ ենք բերում այստեղ այդ «Տապանագիրը», որ նա ընծայել է մեզ Կիսլովոդսկում, արտագրելով բնագրից: —

Սիրասուն որդյակ, որ երազահույս  
Ցնորքի նման անցան քո օրեր. —  
Երկինքն ուղարկեց անգութ հրավեր  
Եվ ծաղկի կյանքիդ ծածկեց արշալույս:

Սիրո հիշատակ այս արձան տիտուր,  
Վշտահար սրտի ցողած արցումքով.  
Դու միշտ բարեսիրտ և խղճով մաքուր,—  
Ննջիր, ով ազնիվ, ննջիր անվրդով:

26 հունիսի 1901 թ. (Կիսլովոդսկ)

30. Աշխարհաբար գրելու ձգտումը նախապես արտահայտվում է Շահապեղանի աշակերտական անմեղ սրաբանությունների և կատակների մեջ. նու նվիրում է իր սիրած ընկերներին զավեշտական քառյակների Նկատելով իր դաստիարակ վերակացուների թույլ և ծիծաղաշարժ կողմերը, նրանց մասին երգիծական ոտանավորներ է գրում, իսկ բարձր դասարանում (լիկենոնում) գըրում է մի ամերող կոմեդիա «Կովարար Կիրակոս» խորագրով, —որ և աշակերտները ներկայացնում են դասարանում: Նա միշտ հիշում էր այդ վաղ ժամանակներում գրած մի ոտանավորը վերակացուներից մեկի մասին, որ սպորտություն էր արել հաճախ պարծենալով ասել աշակերտներին՝ «Мы и кометам и планетам напищем инструкцию, нужно только узнать их положения»:

Ասում են, որ կոմետներ  
Ճանապարհից են ծովել,  
Արեսն ու Յուպիտերը  
Պատերազմ են բաց արել:

Այսպես երկույթի հետ  
Կարծեմ որ քաջ ժանոթ ես.  
Չի՞ կարելի, աստղագետ,  
Նոցա մի նոր կարգ գրես:

Փիլիսոփա, իմաստուն,  
Պոշով աստղերի մեկնիլ, —  
Սորա են քո մականուն, —  
Bravo, Զախար Իսայիլ:

Իսկ «Կովարար Կիրակոսից» նրա մտքում մնացել էր միայն մի երգ, որ նա կոչում էր «Հյուսեին կլեկու երգը», և, որ քեֆը տեղը եղած ժամանակ հաճախ ասում էր իր ժամոթներին. —

Այս աշխարհում ամեն բան  
Ցուր կարգովը գնում է.  
Ողորմելի է մարդն այն,  
Որ յուր կյանքից գոհ չէ:

Մինը հարուստ, մյուսն իշխան,  
Երրորդը փինաչի,  
Մինը դալլար, մյուսն չորան, —  
Է՛՛հ, ես էլ կլեկի:

Հարրաշիդի պարկերը,  
Գիտեմ, ոսկով լի են,  
Բայց իմ քոնծոտ փութսերը  
Նոցանից պակաս չեն:

Այժմ շտապիր, երջանիկ,  
Դու Հյուսեին կլեկչի,  
Մնաք բարով, պատվելիք,  
Փլավը կառուի:

Շահազիզյանին ժամանակակից աշակերտներից մեկը Ճեմարանում՝ մեր Հայտնի մանկավարժ Սեղրակ Մանդինյանը, աշակերտական իր հիշողությունների մեջ, ի միջի այլոց, ասում է և այն, որ նրա ձեռքով են դրվել հայկական բնեմական արվեստի սկզբնավորության հիմնաբարերից մի քանիսը, մի նոր փաստ ու հանգամանք, որ մինչև օրս անհայտ է մնացել մեր թատրոնի պատմության մեջ:—«Հիշո՞ւմ եք հայկական բնեմական արվեստի սկզբնավորությունը, ասում է նա, —որի հիմնաբարերից ոմանք ձեր ձեռքով դրվեցան»:

Հայտնի է, որ Ծուսահյերի թատրոնի սկզբնավորությունը եղել է 1859 թվի հունվարի 27-ին, երբ Մոսկվայում մի մասնավոր տան մեջ ուսանողները 200 մարդու ներկայությամբ ներկայացնում են առաջին անգամ Ալադաթյանի «Վայ» իմ կորած 50 ոսկին» կենցաղական ողեվիլը, որի նկարագրությունը թողել է մեզ Մ. Նալբանդյանը: Արդ, հենց այդ թվին էլ կաղարյան Ճեմարանի մասնագիտական դասարանների կամ լիկեռնի առաջին կուրսի աշակերտ ուսանող Մ. Շահազիզյանը գրած ու ներկայացրած է եղել Ճեմարանում աշակերտների ներկայությամբ, իր «Կովարար Կիրակոսը»: Հետեւապես, ճշշտ է, որ Շահազիզյանն էլ Ծուսահյայ թատրոնի սկզբնավորության հիմնաբարերից մի քանիսի դնողն է հանդիսացել:

11

11



## ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇ

Մաքուր վլտականի հոսին ի վիմաց  
Յայն ի ծաղկազարդ դաշտ լայնատարած:  
Մառը շուրջ խիտ առ խիտ կան տերևազգեաց.  
Քաղցրածայն երգեն երամբ կաքաւաց:  
Ի ձերպըս ծակուց որչանան գազանք  
Յորսողին ձեռաց գոլով անվլտանգ:  
Սըփուեալը ի դաշտը ձիարձակ արանց  
Բղհետ մըտանեն բուլից վարազաց:  
Բնթանան ի գետս մանկունք ձըկնորսաց,  
Գառնան խրախամիտ առ ծնողս իւղեանց:  
Թարտիք երկնուղեցթ անդէն ի յուժգին  
Շարժին ի հողմոց, տերելը տատանին:  
Ի ծագել լուսոյ սոխակը անդադար  
Երգեն հանգչելով ի թուփ եւ ի ծառ:  
Միտք եւ ծիծեռունք անդէն անհամար  
Ճընուելով թըռչին ընդ օդս տարմաքար:

1857 թ.

## ՀԱՅ ՄԱՆՈՒԿ ՅՈՏԱՐՈՒԹԵԱՆ

Պ'Հ, ե՞րբ եկից ես 'ի դրախտ եգեմալ,  
'ի ծաղկածաւալ տունըդ Թորդոմալ  
Քզքարինսըդ քո ե՞րբ համրուրեցից,  
Մոք ողողյալ են արեամբ վկայից.

Ե՞րբ ճաշակեցից յանոյշ պտղոց բոց,  
 Որը հասեալ կայլին ՚ի վերայ ծառոց.  
 Ե՞րբ արդից արդիօք ՚ի բոց ազրերաց,  
 Որը խոխոչելով Հոսին ՚ի վիմաց:  
 Ա՛հ, նման ծաղկանց անկեալ թարշամիմ  
 Յայս Հիափսային երկրիս ոխերիմ.  
 Չի'ք ինձ ոք ծանօթ, չի'ք ոք ազգական,  
 Ընդ որում լիզուաւ խօսեցայց Հայկեան:  
 Հայաստան թշվուառ, դժբաղդդ Հայրենիք,  
 Հայեաց յո՞ք վայրս են ցրուեալ բոյդ որդիք:

1857

## ՈՂԶՈՒՅՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԵՏ

(Նվեր Կ. Սադունյանցին, ուստանողին Մոսկովական  
Կայսերական Համալսարանի)

Վերջին անգամ ես ճեմում եմ  
 Քո ծաղկազարդ ափերում,  
 Վերջին անգամ ես շրջում եմ  
 Քո բարետես վայրերում:

Հեռանում եմ ես բեզանից  
 Դեպի հեռու երկիրներ,  
 Թողուամ եմ բեզ արտասվալից,  
 Խոսք մի տալով ողբանվեր:

Որ ես երբեք չեմ մոռանալ  
 Քեզ, բո դաշտերն սիրելի,  
 Որ բո խնամք չեմ ուրանալ,  
 Խնամք ասեմ մայրենի:

Այլ հանապազ բեզ կառաքեմ  
 Որդիական նամակներ,  
 Եվ ստեպ ստեպ բեզ կնվիրեմ  
 Միիթարական իմ ժամեր:

Քանա՞խ, Քասա՞խ իմ սիրելի,  
Քասախ պայծառ պիրճապսակ,  
Վերջին անգամ առ ողբալի  
Խմում եմ չուղդ անուշակ:

Ո՞հ, Աստված իմ, ընչո՞ւ Համար  
Պատկերահան չեմ եղած,  
Որ այս վայրերս ծաղկադալար  
Նկարեի շքեղացած:

Ընչո՞ւ Համար նըկարչական  
Վրձինը չէ իմ ձեռին,  
Որ այս ջրերս Շվեյցարական  
Գծագրեի քաղցրագին:

Ենորհակա՛լ են սիրու և հոգիս  
Քեզնից, բնություն անվախճան,  
Որ շնորհեցիր Քասախ գետիս  
Այսպես շքեղ տեսարան:

Վերջին անգամ, ով գյուղ սիրուն,  
Ողջունում եմ բնդ սիրով,  
Եվ գոշում եմ ես բարձրածայն,  
«Տեղի՞ ծննդյանս, մնաս բարով»:

Ահա եկավ, ահա հասավ  
Հրաժարական ժամանակ,  
Ո՞հ, կանչում է ինձ շտապավ,  
Ների՛ր, ների՛ր, Աշտարակ:

1857 թ.

## ԻՄ ՎԻՃԱԿԸ

(Նվեր վեցերորդ դասատան աշակերտներին)

Զորս պատի մեջ փակված եմ ես  
Ամբողջ տարին, պարոններ,  
Գլուխս ծռած լոիկ և հեղ  
Անկած եմ այստեղ անտեր:

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,  
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ:

Քեզ ի՞նչ անեմ, ա՞հ իմ բաղդիկ,  
Ընչո՞ւ համար վճռեցիր  
Ինձ այսպիսի դառն վիճակիկ,  
Կյանք և օրեր տրտմալիր:

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,  
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ։

Ահա Զատիկ—բոլորերյանը  
Չեռն ձեռն բռնած, անխափան  
«Եկե՛ք, եղբա՛րք, եկե՛ք դնանք»:  
Ասեն միմյանց և գնան։

Ահա ծնունդ, Բարեկենդան,  
Ողջ ընկերներս զարդարած,  
Վազում են տուն, վարդանման  
Ուրախ, շքեղ, զվարթացած։

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,  
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ։

Միանդամայն ասել, աշխարհ  
Զայն է տալի խնդության,  
Եվ երգեռն ուրախարար  
Հնչում է խիստ բաղցրաձայն։

Միայն անրադդս լըսիկ մընջիկ,  
Անկյունում մի նստելով,  
Խիստ ցավում եմ ես անզրուցիկ,  
Փոշի ժանտախտ կուլ տալով։

Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,  
Աստված, ծագի՛ր ինձ նոր, պայծառ առավոտ։

1857

## Ե Ր Գ

Էանց ձմեռն՝ խամբիշ ծաղկանց,  
Փախեաւ ցուրտըն խստաշունչ.  
Եհաս գարուն՝ բընության թագ,

Յարեաւ և օդ բարեխառն.  
 Նորափետուր զարդարեցան  
 Մարդիկ, այգիք և պարտէզք.  
 Զմրխտագոյն վայրք զգեցան  
 Ըզկերձ հանդերձ, չընաղիկ:  
 Սոսիքն ուղեշք և սրբազնեաց  
 Արմենակայ դիւցազն  
 Ժպտին տեսլեամբ բաղցրահայեաց,  
 Մափս հարկանեն ընդ գարնան,  
 Երամբ Հաւուց ճշիւ գողտրիկ՝  
 Հնչմամբ անոյշ, բարձրածայն,  
 Երգեն, խօսին յոյժ գեղեցիկ,  
 Իբրև քնարն Մուսայից,  
 Զեփիւռն անտի մեղմիկ դուռվ  
 Հնչէ, փչէ անուշակ,  
 Յանդ զտերես տատանելով  
 Յոգունց տընկոց սրբազան:  
 Հմայք Հայոց պերճապսակ  
 Բնդ սաղարթուց սօսաւիւն,  
 Բազմեալ գ'ծառոց դասակ դասակ  
 Ճիշտ հըմայեն զապագայս\*:

1858

## ՀՐԵՇՏԱԿ-ՊԱՇՊԱՆԻՉ

(Ոռմանս)

Դուք տեսե՞լ եք գեղեցկավառ  
 Ա\*\* ) իս իմ ման դալիս,  
 Դուք տեսե՞լ եք նորա պայծառ  
 Գլուխի զարդը փայլելիս:

\*) Այս է, զի հեթանոսական ժամանակս ՚ի Հայս մարդիկ ցանկային դիտել զապառնի վիճակ իւրիանց, ոյր աղագու երթային և հարցանէին ՚ի բրմաց կամ հմայից, որք ՚ի մեհենեաց շաստուածոց տային նոցա պատասխանին: Սոյնպիս էր և ՚ի Յոյնս. ըստ խոխոչմանց աղբերց և ըստ սօսաւիւն սրբազան եղենեաց, իսկ ՚ի Հռովմայեցիս ըստ հաւուց թուշմանց:

1858.

Ինչպես չընա՞ղ և սիրո՞ւն է,  
Երբ որ, բացված վարդի պես,  
Նա շարժվելով, հեզ ժպտում է,  
Անուշ, բաղցրիկ, պարզերես:

Ինչ տեսարա՞ն և ինչ պատկե՞ր  
Նկարվում է երեսին,  
Երբ նա, ցըցած երկինք աշեր,  
Օրջնվում է յուր արարչին:

Կարծես անմեղ հրեշտակ արդար,  
Իջած գրախափց երկնային,  
Պետք է լինի մեղ մախթար  
Եվ խնդություն մեր կյանքին:

Դուք տեսե՞լ եք գեղեցիկավառ  
Միրեկանիս ման գալիս,  
Դուք տեսե՞լ եք նորա պայծառ  
Գըլսի զարդը փայլելիս:

1858

## ԱՄԵՆԱԽՈՆԱՐԴ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

(Նվեր Հ. Շահազիզյանցին):

Ես քեզ երբեք չեմ մոռանաւ,  
Ո՞վ իմ եղբայր թանկագին,  
Քեզ փա՞ռը, պատի՞վ պայծառափառ,  
Քե՞զ, մեկենաս իմ անգին:

Միտք քո բացված մեծ է եղել,  
Մի՞ծ ես եղել, Հովակիմ,  
Բայց չիմացա ես գնահատել,  
Ների՞ր, ների՞ր, եղբայր իմ:

Մանուկ էի, աըգեստ էի,  
Անվարժ, անկիրթ գլուովին,  
Ի՞նչպես թշվառս կարող էի  
Ճանաշել քեզ, ո՞վ անգին:

Այժմ զգացի քո անմռուաց,  
Քո երախտիքն անսահման.  
Այժմ ողբագին, գլուխ խոնարհաժէ  
Կզզամ ևս հավիտյան:

Այժմ իմացա, որ առանց քեզ  
Պիտի հովիվ լինեի,  
Հովիվ ասեմ, որ սկատես  
Թափառում է իոդալի:

Բայց դու եղբա՛յր, ձայնիս լսի՛ր.  
Ա՛հ սկսում իմ ողբալից  
Հյուսել քեզ թագ, թագ վարդալիք  
Նվաստ քնարիս տողերից:

Թո՛ղ գեղգեղե բաղցրահնչուն  
Քնարիկս իմ լսելի  
Քո սրբազան անմահ անուն,  
Անոն անուշ, մաքրալի:

Ահա, հոգյակ, իմ նվաստ տողեր,  
Վեր կա՛ց, կանգնի՛ր գագաղից  
Ա՛ռ եղբայրիցդ թշվառ վանտեր,  
Նայի՛ր երեսս ողբալից:

1858

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

(Ռումանս)

Ըստ եղանակին

Гляжу как безумный на черную шаль,  
И хладную душу терзает печаль.

(Пушкин).

Այսօր գնացի տուն իմ սիրեկանի,  
Երկու զարդ և մի նուսն ես իմ հետ տարա,  
Սենյակն երեցավ. մըտա շուտ այնտեղ,  
Ուր հանգիստ քընած էր հոգյակս երկնագեղ:  
Շըրթունքները էին վարդագուն, կարմիր,

Մարմինը թըլում էր համեստ, գեղալիք.  
Անմեղության նըշան փայլում էր վառված,  
Չընաղ երեսին նորա գեղեցկացած:  
Զարթեցընե՞ւ, թե ոչ, ևս մտածեցի,  
Բայց սիրազս ինձ ասաց. թե չէ՛, թող նընչն-  
Նընչի՞ր դու, ասեցի, նինջ քաղցր է, անգին-  
Սուսայք և դիցուհիք բեղ պարգևեցին.  
Դըրի վարդը և նուռն անդանի վրա,  
Եկ, խոր հառաշելով, լուռ մոռ դուքս ելա-

1858 թ.

## ԻՂՋ ՍՐՏԻՍ

Տո՛ւք ինձ ճերմակ ճախրասըլաց,  
Օդապարիկ երիվար.  
Տո՛ւք, զի սլացաւ թուեայց ՚ի բաց՝  
՚ի շընաղիկն իմ աշխարհ:

Այո՛, սլացայց յիմ Հայաստան,  
Յերկիր յաւերժ ծաղկազարդ,  
Ուր խոխոչան անմահութեան  
Գետը եղեմայ ալեղարդ:

Ուր բարձրանայ խըրոխտ ՚ի վեր  
Արարատն իմ օրօրան.  
Ուր հոտ բուրե խնկանըւեր.  
Հոտ զուարթար Հայութեան:

Ուր և երբեմն պայծառացնաւ,  
Քաջ բանաստեղծը թորգոմեան,  
Քնարօր իւրեանց ոսկելարեաւ  
Գեղգեղին սրբաբան:

Ո՞հ, ածե՞ր ինձ զիմն սիգաթաւ-  
Սիրոտ իմ մաշեաւ նուաղի.  
Քանի՛ ա՞մբ հն՝ զի շնմ տեսեաւ  
Քզհայրենիս ցանկալի:

Հայաստան իմ, սո՞ւրբ Հայաստան,  
Հո՞գոյս պայծառ լիշտակի,  
Եր թողեր զիս 'ի բացական  
Վայրս դառնաշունչ, դժնդակ:

Մաշիմ մաշիմ ես աստանօր,  
Բնդ աստեղօր Հիւիսիի.  
Հալիմ. աւաղ ես չըպտր...  
Ո՞հ, Հայրենիք բաղցրալի...

1859

## Ե Ր Գ

(Նվեր Գ. Տեր Մարտիրոսյանցին)

ըստ եղանակին

Кубок янтарный  
Полон даюо,  
Пеною "парной"  
Блещет вино!  
(Пушкин)

Խնդրեմ վեր կացե՛ք,  
Եղբայրք անդին,  
Դաս դաս կանգնեցեք  
Ուրախագին:

Ահա բաժակներ  
Ոսկեզօծած  
Առեր, ընկերներ,  
Իմ զվարթացած:

Ահա խնդության  
Եվ գինիներ,  
Գույն գույն, զանազան  
Շամպայն, Մադեր:

Ահա Կախեթին  
Կովկասյան մեր,  
Ահա թանկագին  
Խերես, Սուտերն:

Առեք բաժակներ  
Ուրախալի,  
Լցնենք ի նըլեր  
Մեր հայ ազգի:

Կեցցե՞ն, երգեցե՞ք,  
Հայ աղջիկներն,  
Կեցցե՞ն, հնչեցե՞ք,  
Հայ զավակներն:

Լցըե՞ք, կոնծեցեք  
Դարձյալ, կրկին,  
Է՛լ մի՛ խնայեք  
Պաշտվող կողին:

Խմեցե՞ք խնդագին  
Սիրո համար,  
Սե՛րն է ձեր հոգին,  
Զեր բաղդն պայծառ.

Երգած է վաղուց.  
«Կյանք մեր կարճ է;  
Այսօր կանք—էգուց  
Կըմեռնենք գուցեաւ:

Այսօր կենդանի—  
Եղուց գետնում,  
Անելանելի  
Պինդ գաղաղում:

Ուրեմն գավաթներ  
Շխկացնելով,  
Առե՞ք, եղբայրներ,  
Անուշ պաշով:

1859 β.

# ՆՎԵՐ ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

(Բոռմանս)

Հայ աղջիկներ նորածաղիկ,  
Հայոց բընքուշ սիրուններ,  
Առեք, խնդրեմ, իմ նվաստ փունջիկ,  
Առե՛ք, հոգուս հատորներ:

Զեզ համար ես միայն անքուն,  
Զքնաղ կույսեր, նըստել եմ  
Եվ սոմանսներ փափկա՞նչուն,  
Զեզնից վառված, երգել եմ:

Բնդունեց՛ք, որեմն բնարիս  
Զնշին վաստակ ի սրտե,  
Որ Զեր ձայնիկ միայն լսելիս  
Հոգեորված հընշում է:

1860 թ.

I Հունվարի.

# ԱՌԱՋԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(Հետևողության իտ. պատուի Պետրարկայի)

Օրհնյա՛լ լինի այն սուրբ օրը,  
Երբ նորա մոտ նստած էի,  
Եվ իմ սրտիս խորհուրդները  
Մի մի նորան հայտնում էի:

Ես օրհնում եմ այն սուր նետը,  
Որ նա ցըցեց սրտիս խորքում,—  
Եվ այն քաղցո սիրո թույնը,  
Որ նա թափեց հոգուս միջում:

Օրհնյա՛լ լինի այն ստեղծված,  
Այն սիրուն կույսն, հրեշտակ պայծառ,  
Որի առաջ, ծունդը դրած,  
Ոզրում էի այնքան երկար:

1861 թ. Հունվարի 5.

## ՕՐԻՈՐԴԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Հանգի՛ստ իմ անուշ,  
Անցար, գնացիր,  
Միայն վերը անբռւժ,  
Սրտումս թողեցի՛ր:

Սոխակ գեղեցիկ  
Կանաչ պարտեղում  
Երգելով քաղցրիկ,  
Ինձ չէ գրավում:

Թեզանով միայն  
Երջանիկ էի,  
Տիկին ինքնիշխան  
Ինձ կարծում էի:

Յերեկը մեհակ,  
Փակված սենյակում,  
Ողբում եմ անհագ,—  
Ու ոք չէ լսում:

Գիշեր է գալիս—  
Մաշիճ եմ մտնում.  
Տրտո՞ւմ է հոգիս,  
Թունս չէ տանում:

Ո՞չ սիրուս այրված,  
Ողջ օնդ է կանչում,  
Ողջ օռ անմոռաց  
Անունդ է հիշում:

Մազեր թուփս երկա՛յն,  
Աչեր գրավիչ  
Ի՞նչ հասակ, ի՞նչ ձայն,  
Ի՞նչ հոգի կտրիճ:

Անգո՞ւթ, ինձ խաբեց,—  
Ուրիշին սիրեց.  
Ա՞խ, նա դեռ ինձ վաղ  
Պատրաստեց դադա՛դ:

# Գ Ի Շ Ե Ր

Միլու՛մ պատկերու Պարզկա գիշեր:—  
Եվ օդեղեն օվկիանոսմ  
Փայլում էին անթիվ աստղեր,  
Եվ ուրա՛խ էր սիրտըս զարկում:

Ամբրոսական ծաղիկներ վառ  
Անուշություն էին բուրում,  
Եվ երկնքի ցող կենարար  
Բնությունն էր զովացնում:

Եվ ես անխռով երգում էի,—  
Եվ իմ երգըս խիստ մաքուր էր.  
Ազատություն էի երգում,  
Հայրենիքի պարծա'նը ու սե'ր:

1861 թ. փետ. 15.

## ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Հառա՛ջ հայություն, հառա՛ջ ազգություն,  
Հուսավոր դարուս գաղափարներով.  
Ասի՛ր, ազգ անգին, խավար տգիտություն,  
Մի՛ տար քեզ խարել խարդախ խոսքերով:  
Կորի՛ր դու խավար և տգիտություն,  
Կորի՛ք գարշելի ձեր ծնունդներով.—  
Մինչ ե՛ր մեր վրա այս վայրենություն  
Պիտի բռնանա գոռող ճանկերով:  
Եղբայր է նա մեզ, որ ճշմարտության  
Զինվորված այսօր զորավոր սրով  
Կամի քայրայել կապանը գերության,  
Խավարի բանտը փլատակելով:  
Բավական է մեզ, որքան բթացած,  
Սրհամարհնեցինք մարդկության բարիք:—  
Այս՛, բավական, որքան կուրացած,  
Կտրեցին կյանքից մեզ անկյանք մարդիկ:  
Այսուհետեւ սեր դեպի գիտություն,  
Որ առհավատչա է բարօրության.

Այսուհետև կամք և Աշխատություն,  
Որ մի ծնունդ է առաքինության,  
Հանդիսացեք լուս և ճշմարտություն,  
Թո՛ղ փախչի գիշեր մռայլված սրտերի,  
Հաղթի՛ր, խորտակի՛ր, բանականություն,  
Մոլար կարծիներ, որդիք խավարի՛  
Ազգ բազմաշարչար, դու ա՛զգ թորգոմյան,  
Թո՛ղ անշարժություն այդ քո մահակիր.  
Դե՛պի ասպարեզ առաքինության.—  
Մոտենում է բնեղ ավետյաց երկիր:  
Աստվածեղեն աշ մարդկության Փրկչին  
Լինելու է բնեղ առաջնորդ հզոր.  
Դեպի կրթություն հանուն սուրբ Խաչին.—  
Ա՛յդ է պահանջում դարձմ լուսավոր  
Մա՛հ Զոհիներին, նախանձով վառված,  
Աքսոր ու կորուստ Վեստ-Մարդիսներին.  
Դոցա համար լուս տղիտահալած  
Դարձել է մի ժանու դահիճ դառնագին,  
Դոքա անձնական օգտին պարապած  
Իրավունքն ազգի զարկել են գետին.  
Եվ սուս հայությամբ դիմակավորված,  
Փոսեր են փորում բարի մարդերին:  
Առողջ մտածողն—աղանդավոր է:  
Ճշմարիտ խոսողն—հայի ոխերիմ:  
Ինչ որ Հային է—այն երկնքից է,  
Դա՛տ արա սոցա, Տե՛ր իմ, Աստված իմ:  
Միայն կաշավածն անարդ արծաթից,  
Կարող էր այդպիս խորհել ու մտածել,  
Միայն մոլորվածն կեղտոտ ախտերից  
Կարող է այդպիս յուրյան փայփայել,  
Նզովյալ է նա և միշտ նզովյալ,  
Որ քարողել է սուս ազգայնություն,  
Որ ազգի առջև դարձս լուսափայլ  
Խավար է կոչել և տղիտություն:  
Թոնավորված են օրերս վշտալի  
Ազգիս անզգա շահամոլներից,  
Տեսնելով ձեր գործը, ո՞վ ծնունդ իժի,  
Արյուն է կաթում իմ խարշած սրտից:  
Սրբություն պղծած, հավատ կաշառած,  
Ազգ ու հայրենիք անարդ վաճառված.  
Կա՛րգ, օրե՛նք, պատի՛վ—բոլորն ոտնակոխ,  
Ամեն տեղ դժոխք, մատնություն ու ոխ:  
Հուսահատության սեամած ամպեր

Ալեկոծվում են իմ սրտի վերա.  
Ո՞հ, ի՞նչ դառն վիճակ, ի՞նչ տխուր ժամեր,  
Անիջա՛լ լինիր, մարդի՛կ անզգա:  
Ո՞ւր որդիական արտասուր ու սեր,  
Ո՞ւր ցավակցության դառն հառաշանքներ.  
Մի՞թե ձեր խեղճ մոր գիտության շղթան,  
Զգալի չէ ձեզ, որդի՛ր շարության:  
Ա'խ եթե, հայ ազգը, մի օր կամ մի ժամ,  
Աստված պարգևեր թեզ միտք խելացի—  
Դու կտեսնեիր, որքա՛ն անզգամ  
Մարդիկ կան բո մեջ, անկյա՛նք, անհոգի՛:  
Դու կտեսնեիր, որ բո չորս կողմում  
Օձեր են բնակվում, դա՞հի՛ճք կորստյան,  
Որ անխիղճ որդիքը արյունդ են ծծում,  
Մահ քեզ խնդրելով, անբա՛զդ Հայաստան:  
Նյութապաշտությունն մահու կապանքով  
Խեղդել է դոցա ծանըր լժի տակ.  
Չեռներն ու ոտներ պինդ կաշկանդելով,  
Վարում է անզյուտ կորստի հատակ  
Ուկի ու արծար, արծար ու ուկի—  
Ահա՛ մտածմունք բո ընտրյալների.  
Սոքա են նոցա էության կենտրոն,  
Կյանքի նպատակ, Աստված ու Կրոն:  
Ո՞վ ազատություն, սուրբ արտորական,  
Զո՞նելու իմ քեզ իմ անձս հավիտյան:  
Թո՞ղ ստրկացած դարերով մարդիկ,  
Դնեն իմ վերա նզովրի կնիք:  
Թո՞ղ սրե շար լեզուն անզօր թշնամին,  
Թափելով վերաս թունավոր սլաքներ.  
Ես պիտի խնդրեմ, ա'զգ իմ լաւագին,  
Ոտնակոխ եղած բո իրավունքներ:  
Ոչ ոք չէ՛ կարող հոգուս նպատակ  
Ճնշել, խորտակել բոնության զենքով.  
Ոչ սո՞ւր, ոչ արյո՞ւն, ոչ բա՛նտ, ոչ կայծա՛կ,  
Ոչ նո՞ւյնիսկ գեհեն մշտավոր բոցով:  
Թո՞ղ անմիտ մարդիկ փրփրան ու գոչեն—  
Անվեհեր հոգին կմնա միշտ ազատ  
Թո՞ղ ալիք ժայռը զարկեն ու կոծեն—  
Նա, ծաղը առնելով, կմնա միշտ հաստատ.  
Բայց սպասեցե՛ք, որդի՛ր խավարի,  
Կգա ձե՛ր վերա ահեղ դատաստան.  
Նորան դրավելու չեն ուկելի  
Գահձերն ու պարկերն ու հարստության:

Կերթան, կանցանեն այս գառն օրերը,—  
Կդա երեան նոր ազգ, նոր կյանքով,  
Նա կդատե ձեր վատթար գործերը,  
Ամո՞թ ու արձան ձեզ նվիրելով:

1861 թվին նոյ. 25.

## ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

Երեկ տեսա քեզ պարտեղում.  
Մազկած էիր վարդի պես,—  
Եվ բո պատկերդ հոգուա միջում  
Նկարվեցավ լուսատես:  
Այնտեղ, ո՞վ կուս ինձ գերեցիր,  
Այնտեղ ես քեզ սիրեցի,  
Այնտեղ հոգիս չերմ, սիալիր  
Ես քեզ ընծա բերեցի,  
Այժմ չունիմ մի ուրախ ժամ.  
Տիուր է սիրտս իրրե դադաղ.  
Ես մեռանել մինչև անդամ  
Յանկանում եմ, ո՞հ, ավա՞ղ:  
Որպես օձից ժանտ, թունավոր,  
Դու ինձանից փախչում ես,  
Տեսանելով ինձ սգավոր,  
Ծիծաղում ե՞ս, խնդում ե՞ս...

1861 թվին.

## ԱԶԱՏ ՄԱՐԴ

Մարդ, դու պատկեր ես և նմանություն  
Այն վեհ Արարշին, որ խնամում է քեզ.  
Սիրիր ուրեմբն միշտ ազատություն,  
Հոգով անպղտոր, սրտով սուրբ և հեղ:

Նա՛, ո՞վ ազնիվ մարդ, կարող է միալն  
Քո կյանք ու վախճան վերհամբարձ առնել.  
Նա՛ միայն հոգին քրիստոնեության,  
Կարո՞ղ է քո միշտ սփռել, ժավալել:

Ազատությունն է կյանք և զորություն,  
Թագավոր, իշխան, և հարստություն,  
Ազատությունը—դուստրը սրբության,  
Փրկիչ ազգերի, աստված մարդկության:

Նա սեր է մարտը և երանության հույս,  
Առաքինությամբ և շնորհով լի.  
Նորա մեջ պայծառ ծավալվում է լույս,  
Կաշառել նորան չէ կարող ոսկի:

Նա, որ չէ շնչում սեր ընկերության,  
Հարգելով օրենք մեծ և առաջին.  
Որին շեն շարժում հուզմունք սրբազնան,—  
Ազատ չէ նա, այլ սպասավոր Դիվին:

Ազատ չէ այն մարդն, որ հասարակաց  
Արհամարհելով բարերազդություն,  
Ասել է սրտում. ի՞նչ գործ անմոռաց.  
Փո՞ղ է հարկավոր և հարստություն:

Այն մարդն է ազատ, որ անձնանվեր  
Զոհել է յուր կյանքն ազգին, անխոռով,  
Որ հարուստներին չէ ծխել խունկեր,  
Մարդաճանապահն տաղեր երգելով:

Ազատ այն հոգին, որին չէ զռավել  
Անմիտ ամբոխի ծափահարություն.  
Որին ընալին չէ վշտացրել  
Կոպիտ մարդերի շարագործություն:

1862 ապրիլ.

## ԱՌ ԳԵՂԵՑԿՈՒՅԻ Կ...

Ես չկամիմ, որ իմ վիշտերս  
Զար մարդիկը իմանան.  
Ո՞ւմ եմ սիրում, ո՞վ է իմ տերս,—  
Աստված գիտե այդ միայն:

(Բասիլիոս Լուսինյան)

Երբ նայում ես դու իմ վերա  
Տիրությամբ լի հայացքով,—  
Ես տանջվում եմ, Աստված վկա,  
Խորին լուսություն պահելով:

Բնության որդիք բազցր ձայնով  
Ուրախություն են հընշում.  
Սիրուն առվակն մեղմ խաղացքով  
Յուր ալիքն է թափալում:

Անտառումը ման եմ դալի, —  
Գլուխ են տալիս ինձ ծառեր,  
Սոխակները ուրախալի  
Ողջունում են իմ բայլեր:

Սակայն ի զուր. սիրո ցնորներ  
Խռովում են իմ հոգիս.  
Այդ քո կրակոտ զույգ աշեր  
Նկարվում են տուաշխատ:

Եթե հարուստ ես լինեի,  
Գոհարներով և ոսկով,  
Քեզ մի պալատ կշինեի  
Ադամանդյա դոներով:

Աթոռ պայծառ, ոսկուց ձուլած,  
Պալատի մեջ կդնեի,  
Եվ քեզ, ո՞վ կուս, առջնդ շոքած,  
Մինչ ի մահ կպաշտեի:

Քաղցրահոտ ես իրեւ ծաղիկ,  
Վայելագեղ քան էրոս,  
Սեր ես շնչում, ով գեղեցիկ,  
Վարդ ես բուրում և ամբրոս:

1862 թվակ. 20 հունիսի.  
Ամառանոցում Դավիթովիկա գյուղի մեջ:

## ԵՐԱԶ

Եօ լսեցի մի անույշ ձայն, —  
Իմ ժերացած մոր մոտ էր —  
Փայլեց նշույլ ուրախության,  
Թայց ափսես, որ երազ էր:

Կարկաչանոս աղբյուր այնտեղ  
թավալում էր մարգարիտ.—  
Նա հստակ էր, որպես բյուրեղ,  
Այն երազ էր ցնորամիտ:

Եվ մեղեղին տխուր, մայրենի  
Հիշեց մանկության օրեր.  
Մորըս համբուլըն ես զգացի,  
Ա՛խ, ափսո՞ս, որ երազ էր:

Կուրծքին սեղմեց կարոտագին,  
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—  
Բայց արտասուրս զնում էին...  
Ա՛խ, այդ ինչո՞ւ երազ էր...

1864 թվին  
Հոմվարի 2.

## ՃՇՄԱՐՏԱԽՈՍ

Եվ ինձ այն օրից, երբ շրթունքս հայտնի  
Օրհնեցին անունը՝ արդարության,  
Ատեցին տգետք, դատապարտելի  
Ինձ փոս փորեցին,—գործի՛ շարության:

Ոխ ու նախանձ, որպես փոթորիկ,  
Նոցա կուրծքի մեջ ալեկոծեցավ,  
Կուրացա՞ն մարդիկ, սիրեցի՞ն մարդիկ  
Խավարի դկը:—Լույսը ժածկվեցավ:

Շատ բան լսեցի նոցա բերանից,  
Շատ աքսորանքի տարա ես հարված,  
Բայց սուրբ դատավորն օրհնեց վերևից,  
Վահա՞ն հովանի ուղարկեց Աստված:

Ես խոսք տվեցի մարմնով և հոգով,  
Արյունով, սրով նորան կնքեցի,  
Եվ խաչ առնելով և կուրծքս ժածկելով,  
Երկինք և դժոխք վկա կանչեցի:

Եվ այն վայրկյանից դեմ փորձություն  
իմ համար, եղայրը, չնշի՞ն խաղալիկ,  
Այն ժամանակից բաշալերություն  
Աշակից ունիմ.—անզոր են մարդիկ,

Ես լավ հասկացա կյանքի նպատակ,  
Քարվո և Զարի զանազանություն,  
Ասացի. Թող շա՛րն առնե ոտնատակ  
Թարին... սա ունի մի ա՛յլ հաղթություն

1864 թվին  
ապրիլի 3.

## ԱՐ ՀՐԱԺԱՐՎԱԾԸ

Կյանքը—գեղեցիկ պարգև աշխարհում,  
Եվ կյանքից հեռու ի՞նչ ճանապարհ կա.  
Ո՞վ մարդ, քո սիրտը ո՞ւր է վերանում,  
Կապած, կաշկանդած երկրիս վերաւ

Ինչպես կարող ես նորա կապանքից  
Եվ ծանրությունից դու ազատ մնալ.  
Հող պիտի դառնաս, ծնել ես հողից,  
Թի ստեղծողին կամիս հավատաբ

Հողից կարող ես դու նորից փոխվել  
Սողուն կամ զեռուն, եթի կամ ծժմակ,  
Ցեցի պես շարժվել, դարձյալ հող լինել,  
Մեղ ցես պատրաստել—ծեփել պատ ու ծակ

Նայի՛ր լուրջ աշքով, ահա անապատ.  
Ի՞նչ պիտի գործես, որ Տիրոջ առջն  
Ստանաս դու վարձ!—Անմիտ հուսահատ,  
Զուրկ ես աշխարհից և շունիս պարզես

Հավատը գործով միայն է հանո,  
Եվ առանց գործի չունիս դու հավատ。  
Քարոզի՛ր անխոնց գործը Աստուծոն,  
Եվ մի՛ հեռանալ անմարդ անապատ,

Կարդա՛, ականջ դիր Ավետարանին,  
Եվ նրա տողերն ձգիր աշքիդ տակ.  
Տե՛ս, ի՞նչ է ասում քեզ աստվածալին  
Արյունով բրտնած բազմաշխատ մշակ:

Ա՛ռ փշտա պսակ և մտի՛ր աշխարհ.  
Այդտեղ է, ո'վ մարդ, Աստուծո Տաճար.  
Այդտեղ ըս կյանքը վաստակով վարժիր,  
Այդտեղ սրբությամբ դու գո՛րծ կատարիր:

Այդտեղ ասպարեզ բրիստոնեության,—  
Այդ կյանք բարվրող մեծակշիռ ուսման,  
Թե ունիս ականջ լսեու—լսի՛ր.  
Թո՛ղ մըին այրիմ, ճգնավոր, փախի՛ր:

1864 թվին  
Մայիսի 6  
Ուսու ուխտատեղում.

## Պ Ո Ե Տ

### 1.

Պռե՛տ, հեռո՛ւ կաց ծափից ամբոխի,  
Երբ քեզ տիրում է ոգեռություն.—  
Նա ծանր ցնորբ է մի հիվանդ սրտի,  
Մի խախո՛ւտ խելքի թելադրություն:

### 2.

Գու պաշտոնյա ես վերին սրբության,  
Որ նվիրել է Աստված աշխարհին.—  
Գու պիտի հերքես հասարակության  
Կանխամուտ կարծիք, դու սաստես շարին:

### 3.

Մի՛ մեծարիր դու կուռքը հարստի,  
Ոտնակո՞խ արա, փշտի՛ր և անց կաց.  
Տաճար Աստուծո—հոգին Պոետի,  
Թե մամոն իշխեց—դժոխք է պղծած:

Եվ այն ժամանակ, երբ քեզ հանեին  
Կախաղան կամ սյուն նշավակելի,  
Եվ անփառք ճակատդ մրով ծեփեին,—  
Արժանի՛ ես դու, թշվա՛ռ, արժանի՛

Ահա՛ ձիթենին կանալ ճյուղերով,  
Ծնորհակալ սրտի զոհաբերություն—  
Պոե՛տ, զարդարիր ճակատդ նորանով,  
Թե սիրել ես ազգդ և արդարություն։

Ահա՛ երջանիկ առաջին հալեր  
Քեզ շիրիմներից ողջուն են տալի.  
Ահա՛ գալոցքի հեռավոր թոռներ  
Երգում են սաղմոս գործիդ պատվելի։

Օծաւ'լ աստուծո, եղիր դու թարգման  
Այն մեծակշիռ գաղափարների,  
Որ կարող էին անունդ անսահման  
Դարերին բաշխել, փա՛ռք կնքել բարի։

Ո՞վ են մեր օծյալքւ—թայց լեզու լոի՛ր,  
Ո՞մ հետ է քո խոսք, ունա՞յն քո խրատ,—  
Միայն բամբասանք, միայն ախտակիր  
Հիշոցք որպես ծով կը թափվին վերասու

Նստած են նորա բորբոսած բանտում  
Տաղաշափության։ Հուսահատություն  
Ուտում է նորանց կույս չէ թափանցում  
Այդ մեռած կամքի գերեզմանատուն։

Հուծվե՛լ է, լուծվե՛լ նոցա խելքն իսպառ.  
Պ՞ր բժիշկ հմուտ, որ առնե մի ճար.—  
— եթան զարթուցիչ և ճշմարտություն,  
Սո՞ւր որպես նշտար, կծո՞ւ որպես թույն:

ՀՅ մայիսի 1864 թ. Մոսկվա

### ԿԵՑՑԵ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ

**ԵՎ** ես երբեմն երգում էի  
Անհոգ բնարիս լարերով  
Գեղեցկություն միայն սերի,  
Վառված նորա հուզմոնքով:

**ԵՎ** իմ մուզաս ինքնահավան  
Կամեր այդպես ինձ պահել,  
ԵՎ միշտ երագ, ցնորս քաղցրության  
Հոգու առջև ժողովել:

**ԵԱ** զորացա... խորտակեցի  
Այդ մուզայի բռնություն,  
ԵՎ սերտ սիրով ողջունեցի  
Քրտնաշան աշխատություն:

**ԵԱ** լսեցի իսոր հառաջանք,  
ԵՎ վիշտ հոգու, և գանդատ,  
ԵՎ լաց, և սուգ, և աղաջանք,  
Այն էր ա'զգ իմ նարազատ:

**ԵԱ** ուխտեցի լինել մշակ  
Հասարակաց պիտույքի.  
Երգե՛լ ուսա դործ և վաստակ,  
Արդար նացը այս կյանքի:

1864 թվին.  
Հունիսի 1.

# ՄԻԶԻՆ ՏԻԳՐԱՆ

I.

Տիգրան, փառահեղ Հայոց թագավոր  
Եվ աշխարհակալ անթիվ ազգերի,  
Ուր է կալվածքը բո Հանդիսավոր,  
Ուր է պետություն բո Հրաշալի:  
Ուր Տիգրանակերտ, մեզ պատասխանի՛ր,—  
Սյու ճոխ բաղաբը, առլցած գանձով,  
Որ Հավիշտակեց բազուկդ Հաղթակիր  
Եվ մի Հազվագյուտ զարդարեց Հրաշբով,  
Ուր գնաց, ասա՛, բո կարողություն:  
Դու վե՛ր կաց, կանգնի՛ր,—ինչ ենք տեսանում—  
Այստեղ փլատակ, այնտեղ պղծություն,  
Միայն բուերի ձա՞յն ենք մննք լսում:

II.

Ուր արենարբու կարող բո սուսեր,  
Որով ճնշվեցան Փոքըր Ասիան,  
Մենք չենք գտանում անդամ ինչ ստվեր,  
Բայց թե ավերակ տրված կորսայան:  
Եվ գո՛ւր, փառասեր որդիր Հռոմա,  
Գո՛ւր, ո՛վ Լուկուլլոս, Կոստ, Պոմպեոս,  
Ուր ձեր բաջության պասեր դափնյա,  
Էրով պճնում էր Հռոմը գոսող:  
Դուք խրոխալով թափեցիր արյուն,  
Մածկեցիր դաշտերն փշրած զենքերով,  
Որ այսօր մի ծանր և մի Հավերժ բուն  
Ամփոփի ձեր փառք, զագաղի փշով:

III.

Ահա ձեր զենքի մեծ Հանդիսարան,  
Ուր ժողովելով վառ լեգիոններ,  
Կամնեիր նվաճել զորավոր Տիգրան  
Եվ նորա վերա տարածել ստվեր:  
Այստեղ Միհրդատ խորտակված թույնով,  
Այնտեղ Բարզափրան Հաղթության փողով,  
Այստեղ դուք իշխան և Հրամայող.—  
Բայց այժմ տեսն' թ., բլուրներ բարձրացած:

Երիթմներ ճնշված... այստեղ և հաղթող,  
եվ տեր, և ծառա մի հողով ծածկված,  
Եվ Հայն, և Պարթև, և Հռոմայացին  
Նո՞յն անարդ կորուստը ընդունեցին:

1864 թվին.

2 հունիսին.

## Ա Շ Տ Ա Ր Ա Կ

Գեղեցկանիստ է Աշտարակ,  
Շատ այգիներ նա ունի,  
Այնտեղ երկինքն է կապուտակ,  
Այնտեղ օդն է բաղցրալի:

Մեծ, ընդարձակ, կանաչ դաշտեր  
Լի են ծաղկով բաղցրահոտ,  
Մարդահասակ, խնկանցվեր,  
Բարձրանում է այնտեղ խոտ:

Այդ սիրուն գյուղն ունի մի գետ,  
Եվ այն լի է ձկներով.  
Այնտեղ իշխան և կարմրախտ  
Խա՛ղ են կապում խայտալով,

Եվ հարազատ այգիներից  
Տարածվում է բաղցրություն,  
Եվ Քասախը ուրախալից  
Բերում է ձեզ յուր ողջուն:

Բայց այդ բոլորն ստրկության  
Կաշկանդած է կապանքով,  
Ժողովուրդը թշվառական  
Խեղդված է մեծ խավարով:

Եվ տիրությամբ ես կանգնած եմ,  
Եվ ողբում է իմ հոգիս,  
Ո՛վ Աշտարակ, բեզ սիրում եմ,  
Ո՞վ բեզ սիրեց, որպես ես:

Կես գիշերին, երբ քնով խոր  
Հանգստանում է աշխարհ,—  
Վեր եմ կենում ևս սգավոր,  
Աղոթում եմ քո համարտ

1864 թվին  
Հունիս 2.  
Բոգորսդոկ.

## ԻՆՉ ՄԻ՛ ՍԻՐԻՐ

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր.  
Ես շատ և շատ փոխվել եմ.  
Ա՛ռ թաշկինակդ—աշերդ սրբի՛ր,  
Ես քեզ սիրել կարող չեմ:

Գնացին անդարձ անհոգ օրեր,  
Գնաց և վառ մանկություն.  
Կուրծըս ճնշվեց և մեռավ սիր...  
Եվ նա շոնի այլ գարուն:

Դու մի՛ ողբար, իմ սիրելի,  
Ինձ նոր դու սեր տալու չեմ.  
Կա'պ է հոգիս կնիքով մահի,  
Թնեւ ողջ քեզ ինձ զոհես:

Խալար եմ ես, որպես գիշեր,  
Իմ չորս կողմին փոթորիկ.  
Զունի՛մ քեզ սեր, չունի՛մ քեզ սիզ,  
Ես սիրում եմ հայրենիք:

1864 թվին.  
Հունիսի 19.  
Ամարանոցում.

# ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ

I.

Ի՞նչ անուշությամբ սահում՝ են ժամեր  
Գեղեցկատեսիլ, խնկահոտ գարնան.  
Ո՞րքան ոգելից վառվում են սրտեր,  
Անձնատուր եղած քաղցր անդորրության.  
Եվ բնությունը ոսկի ժպիտով,  
Զգեստավորված վարդագեղ բողով,  
Հանդիպում է օր նորեկ առավոտ:  
Յոլուն շաղ-գոհար. ճոճում է արոտ,  
Եվ ծածանվելով կայտառ շատրվան,  
Յայտում է շիթերն յուր ադամանդյան.  
Եվ նորա տրտունջն այնքան սիրելի  
Գրավում է աշերդ և սիրո, և հոգի:

II.

Երկինք կապուտակի Առողջ, զովարար  
Շնչում է զեփյուս: Գառներ և հորթեր  
Խաշում են դաշտում: Թնդում է անտառ:  
Երգում է սոխակ: Գողում են թփեր:  
Ամեն մի թոշուն, ամեն մի էակ  
Վերածնվում է այս շնորհարեր  
Ավազանի մեջ, և ձոր ընդարձակ  
Եվ հովիտ կանաչ, և վառ բլուրներ:  
Թիե խոռված լինիս, ո'վ օտար,  
Հակառակ կամքիդ, այդ կանաչավառ  
Տեսարանները քեզ կհրավիրեն,  
Որ քաղցր ստվեր վերադ տարածեն:

III.

Չորս կողմբդ գարո՞ւն: Կանաչ կատարավ  
Հողաբլուրներ հառաջ են զալի.  
Եվ խաղաղ, անո՞ւշ, հանգուցիլ բնով  
Մոռանում ես դու վիշտը աշխարհի:  
Վարսագեղ տնկած ծառերի շաբթեր  
Մեղմիկ շարժվում են: Ուրախ և զվարթ  
Վազում է առվակի— Սիրելի՝ պատկեր.  
Ճղած կոկոնից դուրս նայում է վարդ:

Կարմրում է վարդ, վառ արշալուսի  
Չքնաղ գուտրը, բայց համաձայն չեմ,  
Որ դա սբողեր ամոթիսած կուսի  
Գեղեցկությունը, որին սիրել եմ:

IV.

Սիրո համբուլըներ նորա շրթումքին  
Մաղկում են գալնան հոգելից կյանքով,  
Կարծես, սաստում են երիտասարդին,  
Երբ կամեր քաղել դորանց հայացքով.  
Եվ մարմարինը նազուք ձեսների,  
Եվ իրեւ փրփուր լանջը ձյունափայլ,  
Եվ այն շողշողուն մետարս մաղերի,—  
Անհոգ թույլ տված ուսերի վերա—  
Առնում են նորան հրեշտակ կատարյալ,  
Որ ամոքում էր վիշտերդ դժնյա.  
Եվ ողայական մարուք ցնորքով  
Բացում էր ձեղ կյանք անվերջ հոսանքով:

V.

Ես կարող եի այն սիրողալին  
Հարմարել դորան խոսքերը լորդի,  
Որ նա տալիս է կեդի Յանթալին\*,  
Նախերգանքի մեջ պանդուստ Հարուդի.  
Ո՞վ թա՛լրոն, թա՛լրոն, դա ոգեսրեց  
Քո կարող գրիչ Դա քեզ ներշնչեց  
Այն վերին թոխշը բանաստեղծության.  
Երկուուծ սրտով բնարիդ մեծության,  
Եվ անրունագատ քո Հոգու զեզման  
Պետք է նախանձեն բոլոր պոետներ,  
Որպես հանճարիդ մի համեստ նվեր—  
Երկա՛ր կը պատվին հիշատակդ ազգեր:

VI.

Համաշխարհական պո՛ետ պանծալի,  
Գու քեզ կանգնեցիր երկնահաս արձան.  
Ի՞նչպես մոռանանք, փա՛ռք Անդիալի

\*) Կեդի Շարլուտին, Հերլե Օբսֆորդյան կոմսի դուստրը, որ ալի ժամանակ (1812 թ.) գեղես տասն և մեկ տարեկան էր:

Որ բարձրագույն է, բան սարերն Ալպյան.  
Փա՛ռը—որ ծնել է քո անդին քնար,  
Որ ավերակներ երգեց Հովների,—  
Ո՞րպիս Հեղակա է Գրաշափառ:  
Ո՞վ Բա՛յրոն, ասա՛, ո՞վ քո մեջ դրեց  
Այն վսեմ բախիճն հուսահատուրյան,  
Ի՞նչպիս քո հոգին յուր մեջ ամփոփեց  
Այն խալար դժոխ ամենակործան:

### VII.

Ել ես զմայլած, շատ տեղ ման եկա,  
Հանդիսաբաններ շթողի մարդկան,—  
Գեղեցկութունը մի անգամ գտա,  
Երբե՛ք շտեսա գեղեցկիս նման:  
Ոչ երազի մեջ, ուր վառուն հոգին  
Հրաշագործում է պայծառ տեսիններ,  
Ո՞չ գարնան շռնչը, ո՞չ հարավային  
Ինձ շստեղծեցին այդպիսի պատկեր:  
Նորան ավանդել ես ձեզ շդիտեմ,  
Դուք ինքյանը տեսեք—ես ինչպե՞ս ասեմ:  
Մեծ գեղեցկությամբ—առավել հոգով,  
Եվ պայծառացած դիտության լույսով:

### VIII.

Լսեցի և ես խոսքերի հնչյուն,  
Երբ ոգիսառնված երկու սիրահար  
Խոսակցում էին, բայց այն շշնչյուն,  
Գրավիչ լեզուն այն կենդանարար  
Արդյոք, դոցա հետ կը հավասարի՞մ:  
Եթե իմ կյանքում մի ես նշմարեմ  
Այն աստվածեղին ներդաշնակություն,—  
Խլեցի՛ երկնքի ևս արքայություն,  
Այն խոսքերի մեջ կար ամենայն բան,  
Ե՛վ դրախտ անուշ, և կյանք անսահման,  
Ափսո՛ս, որ չունիմ խոսք բացահայտիչ.  
Կարո՞ղ եք զգալ—ոչի՛նչ է դրիչ:

### IX.

Գարուն է: Սիրտ իմ, ի՞նչ ես հառաջում,  
Մի՞թե շկամիս ողջունել նորան.

Քանի՞ տարի է դու չես շոշափում  
Նախկին օրերի շունչը բաղցրության.  
Քանի՞ տարի է, որպես թշնամի,  
Չկամիս հաշտվել քո վիճակի հետ.  
Ինչո՞ւ կժռ վիշտ—որպես մտերմի,  
Օրով, գիշերով է բեզ կարապետ,  
Գարուն, ո՞վ գարուն, ո՞րբան ծանրություն  
Ածում ես վերաս, ո՞րբան տիրալի  
Հիշո՞ւմ ես ըսպեք:—Ո՞վ գառն հայտնություն,  
Նիհրած է հոգիս, նա կը նորողվի:

X.

Բայց գյուղական կյանք բնության ծոցում,  
Քանի՞ պարզություն և գեղեցկություն,  
Եղեմա դրախտն է այնտեղ փայլում,  
Նորից ծնում ես—և նո՞ր մանկություն:  
Մարդաշատ աղմուկ մայրաբաղարի,  
Իմ բարեկամներ, չեթ լսում այդտեղ,  
Ոչ դուդունը վազող կառերի,  
Ոչ խոշոր հիշոցքը ամբոխի տգեղ:  
Խորհուրդ եմ տալի, և այն փրկարար,  
Եվ այն մի խորհուրդ բաշառողջության,  
Երեք ամսով—մե ունիք հնար—  
Դուրս գալ բաղաբից դեպի ծոց բնության:

XI.

Այնտեղ ծաղիկներ թերև շրջունով  
Թափում են ամբոս և բուն փափկության,  
Եվ ժրագլուխ մեղսմ բզզաւով,  
Գնում է գործել մեղս պատվական.  
Այնտեղ մանկագեղ, ժամն առավոտյան  
Վարդյա ձեռներով հանգիստ է սփռում,  
Եվ սիրտդ հնուռ աշխարհիս ունայն  
Նենդից, կուլը բաղդից, սեր է ճաշակում,  
Բայց ավա՞ղ ե՞ղբարք, շլինի՞ կարծեք,  
Որ ես իմ ներկա կյանքն եմ նկարում,  
Այդպես չէ, ե՞ղբարք, ինձ հավատացե՞ք.  
Անցած, գնացած օրերս եմ հիշում:

Թոգորո՞ղսկ, գիտե՞ս, ո՞վ զեղեցիկ գյուղ,  
Ակամա գործըս մի կողմ դնելով,  
Երդ եմ բէրել քեզ. թույլ տուր ինձ մի ճյուղ  
Քաղեմ բերյողից քնարիս ձոնելով.  
Նա մյուս անգամ գուցե կվառվի,  
Տեսնելով այդ շյուղն Ո՞վ կանաչ թփեր,  
Ստվեր տվիցեք մի օտար Հայի,  
Որ այց է գալի ձեզ օր ու գիշեր:  
Բայց, ո՞չ, չեմ տեսնում ևս ուրախությունն  
Ժամ' մի շղգացի նորա արձագանք,  
Ճեմում եմ ձեր տակ, բայց ո՞չ հաճություն  
Գգվում է կործքս. ո՞չ. ոհ' օձ, կապա՞նք...

## XIII.

Գիտե՞ք, ևս կյանքից այլ շեմ սպանում  
Ոչ հաջողություն, ո՞չ պերճ ապագա,  
Ես խանգարվում եմ և չեմ ափսոսում.  
Ոչի՞նչ չեմ թողնում աշխարհիս վերա...  
Ես դեռ մատղաշ եմ: Բայց մտածելով  
Մաշել եմ կյանքս, ունայն ապրելով.  
Արդեն իմ կործքը այլ բարձրանում է,  
Եվ առաջվա պիս շգիտե շնչել.  
Հանգիստ է խնդրում, բայց կրգտանե  
Նորան հողի տակ... նա կամի՛ ննջել...  
Այսպիս նավորզը կոծելով երկար,  
Ալիքների մեջ գանում է դադար:

## XIV.

Դաղ առավոտուց մինչեւ խոր գիշեր  
Ես թափառել եմ ուսիների տակ,  
Երբ բոլոր լուսին զեղեցկացնում էր  
Աժպերի միջից: Հնչում էր սոխակ,  
Երբ ոսկենշույլ ալիքն առվակի  
Թավալվում էին մանկական խաղով,  
Քաղցր բան ձայնը արծաթի զանգի,  
Յուրյանց հոսանքից խոխոչ հանելով.  
Եվ բնությունը այս պատկերներից  
Կարծես նոր ծնալ Արարչի ձեռից,  
Երկինք ու երկիր նույնպիս գեղեցիկ.  
Անտառի խորբում ընթռւշ դայլայլիկ:

Եվ այստեղ ես շատ երգեր եմ հլուսել  
 Հայոց բարբառով և հայոց խոսքով.  
 Ես Հայաստանի կողին եմ լսել,  
 Այրվել եմ սրտով, այրվել եմ հոգով.—  
 Ես մտածել եմ երկրիս երեսին  
 Թի այս ազդը յուր պահեց գոյություն  
 Այնչափ վտանգից, անչափ մոլեգին,  
 Ունի մի խորհուրդ վերին և թարուն։  
 Ի՞նչ է, ո՞վ հայ մարդ, զարմանում ես զուտ  
 Որ հյուսիսային մութ երկնքի տակ  
 Հանդիսանում է հարազատ կեզու  
 Երբ ըստ գերության զգում եմ կապանք։

Երբ օրհասականդ դամբանի ծոցից  
 Ներկայանում է հոգուն առաջև,  
 Երբ արաստուրը Հայիդ աչքերից  
 Թափում է երկիր, որպես հորդ անձրև,  
 Երբ հուսահատված սովոր մահարեր,  
 Ժխտում ես կրոն և կնիք ազգին  
 Երբ Վատիկանի հրապուրիչ օձեր\*  
 Առաջարկում են քեզ թունոտ ոսկի,  
 Ոսկի, որ գին է մարդասպանության  
 Վերջին հացի գին խեղճ ժողովրդյան,—  
 Եվ այդ անունով Ավետարանին

Ո՞վ կաթոլիկուան կուրությամբ խոցված  
 Զար բարողիշներ երկպառակության,  
 Ո՞վ մոլի Հոռոմ, ո՞վ Նեռն ավերած  
 Մեծին Պետրոսի առաքելության,  
 Ինչո՞վ, ասացե՞ր, ձեր անմիտ ձեսեր,  
 Կարկատած շրով Հեթանոսնական,  
 Նախամեծար են, քան խաղաղասեր  
 Դավանությունը լուսավորչական,  
 Եվ ամո՞թ չէ ձեզ, ազգ խեղճ, ազգ անմեղ  
 Փոխել կրոնից, որ Հիսուսի եր—  
 Զեղ խեղեղելու չե՛ արգութ չրհեղեղ։

\*.) Ալսպես է կոչվում պապի վեհարանը։

Ո՞ւ Թրիստոսի, այլ սատանայի  
Գայթակղության եթ աշակերտներ.  
Ի՞նչ է պատվիրում ձեզ Գողդոթայի  
Անժա՛ Յահատակն—Ատելություն, թե սե՞րո  
Եվ այդ նահատակ, որ Ավետարան  
Տուր մահի գնով կտակեց աշխարհին.  
Եվ լուսավորիչն—զոհ ճշմարտության—  
Ո՞ւ գույն իսկ ուսումն ավանդեց Հային.  
Ո՞ւ Թադեոսի աթոռ նստելով,  
Նմանեցավ նորան խոսքով ու գործով.  
Զարե՛ր, լսեցե՛ր ձեր խղճի ձայնին:

## XX.

Բայց զգո՛ւշ կացեր դուք փարիսեցցց  
Խմօրից, այն է կեղծավորություն,  
Որոնք բառնալով և կական և կոծ,  
Կամին ցուցանել բարեպաշտություն,  
Որ խոնարհում են առաջի մարդկան,  
Արդար միամիտ յուրյանց կարծելով,  
Բայց մեռյալների իսկ են գերեզման,  
Լի ապականյալ, պիհդ ուլրներպ:  
Սյսպիս Թրիստոս երրիմն վշտացած,  
Դարձավ կեղծավոր Հրեկեց ցեղեն,  
Սյսպիս և այսօր մհնք վիրավորված,  
Դառնում ենք խարդախ Եղվիտներին\*:

## XX.

Դոցա բերանից մհնք լսելու չենք  
Սուրբ սիրո ուսմունք և ճշմարտություն.  
Դոքա պիտո և—մհնք այդ լավ գիտենք—  
Միշտ կեղծավորվին և մնան սողուն.  
Դոքա պատրաստ են առնել ամեն բան,  
Երբ զորավոր էր արծար և ոսկի,  
Երբ փաղաքշելով, մի պատվի նշան  
Պարգևեց դոցա պապը Հոռմի,  
Բայց ձեր լեզութը թո՛ղ շնանդնին

\* Մեր խոսքը եղվիտների հետ է, չարահոգի քարոզիչների, և ո՞ւ ընդ-  
հանուր կաթոլիկ թրիստոնեության:

Օրենքը սիրո այլապես հնչել,  
Թո՞ղ անմեղ զոհից երկինք չփակվին,  
Որպես սովորեք ձեզ աշակերտել:

### XXI.

Եվ դու, Հայ' կղեր. բավական է քեզ.  
Նայի՛ր դու, Հայ' իմ, ի՞նչ մեծակշռ  
Եկել են օրեր. դու այդ շգիտե՞ս.  
Մի բաց աշերդ և լավ ըմբռնի՛ր:  
Թե կենդանի է դեռ բո մեջ հոգի,  
Թե բո կուրծքի մեջ չի մարել աստված:  
Թե դու տեսնում ես լուս արեգակի,  
Զէ՛, դու չես կարող մնալ բնեած.  
Թե կամակոր ես, բայ կորուստ թշվառ.  
Իսկ թե ուշադիր, բեղ կյանք մեծափառ.  
Գո՞րծ ենք պահանջում, գո՞րծ, արիությո՞ւն:  
Ո՞չ անփուլթ հանգիստ և զբարտություն:

### XXII.

Բա՞րձր բարոզիր սուրբ Ավետարան,  
Որպես ճանապարհ դեպի գիտություն.  
Թո՞ղ լցվին սրտերն միսիթարության  
Սուրբ աղաղակով: Եղիր դու արթուն,  
Որպես արթուն էր Միածին Որդին,  
Յուր անմեղ կյանքը տալով աշխարհին:  
Քե՞զ եմ բարբառում, որ աշակերտ ես  
Այդ մեծ Ռառուցչին, դու ինձ լսո՞ւմ ես:  
Ո՞վ կղեր, կղեր, ծանը է բո բեռն  
Աստուծո առջեն, եթե դու այսօր  
Հոգի շզգինուա, շպարզիս բո ձեռն  
Դեպի սուրբ վաստակ, որ կյանք տա ձեզ նոր:

### XXIII.

Մի նայի՛ր, անբազդ բո ազգի վերա,  
Տե՞ս, ի՞նչ ալեկոծ ծովի մեջ է նա.  
Առագաստ պատուած, կայմը խորտակած,  
Շանթեր, կայծակներ մահով զինվորված:  
Վե՞ր կաց հոգենոր Հայր վիրավորից  
Ուր ես դու, ձայն տուր, թո՞ղ լսենք բո ձայն,  
Լսե՞նք բո բարող հայրենասերի:

Որի համար սուրբ է խեղճ Հայաստան:—  
Զայն չկա, ավա՛զ: Եղբարք, ի՞նչ անենք.  
Ի՞նչպես դարմանենք այս մեր վտանգիս,  
Եվ հոգևորի սիրար դղրդենք,  
Եվ հասարակին կարդա՞նք ավետիս:

1864 թ.

Հունիս հուլիս

Քոգորոգսկ

## ՃՇՄԱՐԻՏ ԿՐՈՆ

Мышление есть любовь.

Спиноза

Только свободное наслаждение созерцания и жизни, стремящаяся в бесконечное и к безконечному направленное дает сердцу безграничную свободу; только реализия спасает ею от тяготеющих оков мнения и желаний.

Шлейермахер.

(Истор. филос. Курно-Фишера.)

I.

Մտածո՞ւմ եմ ես—և կարծիքս մոլար  
Անհնանում են, ես կամիմ գրկել  
Այն մեծ Օրենքը, այն վեհ Կառավար,  
Որ գիտե տիեզերք դաշնավոր կշռել  
Պարզ մտածությունը ինձ հայտ հանդիման  
Հավերժ օրենքը հառաջ են բերում,  
Իմ գոռող եար յուր ինքնահավան  
Եվ մոա՛լ ախտով է փլատակվում,  
Միծ ուրախություն, և այն անվրդով,  
Իմ ձգտողությամբ ես գտնում եմ,  
Եվ Աստուծո հետ մտածով հոգով,  
Եվ հաղորդվում եմ, և միանում եմ:

II.

Եվ ներզգալով Մշտնչենապորն,  
Անմահանում է Կրոնը հոգուս,

Եվ ծավալվում է, այնքան փառավոր,  
Նորա շորս կողմին աստվածեղեն լույս  
Եվ բաղմում է սիրոս առավե' և սիրով  
Գեղի գոյական արարածները,  
Ընչասեր կրթից նա ազատվելով,  
Օրհնաբանում է Զորավոր Հայրը  
Բացվում է այդտեղ անխախտ սրբազն,  
Աւր թագավոր է խաղաղական Սեր,  
Ուր անմահ Օրենք համաշխարհական  
Բուրում է Հոգուս հաշտուրյան վարդեր:

### III.

Ես բարձրանում եմ.. և ինձ փայլում է  
Սուրբ նախապատճառ աշխարհ ստեղծության,  
ինձ Հավերժ Կարգը առաջնորդում է<sup>\*</sup>  
Գեղի տաճարը ինքնազոյության:  
Ես սկսում եմ նոր—նորից ապրեծ  
Եվ գաղարում եմ մտքով վշտանալ,  
Եվ այդ վայրկենից կամիմ մտածել,  
Այն է նանաշել Որ են—նավատա՛լ:  
Ճանաշել Որ են—է այն վերին Սեր,  
Որ շաղկապում է ընդհանուր տիեզերք,  
Եվ պատրաստում է մարդեղեն սրտեր,  
Քաղցր սաղմոսով Հնչել նորան երգ:

### IV.

Զգում եմ Կրոն և ճշմարտապես,  
Եվ գիտակցությամբ սերում եմ նորան,  
Եվ ինձ շեն ճնշում մի հավատի ծես,  
Եվ ոչ կուակեցը մի գավանության:  
Սուրբ է Կրոնը, և նա ոչ ոքի  
Չէ բերում վնաս կամ նախանձ կամ ոխ,  
Նա ծնանում է մի մաքուր ոգի,  
Եվ խաղաղության է նա ավետող:  
Նախանձ են նորա և շար ոխական

\* ) Հավերժ կարգ ասելով, Հասկանում ենք նույն իսկ Աստված, որ ճարտարապետական պատճառավորությամբ արարագործելով տիեզերք, ինքը որ-  
պես Կարգ ու Օրենք տնօրինում է նոցաւ

Որանց իշխում է մի մեռած նավատ,  
Որոնք խախտեցին սրաբը անարտատ,  
Եվ մարդիկ դարձան դահիճ կատարյալ:

1864 թվին Հուլիսի 1.  
Բոգորոդսկ

## XIX ԴԱՐԻ ԿՐՈՆԱՍԵՐԸ (Գիշերով)

### I.

Ճամբը է լեզուա, որպես գիշերով  
Երկնքի կայք և տարածություն.  
Ես մտածում եմ երկյուղած սրբով,—  
Եվ հետպհետե խորհրդածություն:  
Ամեն տեղ կյանք է, ուր և անկանի  
Քո տեսությունը: Լեռների շղթան,  
Մաղկազարդ բլուրներ, ժողովք ջրերի,  
Զեկ քարոզում են փառքը բնրության.  
Եվ շշնչում են մի խորհրդավոր  
Ջորուրյան վերա. և չես շոշափում  
Այդ զրոյթյունը, միայն Հոգեոր  
Քննության առջև է ներկայանում:

### II.

Մի անեգրական անվերջ զուրույն  
Տիրում է մարդու այդ բոպեին,  
Նա տեսանում է այն ճշմարտություն,  
Որ ավանդեցավ դարերից դարին.  
Այն սուրբ գաղափարն Արարշագործուրյան,  
Գաշնավոր նյուսած զեղեցկուրյան նետ,  
Այն Հավերժ Հոգին անհատ զոյուրյան,  
Անլույժ գաղանիթին Տե՛ր և Վարդապե՛տ:  
Դու լսում ես ձայն—և շփոթվում է  
Քո սուր զնություն, քո փորձող նմերը  
Երկյուղածությամբ հնազանդում է,—  
Այդտեղ հնազա՞նդ և շրջակայքը:

Եվ մի՞թե, մի՞թե, երբ խանդարելով  
Երկրի կապանքն ապականության,  
Եվ հողեղին նյութը թոթափելով,  
Պիտո է լինիմ որս ոշնչուրյան.  
Մի՞թե այն պարզե, որ տված էր մեզ,—  
Պարզել ծածուծիլը, ըմբռնել գաղտնիք,  
Մի՞թե, ասացե՞ք, պետք է ծուխի պես,  
Անցանի մի օր, այդ ինչպես կարծիքը  
Բայց ինչո՞ւ իմ մեջ հավերժ խաղացքով  
Խոսում է քանը առաջնորդական.—  
Ո՛չ, բնության հետ ես միանալով,  
Ես մեռնելու չեմ, և ե'ս անվախճան:

1864 թվին

Հուլիսի 2.

Քոգորոգսկ

## ՕՐՆՅԱԼ ՀԱՆԳԻՍ

Օրհնյա՛լ հանդիստ, ողջույն, ողջուդն  
Քո կենսաբեր գալստյան,  
Կորավ՝ սև օձ—անհուսություն.—  
Ճնշող կապանքը բոնության:

Երկար միջոց ես թագուցի  
Եսուն ոխը իմ հոգուա,  
Ես շներին նախանձեցի,  
Եվ չո՛ւնեի մի այլ հուզ:

Ահա այն տուն, այն բանտ խավար...  
Քանի՛ սև սև հիշատակ...  
Այնտեղ էր այն դահիճ վատթար,  
Տո՛ւն դու, դարձի՛ր վլատակ:

Թող քո հիմը մինչեւ անդամ  
Փոխվի, որպես մի տիսուր դաշտ.

Թող անկասկած ես հավատամ,  
Որ ճնշեցավ Զարն անհաշտ:

Քանի դառըն ես արտասուբ  
Թափել ևմ իմ աչքերից,  
Քանի՛ հոգոցը, ցուրտ, որպես թուր,  
Քանի՛ սրտի և կոկիծ:

Ո՞վ մանկություն, իմ կանաչ վարդ,  
Որպես ծառա վշտացար,  
Թառամեցար—և կորավ զարդ...  
Քո հորիզոն չէ՛ր պայծառ...

1864 թվին  
Հունիսի 5.

## ԲՈՆԱՎՈՐ ՍՈՒԼԹԱՆ

### I.

Ահա արեմ արյունոտ գնդակ,  
Ոսկեզօծելով կողմն արևմուտքի,  
Մածկվում է խապառ Երկնի կապուտակ  
Լցվում է աստղով անշափ հրաշալի,  
Սպիտակափա՛ռ է երկնակամար,  
Երկրի վերա դմբխայա՛ ամառ.  
Աստղը աստղի հետ խաղ է հորինում,  
Մաղիկը ծաղկին հանդիսատ է ասում.  
Ո՞ր թշվառական, ո՞ր մահկանացուն  
Կարող է խախտել այդ անդորրություն,—  
Պոետի հոգին, որ վիրավորված  
Ճեղքում է շղթան բռնի կաշկանդած:

### II.

Ել այժմ պոետն այլ երազում չէ,  
Որ նա ուրդի էր վերին երկնեֆի,  
Եվ նորա հոգին պիտո է լոե,  
Ուր բան էր վատթար խեղճության ազգի,  
Եվ թե ճնել էր, որ լինի թարգման

Քաղցր մեղկության և անգործության,  
Եվ, ոգեսորված, բնարի հետ խոսեր,  
Երբ նա երգում էր միայն գինի և սեր,—  
Ո՞ւ նա փոխել էր այդ ծուռ գաղափար,  
Նա բաժանորդ է ազգի ցավի հետ,  
Եվ ահա այս խոսքը թնդում է Քնար.  
Նա՝ին քաղաքացի, և ապա՛ սկսետ:

### III.

Ո՞հ, ստրկություն, և բանտ և գագաղ,—  
Նույն անարդ կորուստ, այլ միջոց չկա,  
Եվ թե բոնավորն աներկուող, անվախ  
Զգում է յուր լուծ բոլորի վերա,  
Իրրե թե կամեր բարեբախտություն  
Դորանով շնորհել յուր ժողովրդյան,—  
Այդ փորձիչ—օ՞ձն է, այդ սովեստություն.  
Մենք ճո՞րտ ենք նորա, նա կամքիս իշխան:  
Երանի՛ նորան, որ սուրբ ձեռին,  
Ազատ գտել է և մահ, և անուն.  
Անմա՞հ, օրինակ հզավ յուր թոռին,  
Նա լավ ըմբռնեց Զարի նենգություն:

### IV.

Բայց երբ ազգերը ուսում կստանան,  
Երբ այդ առողջ մարդն կսկսե մտածել,  
Այն ժամանակը կարող է միայն  
Ազատությունը յուր գանձը հանել.  
Այն ժամանակը միայն մարդկություն  
Կարող է կյանքը իմաստասիրել  
Եվ հասարակի բարեբախտություն  
Անխախտ հիմքերով արարշագործել,  
Ինքնակալություն թոնավորների\*,  
Որպես թե մի ծուխ ցնդելու է վեր,  
Ինքնակա՞լ է ազգ, ինքնակա՞լ բարի,  
Ինքնակալ նորա հոգու օրինքներ:

\* Այս՝ այստեղ մեր խոսքը անհոգի և անաստված բռնավորների մասին է, թե քանի տարել են այդ բոնակալության լուծը մեր Տաճկաստանի հայ եղ-բայրակիցները—գիտե ամեն ոք:

Հուռ սենեկիս մեջ, ես կես գիշերին  
 Նստած միայնակ, սովոր եմ ըննել  
 Այսպիսի հարցեր, բայց միշտ վշտագին,  
 Ելք շգտնելով, տխուր եմ մնացել.  
 Այս մտածմունքով իմ նվիրական,  
 Եվ այս հոգենոր ցավի կակիծով,  
 Կարծեմ, կիշանեմ հավերժ գերեզման,  
 Մի բարի վիճակ մարդին ցանկալով.  
 Ես հավատում եմ, ես հաստատում եմ,  
 Որ սեփական էր այդ վիճակ մարդին,  
 Եվ գալու է ժամ, երբ ուրախադեմ  
 Նախանձելու չէ այլ նա դրախտին:

1864. Հուլ. 11.  
 Բոգորոդոկ գյուղում

## ԴԱՎԱՃԱՆ

Վարպետ տիմարք եւ բնդիմնահանք, ան-  
 ձամբ առեալ պատիւ եւ ոչ Առօւծոյ կոչե-  
 ցեալ, արծարով թնտեալք եւ ոչ հոգվով.  
 ոսկեարք, նախանձուք, թողեալ զնեկու-  
 րիւն, յորում Առօւծած բնակե, եւ գայլ  
 եղեալ՝ զիւրեանց հոսս զիւատելով:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ.

Տիմուր է, եղբայրը, տխուր է մեր դար.  
 Հայի վիշտերից և անարդանքից  
 Թառամել եմ ես, նա, որպես թշվառ,  
 Ազատվելու չէ երբեք կապանքից:  
 Նորան յուր հովիվը, յուր առաջնորդներ  
 Մինչ հոգեվար ժամն պետք է կեղերեն,  
 Եվ եղվիտական, անփառք թակարդներ

Օտարի առջև այդ խեղձին դնեն։  
Հովիվ գառնալով ազգին հոգևոր,  
Մի սարսափելի նպատակ ունին.  
Որպես մոլեռանդ, դահիճ թունավոր,  
Զրկել, պատառել յուր ժողովրդին,  
Եվ բողոք կարդալ և դավաճանել,  
Թէ այդ զրկեալը կամեին խոսել

### II.

Արդա՞ր դատասան, ո՞ր է քո պատիժ,  
Ո՞ւր է երկնակառը վրեժխնդրություն.  
Մի՞թե մի անմիտ, մի դարշելի իժ  
Պետք է նվաճե քո արդարություն։  
Մի՞թե դու այնքան թուլ ես և անզոր  
Այս աշխարհիս մեջ, այնքա՞ն անհաստատ,  
Որ դեպի դագաղ պիտի գնաս այսօր,  
Եվ խեղձես մեր մեջ ամենայն հավատ  
Ցո՞ւց տուր մեզ, ցո՞ւց տուր, որ կենդանի եմ,  
Կաշկանդի՛ր ձեռներն այդ հանցավորի,  
Թո՞ղ այդ Աղվիսը, որպես սեհերես,  
Ստանա սև վարձ—վա՞րձը Հուդայի։

### III.

Գգված գորգմնազարդ, փափուկ բարձերով—  
(Մածկոցն է թափիշ, կապույտ—ծիրանի)  
Առոք և փառոք մորուր շփելով,  
Սերտում է անվանը Հարդու սրբերի.  
Նա մտահույզ է, ի՞նչպես իմանանք,  
Ո՞րպիսի ճնշված դավի դղբրդյուն,  
Ո՞րպիսի եղենն նենգության կապանք,  
Սկամած թափիշ, մթին ցանկություն,—  
Վարագուրում են խորամանկ ճակատ,  
Ուր թագուցած է մահապարտ հանցանք  
Եվ մի վասակյան ապերախտ գանգատ։

1864 թվին.

Հուդիսի 15.

Թոգորողսկ.

## ԱՅՆ ԵՐԱԶ ԷՐ

Եվ ծանր է վիշտս, և ես բնում եմ,—  
Եվ ահա երազ խորին դիշերով.  
Այն մեծ երազ է, ես տեսանում եմ,  
Հայի մութ աստղը փայլեց մի լուսով:  
Եվ ահա հայերն, նախանձով վառված,  
Դիմում են հառաջ, որպես այլ աղդեր,  
Եվ մտանում է նոցա մեջ Աստված,  
Բերելով յուր հետ միավորիչ սեր  
Եվ կարծես, այդ սերն պետք է հաստատվի,  
Որ վարձատրե արյունով հոսած  
Նոցա արտասուր, և ոգեհորվի  
Անծաղիկ կյանքը Հայ-հասարակաց:  
Զարթնում եմ բնիցս.—ինձ պաշարում են  
Նույնիսկ հոգեկան ցավի սկ օձեր,  
Եվ Հային շար բաղդ ինձ գուշակում են,  
Ցավեցի՛ք, Հայեր, տեսածս—երա՛զ էր:

1864 թ.

Հուլիսի 15.

Բոգորոդսկ

\* \* \*

Ես տիսուր եմ և շգիտեմ,  
Ի՞նչպես կանցնե իմ դարը.  
Ես կարծում եմ, որ բանտում եմ.—  
Հեղձամաղձուկ է օրը:  
Եվ հանգչում է կյանքիս հոգին,  
Իմ նազելի մանկություն,  
Եվ աալու չէ այս աշխարհին  
Ծնորհակալ յուր ողջույն:  
Նա կմեռնի, և ոչ ոք ձեռն  
Պարզելու չէ դեպի նա,  
Առե՛ք իմ բեռն, իմ ծանր բեռն,—  
Կամ հո՛զ, մոխի՛ր իմ վերա:  
Չէ՛, պայծառ չէ՛ իմ հորիզոն,  
Հառաջ նայել չկամիմ.  
Այնտեղ միայն մե Արերոն,  
Բայց կազմ նավակ ես շունիմ:

Հոգիս անզոր, հոգիս համըր,—  
Ե՛կ և սորան դիմացի՛ր,  
Խաշըս դժվա՛ր, խաշըս ծանըր.  
Կյանք, ինձ ինչո՞ւ խարեցիր:

1864 թ.  
Հուլիսի 15.  
Թոգորոգսկ.

## Հ Ս Վ Ի Վ

Մասի հովանին, տերեկի շրջում,  
Տխուր ողբերգակ աղբյուրի շաշում,  
Հաճելի դիրքը զմրուտ կանաշով,  
Մի սրանչելի գեղեցկութենով,—  
Միշտ ասում եմ քեզ. ո՞վ դու անցավոր,  
Ո՞վ ինքնահավան դու ճանապարհորդ,  
Ինչո՞ւ չես գալի այս հազարավոր  
Թարության լինել մասնակից, կցորդ:  
Եվ ահա հովտից մի թաղցր թամի  
Թերում է յուր հետ աննշան ձայներ...  
Լա՛վ ականջ դի՛ր դու... այն խաշնարածի  
Թութակի երգն է: Եկել է գիշեր:  
Կանչում է գառներն հանգչել խաղերից,  
Եվ պատսպարվել պատառող գայլից:

1864 թվին.  
Հուլիսի 19.  
Չերկիզով գյուղումը.

## ԱՐ ԻՄ ԸՆԿԵՐԸ

I.

Սեր և մանկություն,—կայտառ երկվորյակ,  
Միմյանց գրկող անմեկին ընկեր,  
Որպես գարնան հետ և վառ ծաղիկներ,

Որպես պարզ օրով և վառ արեգակ...  
Սերն է, սիրելիք, չկամիմ խարեւ,  
Որ ձեր տրտունջը մեղմացնում է,  
Եվ, թե ծերությունդ դեռ չէ ժամանել,  
Որպես մի թռչնակ ձեզ միշտ ժպտում է:  
Սորա համար չե՞, երբ դուք տեսնելով  
Երկու սիրահար գգված, ճեմելիս  
Հզդում եք ձեր մեջ մի ժամ անխռով,  
Երբեք բերում էր ձեզ մեծ ավետիս:

## II.

Թե վերաբերել այդ ինձ կամեի,—  
Ես զմայլելով նայում եմ նոցա.  
Նոցա կհցությունն է նախանձելի.  
Թաղգավոր րոպեք թափում են աճա...  
Մեր մահկանացու աշխարհն անպակաս  
Աի է ամենայն տհաճությունով,  
Ուր մեկին մեծ շահ, մյուսին մեծ վնաս,  
Գանգատ, հայոյանք զրախոս լիզվուտ  
Բայց այդ ամոլը, — այդ սիրո որդիք,  
Հեռու այս կյանքի շարություններից,  
Միշտ բավական են և միշտ երջանիկ,  
Դոցա վերա է ծաղկում սե՞րն անբիծ:

## III.

Միայն երբեմըն նախանձի ոգին,  
Որպես մի շար դեմ մեր մեջ շրջելով,  
Քերում է կասկած սիրո աշխարհին,  
Մինչ նորա կապը իսպան լուծելով:  
Բայց դո՞ւ, իմ ընկեր, գիտե՞ս ինչ է սեր, —  
Երկու կողմերի համակրություն.  
Իսկ թե առավել, — երբ երկու սրտեր  
Ումին մի վերին զուգավորություն:  
Առանց այդ կապին սերը կյանք շունի,  
Եվ այսօր, էգուց պիտո է մեռնի.  
Ուրեմըն սիրի՛ր, քանի սիրում է,  
Եվ ինեղի՛ր քո սերն երբ նա մենակ է:

## IV.

Եվ դու այդ օրից կորուսանում ես  
Քո իրավունքը, որ դու ունեիր,

Քայց անկման խաչը, — եթե խելոր ես —  
Եվ վերադ շառնել դու կարող էիր:  
Միայն մտածի՛ր, մենք բաղդավոր ենք,  
Երբ կառավար է աղատ կամքը մեր,  
Իսկ թե մենք նբան բռնաբարեինք,  
Սեր կյանքը սաստիկ պետք է նվազեր:  
Եվ քո սիրածը բաղդավոր յուրյան  
Հաշվում էր մինչեւ սերդ սիրում էր քեզ,  
Այդ սերը անցավ — և նա ինքնիշխան  
Գնաց — նո՞ր բաղդի կազմել ասպարեզ:

1864 թվին.

Հուլիսի 21.

Բոգորոդոկ

## ՍՐՏԻ ԿՍԿԻԾ

Քանի՛ ժամ՝ է, օտարության  
Տվել եմ անձս վշտալի.  
Ինձ թվում է, որ հավիտյան  
Մածկվեցավ հողն հայրենին  
  
Ես, համարյա՛, ցնորված եմ,  
Ես հիվանդ եմ միշտ հոգով.  
Բարի՛ մարդիկ, հանգիստ շունիմ,  
Ես մեռնում եմ սիրելով:

Ա՛յս մա՛յր, ասա՛, քանի՛ կսկիծ  
Գուրս է թափվում քո կուրծքից,  
Ո՞ւր այդ կսկիծ... դեպ աշխ աշխարհ...  
Այդ բողո՞ք է, ո՞վ մհծ հայր:

1864 թվին  
Օգոստոսի 3.

\* \* \*

Ես այն օրից, երբ քո պատկեր  
 Շիշավ, որպես մի ճրագ, —  
 Տաղականում եմ ողբանլվիր,  
 Անմահ է քո Շիշատակ:

Ես այց եկա դերեզմանիդ, —  
 Շատ արտասուր թափեցի, —  
 Թող ճաշուկե մարուր հողիդ  
 Խաղաղություն, ասացի:

Եվ թացում են ինձ արտասուր,  
 Առատ որպես մի առու,  
 Այս, Հասկանալ կարող չեք դուք,  
 Ունիք սիրու մի զգալու:

Եվ հնչում է իմ ականջին  
 Սիրո երգը կախարդիւ:  
 Ուր ես հրեշտակ իմ երկնային, —  
 Իմ արտմության սփոփիչւ:

1864 թվին.  
 Օգոստոսի 3.

## ԵՎ ԴՈՒ ԱՅԴՊԵՍ

I.

Ո՞վ իմ մտերիմ ընկեր մանկության,  
 Դու մասձում ես ինձ դավաճանել,  
 Եվ իմ սիրու սիրո ոգեխառնության  
 Այլևս չկամիս համազգաց լինել:  
 Եվ ահա շրթունք «ներիր» 22նշեց —  
 Եվ ես աշխարհում մնացի մենակ.  
 Եվ իմ կուրծքիս մեջ սիրուս նվազեց. —  
 Իմ ծաղկած այգի, դարձար փլատակ,  
 Կանայք, ձեր սիրուս ես լավ զննեցի,

Եվ այսուհետեւ Հազիվ թե խարվեմ.  
Եվ թե մանկությունս Հավիտյան ծածկվի,  
Չեր նենդ արվեստը աշխարհին կպատմեմ:

II.

Ի դեպ է այստեղ, երիտասարդներ,  
Որ դեռ նվիրված չեր կնոջ սրտին,  
Որ, դեռ ցնորված, չեր ճանաշել սեր,—  
Լսել խորհուրդը, թե այդ խրատին  
Ականջ դնեհիք—դուք կարող էիք  
Լինել բաղդավոր և սիրո աշխարհ  
Ոտք կոխել հաստատ:—Ո'վ դուք պատանիք,  
Խեղդեցի՛ք կիրած ձեր իշխանաբար,  
Թեև բորբոքվեր սիրո կրակով  
Չեր բոլոր կյանքը: Արձակ նայեցեր  
Սիրած ընկերիդ աշբերին. տեսե՛ք—  
Չվառվին նորա մեղմ աղաւանիբով,  
Եվ Հավատացե՛ք. ախտեր կոկոն  
Եռ գալ նոցա մեջ—և ձեզ կսիրեն:

1864 թվին  
Օգոստոսի 5  
Քոգորոդսկ

ԱԽՏԱՎՈՐ ԺԱՄ

Ի՞նչո՞ւ այդպիս արտասվալի  
Դու նայում ես իմ վերա.  
Քիզ չե՛մ սիրում, իմ սիրելի,  
Ի՞նչ է քո միտքը, ասա՞:

Ի՞նչ ես կարդում իմ աշբերում,  
Մի՞թե սիրո Հավատափիք:—  
Ո'վ խեղճ աղջիկ, ի՞նչ ես անում,  
Ի՞նչ պիտ, ասեն քեզ մարդիկ:

Մազերը կախ, և շրթումքներ,  
Եթ ցանկությամբ ախտավոր,

Խոնարհում են համբուլըներ  
ինձ տալիս է նա անզոր...

Ո՞չ, փրկիչ եմ ես քո, ո՞վ կույս  
ես խնայում եմ քո տարիք...  
Խեղդի՛ր այդ շար և անմիտ հույս,  
Հետո կլինես երջանիկ...

1864 թվին  
Օգոստոսի 8.  
Չերկիզով պյուղում.

## ՀՈՎԻՏ ՏՐՏՄՈՒԹՅԱՆ

О родина моя! я вижу стены, вижу  
Колонны, арки, башни и дворцы,  
Что были наших предков достоянием,  
Но славы их, но лавров их не вижу,  
Но горе, горе изранена она!  
(Стихот. иностранных поэтов)

### I.

Հովի՛տ տրտմության, անհա՛յր հայրենիք  
Հին աշխարհների արդու աւելոր,  
Կապանքների մեջ—վայ քո վիճակիդ—  
Խեղդվե՛լ է կյանքը քնով դարավոր:  
Միթե, ինձ ասա, նո՞րա համար եր  
Քո արյունահեղ նահատակություն,  
Քո ընտրյալների զոհած դիակներ,  
Որ գոռոզանա այժմ բոնություն.  
Նո՞րա համար եր, որ Ավարալրը  
Ընդունեց յուր ծոց քաջ քաջ վկաներ,  
Որ ճնշե հային գերության բնոր,  
Որ դժո՞խը փոխվին նորա պարզ օրերի

### II.

Ալսպես տրտմությանս միակ առարկա,  
Աշխարհ Կարդանա, աշխարհ Սահսկա.

Թարբարոսների անհագ ձեռներից  
Զրկվեցա՛ր վերջին ազատությունից:  
Անմեղ գաւոներիդ դադարեց արյուն,  
Որով ներկվեցան դաշտերն ամայի,  
Եվ անհետացավ նետերի շաշունք,  
Որպես և ուժը բանավորների:  
Մի դամբանական խորին լոռություն  
Սփռել է վերադ մահի վարագույր,  
Միայն երբեմբն ագռավ սևաթույր,  
Հերձելով անբնակ քո տարածություն,  
Խնդրում է յուրյան այդտեղ կերակո՞ւր,

### III.

Այսպես ուկրներ, ազգությամբ կնրած,  
Դարեռը միշտ թումբերով ծածկված,  
Մարտիրոսներիդ պայծառ մահարձան,  
Եվ հերոսներիդ պանծալի դամբան,  
Եվ վերջին շունչը հարազատ կյանքի,—  
Բոլո՞րը կորավ առանց մի հետքի  
Կորա՞վ արդարեւ Այսպես Հայաստան  
Վաճառեցին քնզ որդիր շարության,  
Որպես անպատիվ մի կալանավոր,  
Խաղալիք գարձար ազգերի ձեռին,  
Որպես խավար բանտ սեացավ քո օր  
Ամո՞թ առնողին, ամո՞թ տվողին...

### IV.

Այժմ կարող ես, որպես դագաղում,  
Հանգիստ որոնել անընդմիջելի.  
Քո նավը շարդվեց—և ալիք ծովի  
Խսկույն լուցան, այլ չե՞ն կատաղում?  
Ահա նենդավոր նախանձի ոգին,  
Մի դժոխային ծիծաղ երեսին,  
Նայում է վերադ,—և փլատակներ  
Տիուր պատկերով հառաջ են գալի.—  
Հրո՞վ ու սրո՞վ ածել է ավեր,  
Եվ ոչինչ չկա, որ նորից շարժվի,  
Եվ Հայ կյանքի մեծամեծ շինված,  
Որպես անապա՞տ անշրեղացած:

Սեարյուն հետքով ամենայն մի քար  
 նշանակված է. տատասկով, փշով  
 Մածկած պալատներ, ապարանք, տաճար...  
 Անգամ շները կատաղի հաշով  
 Զեն խանգարելու նինջ բո ծանրագին.  
 Մնա՞ց բո մեջ գեշ, որ լավիլիվեին:  
 Ո՞չ, թե ձեր սիրառ խիստ տաղտկացած է  
 Մեծ աշխարհային գործալոր կյանքից,  
 Եկե՛ք Հայոստան, նա ձեզ կսփռին,  
 Թիպետ և ձեր մեջ մի ծանրը թախիծ  
 Պիտո է եռա, թեև, ո՞վ օտար,  
 Պիտ գոշես, ո՞վ ազգ, դու ինչպե՞ս ընկար:

Դու տեսանո՞մ ևս բո տիսուր վիճակ,  
 Դառն արտասուրի արժանի զավակ.  
 Դառն արտասո՞ւրի... չարագույժ ազռակ,  
 Անզդ գիշատիչ բո ջուխտակ աշեր  
 Սրածայր ճանկով շուտով կփորեն,  
 Եվ տարածելով հաղթական թեր,  
 Հիշատակիդ հետքն անգամ կտանեն:  
 Եթե բո այդին դաշտը չծաղկե,  
 Թե շկանաչի ծառը գիտության,—  
 Ավե՛ր օրհասի թեզ պիտի ճնշե.  
 Այսպես է անբախտ հայիդ ապագան,  
 Անհա՛յր, անտերո՞ւնչ և թափառակա՛ն:

1864 թվին  
 Օգոստոսի 10  
 Բոգորոդսկ

## ԻՄ ՎԻՃԱԿԸ

Ես գրում եմ կշտամբելով  
 Անիսիղճ մարդի սև գործեր,  
 Բոլոր կարծիքն ովաբսավելով,  
 Վկայել կամիմ նորան սեր:

Եվ փշտա է իմ ճանապարհ.  
Ամբողջ դժոխք և բողոք  
Ինձ լարում են կորուստ վատթար:  
Ինձ բարեկամ—և ո՛չ ոք.

Հաստատ ոտով ես գնում եմ,  
Ճշմարտությամբ ես զինվորված,  
Անկեղծ բնարով ես օրհնում եմ  
Եվ թշնամիքս և Աստված:

1864 թվին  
Սեպտեմբերի 11.

## ՍԻՐՈ ԿՅԱՆՔԸ

I.

Ա'վ իմ սիրելի, ես սիրող սրտով  
Խաղաղ ժամանակս կամիմ բեզ զոհել,  
Եվ հոգուս մաքուր, սուրբ զգացմունքով  
Հրաշալի պատկերդ կենդանագրել  
Կամիմ հավատա, որ այսուհետեւ  
Անունդ տվեցի ես ապագային,  
Տվեցի եթե աշխարհիս առջև  
Թեզ ճիշտ նկարեց պոետի վրձին,  
Պոետ, դիցուր, դու փոքր ինչ հայտնեցիք  
Նորա արտաքին գեղեցկությունը,  
Բայց դու, ո՛վ պոետ, ինչո՞ւ լսեցիր  
Եվ հոգու կյանքը և մեծությունը

II.

Ես խոնարհում եմ, որպես թե հաղթված՝  
Շունք եմ կրկնում որպիս հաղթողի,  
Դափնի պակով, երեք կարդ հյուսած,  
Ես բոլորում եմ ճակատն նոր երգչի,  
Թե դա կարող էր երևան հանել  
Այն աստվածեղին հոգու հատկություն,  
Եվ այն սրբության եղեմ նկարել,

Որ երբեք շմտավ ոչինչ նենգություն։  
Կույսե՞ր հյուսիսի, ճանապա՛րն արեք,  
Ահա ձեր պարծանք—սա ձեր թագուհին  
Պետք է ճանաշեք. մի՞թե լզիտեք,  
Որ Սիրո տաճար սորան ասեցին,

### III.

Նա ման է գալի—և սիրո հոսանք  
Առատ թափում է յուր ճանապարհին,—  
Եվ ձեզ գրկում է մի վերին հրճվանք  
Եվ հաղթակա՞ն է շրեղ թագուհին,  
Բարձրագե՞ղ հասակ, հրաշալի կազմված.  
Եվ օրորվում է և բեկրեկվում է,  
Որպես մի ժաղիկ, զեփյուռից շարժած,  
Եվ աշեր կյանքով վայլատակում է:  
Մանո՞ւկ դու սիրո և գեղեցկության,  
Թող խաղաղ սահեն քո անմեղ օրեր,  
Թող աճե միտքըդ լուսով գիտության,  
Մաքուր, անարատ, որպես պարզ եթեր:

### III.

Նա ման է գալի և մատսող սրտերն  
Ահա մաշվում են սերից կաթոգին.  
Նա ծիծաղում է—և սիրո մատներն  
Գծադրում են նորա շրթունքին  
Մի ամբողջ դրախտ քաղցր համբույրի,  
Որ ես կարծում եմ ձեռք Արարշի  
Մի անգամ ստեղծեց Ադամի համար,  
Որ եվայի սեռն սիրով բարձրանար:  
Դու գեղեցիկ ես, ո՞վ թե առավել  
Ուաման շնորհով գեղեցկանալիր,  
Եվ քո բուրքերիդ, այդ քեզ իխսք վայել,  
Առաջնորդուհի հանդիսանալիր:

### IV.

Թե սպիտակափառ շուշան ձեռներով  
Առնեի՞ր այս թիրթս—քո սիրով գրած,  
Թե հոգի բերող կապույտ աշերով  
Նայեիր սորան,—ո՞վ իմ մեծ Աստված,  
Ուրբան հոգեսր ինձ հանգստություն,

Ո՞րքան բազդ, և հույս, և երանություն  
Կարող էիր դու ինձ հասուցանել:  
Ո՞վ կույս նազելի, թե ցանկաս հիշել  
Պուտի անուն, ինչպես մտածեց  
Եվ ինչպես մեռավ—կարգո՞ւ այս տողեր—  
Թո՞ղ ևս հնչեն պապանձած լարեր.  
Իմ քնարն կյանքը բեզ ընծա՞ սերեց:

1864 թվին.

## ՍԻՐՈ ԿՐՐՈՒՍ

Այն բողեից, երբ Սերըս մեռանլ,  
Աշխարհիս վերա շատ օրեր անցան,  
Բայց երրեր հոգիս չժիծադնցավ.  
Տխո՞ւր երազներ ինձ երկեցւն:

Եվ շնչեց զեփյուռ,—և սոխակն երգեց  
Խոր լոռության մեջ, և թնդաց անտառ.  
Իմ անդամներից ցուրտ սարսու վազեց,  
Եվ սոսկալի վիշտ և մաշի՛չ խավա՛ր...

Եվ այժմ շղթալքն անհաստատ էրանքի  
Տանում եմ վերաս, հնազանդ նորան,  
Եվ ես շնմ սպասում, որ ձեւն կույր բաղդի  
Սփոքը առաջիս ոսկի մեծության:

Ոսկի մեծության... և ինչո՞ւ ինձ այդ,  
Միթե դորանով կղարթնի հոգիս,  
Ո՞խ, շուտով շուտով մահվան որոգալթ  
Կծածկն ամպով հորիզոն կյանքիս:

Կհանդչի աստղըս... կծածկի արե  
Մայր մտանելով Հավիտենական  
Կհափշտակն ինձ քուն ծանրաթե,—  
Եվ շվարում եմ... որպիսի՞ վախճան...

Գիտեմ. կկանդնի կյանքիս զորություն,  
Կմեռնի մարմին, կփափ դիակ,  
Եվ անվերջ է այս հեղափոխություն...  
Բայց դու ո՞ւր, հո՞գի, սփինքս անգուշակ...

Կզիշե՞ս երգչիդ, կտխրե՞ս ծածուկ,  
Ծագանակահե՞ր կույս կապուտաշյա,  
Կուղարկե՞ս նորան երկու արտասուք,  
Երբ հավերժ սիրո սուրբ առհավատշյա:

Մոսկվայի մեջ, մի դաստակերտում,  
Գուցե, փայլում ես անհոգ Հրճվանքով,  
Բայց դու չես զգում, բայց դու չես լսում  
Երգչիդ մրմոնջը, շաղախված թույնով:

1864 թվին.

## ԵԶՎԻՏՆԵՐ ԵՎ ԶԵՅԹՈՒՆ

Այս ձեզ դպրաց եւ փարխեցւոց կեղծաւուց, զի յածիք բնդ ծով եւ քնդ ցամաք առնել եկամուտ մի. եւ յորամ ինիքցի, առնենք զնա որդի գենենի կրկին եւս տան զնեց:

Աւետարան.

### I.

Անա՛րդ ծառաներ, որ Քրիստոսի  
Աննախանձ ուսման խեղոնկ եր հոգին,  
Որ երանությունն հանդերձյալ կյանքի  
Տալիս եր միայն սուրբ Կաթոլիկին.—  
Արդյո՛ք, կրախսե՞ն կուրծքըդ կաշառած  
Մարդասեր դարիս ասող հոսանքներ,  
Կիշրե՞ն մարիդ կապանք ժանդուած  
Ել ժամանակը, և նորա փորձեր  
Բայց պատրաստ է նավին. արդեն, լողալով,  
Օվկիանոսի հերձում է ալիք,  
Եվ սպիտակափայլ առադաստներով  
Թռչում է ձեր հետ,—բայց ո՞ւր, շար մարդիկ:

### II.

Զեյթո՞ւն, սրբագան մնացորդ անցյալի,  
Տավրոս լեռների Հայ ազգ բնակիչ,  
Արթո՞ւն կաց.—գիտե՞ս, վերադ է գալի

Եղվիտ ամբոխը, զայլեր գիշատիչ  
Նոքա լուրջանց հետ շատ ոսկի ունին,  
Նոքա կշառամ ևն դորանով կրոն...  
Ականջ շղնես գեանաքարշ լեզվին,  
Թթի՛ր լոտիսին,—զինվորվի՛ր, Զելթո՛ւն  
Լայոլի ստրուկ, բարեպաշտ բուժն  
Փիտի նախատե քո կուսավորիչ,  
Որ կյանքիդ համար շխնալեց արյուն,  
Եվ բազմաշարշար եղակ բնդ փրկիչ:

### III.

Հարազատ եղրա՛լր, որդի բաջության,  
Թո՛ղ չկաշառե եղվիտի ոսկին  
Թո սուրբ հավատը, քո նըլիրական  
Ավանդություններ, քո եկեղեցի՛ն:  
Կարմրի՛ր, եթե պապի արբանյակ,  
Յուր ամսութապարոս որոդաւթներով,  
Կարաց քեզ որսալ. կարաց խայտառակ  
Հազթություն կանգնել, և, ծաղր առնելով  
Կործանել ամուր քո բնակարան,  
Ուր հազարավոր Սուլթանի զորքեր  
Մըով մաշեցան և սահանհցան.—  
Այսպի՛ս պիտ' լինի եղվիտի նետեր:

### IV.

Շատ ժամանակ է, որ Եվրոպայից  
Այդ աղվեսներն արտաքս հանվելով,  
Եկել են ձեր կողմն—շահպել ձեղանից,  
Առկածախնդիր եղվիտ մնալով:  
Ո՛վ Զելթո՛ւն, Զելթո՛ւն, վերչին շո՛մէ դո՞հիր.  
Զո՞հիր քո երկրին ո՛չ աճըսրշոին,  
Ո՛չ քո թշնամուն սատանայակիր.—  
Սուրբ անկախության, աղդիդ պարծանքին  
Բե՛ր դորան, Զելթո՛ւն.—թող գերեզմանի  
Տարածվի վերադ ապականություն.  
Ազատ ծնել ես,—թո՞ղ ազատ մնոնի  
Զելթունի որդին, քեզ անմահությո՞ւն:

### V.

Կդանե՞նք ձեր մեջ մենք Հայտառանի  
Ախոյանները, որ կյանք կնքեցին

Անմահ պարծանքով, և բանավորի  
Շղթալը ու կապանը գոսող փշրեցին.  
Ո'վ արդյո՞ք ձեր կուրծքն առաքինական  
Կիսանձե հրով, կարո՞ղ եք մեղ տալ  
Մի Ավարայրի նահատակ կարդան,  
Կամ թե մի վահան, առյուծ կատարյալ  
Թե սորա ինքիանը պետք է դադաղից  
Նորից գան հանդես, որ ստրկության  
Խորտակվին պարիսպը, որ Հայի կուրծքից  
Բխում է հորդառատ աղբյո՞ւր բաջության.

#### VI.

Ո'վ ազատություն, ուու սպառազին  
Տավրոս լեռներից մեղ երևեցար,  
Եվ արենարբու Աղիզն անօրեն\*  
Տարավ նշավակ, անկառ չարաշար:  
Աշխ, պահի՞ր և այժմ քեղ ծանոթ Զեյթուն,  
Տի՛ս, որբան վերբեր և որբան հարված  
Յուր մեջքի վրա տանում է մաշված,  
Եվ շոնի ոչ որ ո՛չինչ օգնություն  
Եղեռնազործ են իշխանը աշխարհի.  
Դորա շեն լսում մուրճերի դարեկեր,  
Որից գոսացած և արտասվալի  
Փշում են հոգին այդ անմեղ զոհեր:

#### VII.

Երբ պետք է լուս Անարդարություն,  
Ճնշող, խարշամող մտքի ծաղիկներ,  
Երբ գոսոզների խոլամտություն  
Պիտո է գրկե կորսաւան սովեր,  
Մինչեւ Ե՞րբ պետք է մնա զորավոր  
Չարության կոզմը, որ վանդակներով  
Կապել է մեր իսկըն, մեր հանճարն հզոր,  
Որ պետք է լցներ աշխարհ հրաշքով.  
Մե՛զ, որ միությամբ ձեռք ձեռքի տրված,  
Գիտության գրոշով մի սուրբ զո՞նդ կազմած,—  
Պետք է լուծեինը անլուծանելին,  
Եվ աստվածանա՞ր մեր ազատ հոգին:

\* ) 1862 թվին, օգոստոս ամսին, Զեյթունցիք շարդեցին տաճիկ զորապետ Աղիդ փաշայի կանոնավոր զորքը և շատ թնդանոթներ խլեցին:  
Այս հաղթությունը պիտո է տոնախմբվի Հայրենասեր շրջաններում, որպես փառավոր առհավատշա հայկական բաջասրտության:

Թայց ահա շատ մոտ արձակ ասպարեզ  
Բացվում է աչքիս Խոնում են ազգեր  
Ուրախ երգերով. նոքա պարզերես  
Չգիտեն, ի՞նչ է կապանք, շղթաներ...  
Ազատ են նորա... և ամենայն բան  
Շնչում է միայն սորբ աղատություն  
Եվ չէ երեսում բնության նշան...  
Սեր, և Արդար զործ, և Եղբայրություն  
Իշխում են դոցա.—և առհասարակ  
Մաղկում է Հանգիստ, և Բաղզ, և Վաստակ...  
Այո՛, սերմերը, կարծիմ, աճում են,  
Երբ ազգերն լուրյանց պիտ' կառավարեն:

1864 թվին..

## ԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

I.

Ո՛վ անհոգ տգետ և թեթևամիտ,  
Երբ պետք է դուրս գաս ուղիղ ճանապարհ,  
Երբ պետք է զարթնի քո անգործ հոգիդ,  
Ինչպես ես տանում այդ լուծը վատթար:  
Չէ՛, քո նպատակ պախարակելի,  
Եվ չոմիս առջևի մի այլ նպատակ:  
Ճակատիդ վերա ես նախառինըի  
Կարդում եմ միայն զզվելի՛ կապանք:  
Այսպես է պատու, ո՛վ թշվառական,  
Երբ անարգեցավ Աստուծո պատկեր,  
Երբ սորբ հանճարը բանականության,  
Ապականեցին ճճի՛ և ցեցիր:

II.

Ո՛վ տգիտություն, գագան ահավոր.  
Գու, միշտ փոխելով քո կերպարանքը,  
Թեավորվում ես և իս զորավոր,—

Որ թունավորես մարդկեղեն կյանքը:  
Եվ քո խորամանկ, քո շար մերենան  
Գիտե գրավել շողուն ձաճանչով  
Թուլլերի սրտեր, որոնց զրթության  
Տաճարն չկարաց ծավալել լուսով:  
Եվ ինձ շատ անգամ գու փորձ փորձեցիր  
Գրել պաշտոնյա քո անփառք կուբին.  
Դու, որպես սկարզ օր քեզ ցուց տվեցիր,—  
Բայց շատ վստահ էր իմ մատաղ հոգին.  
Նա դիտաց պատժել բաղցր առանան—  
Եվ նա որդեգիր գնաց գիտորդյան:

### III

Բացվի՛ր ընդարձակ, իմ հոգու տաճար,  
Կամիմ քաջությամբ զնալ ձանապարհ.  
Եվ շմեղանշել խղճիս սրբության  
Սրբի՛ր իմ առաջս. թող պարսավական  
Զրախոսությունը ինձ շխափանեն,  
Եվ զլիսիս ուղեղն թող շապականեն:  
Մարտի՛ր, մշակի՛ր իմ լայն առաւարեզ, —  
Կեցցե՞ Գիտություն—պաշտոնյա եմ քեզ:  
Խոստովանությամբ ծունը եմ խոնարհում,  
Որ գու ես միակ Արարիչ լուսո.  
Խելքիս բանալին քեզ եմ նվիրում.—  
Արա՛ ինչ կամիս—եղիցեն կամք քո:

### IV.

Երբե՛ք և երբեք խոնարհելու չէ  
Իմ պարանոցը աշխարհիս առաջն, —  
Թեև շարչարպիմ, թե օրս հառաշե.  
Աղա՛տ թող փայլե իմ կյանքի արեւ  
Կեղծավորություն, անարժան գործեր,  
Հողիս կաշտոել ոսկով կամ գանձով, —  
Ես պետք է խեղզեմ այդ անարդ կիրքեր,  
Որ կյանքին նայեմ համարձակ աշքով:  
Հաստատ բայլերով գործս կակսեմ,  
Թեև փշով լիք լիներ ձանապարհ.  
Արդար բրտինքով ինձ հա՛ց կճարեմ, —  
Եվ այնտեղ ինձ վարձ—բարի և ո՛չ շար:

# Խ Ր Ա Տ

Ես ձեզ ցավում եմ, դուք մի հետևեք  
Դիշերաշըիկ անառակներին,  
Որոնց մեռելու անձը կիսաբեկ  
Լողում է անկյանք ախտերի ծոցին.

Որոնց արհեստն է նշավակ Հաղթություն,—  
Խլել ամոթը ողջախոճակութիւն,  
Եվ որոնց կյանքի գարծունեաթյուն  
Անմիտ ցնորք է—Յավասար զբո՞յլի:

*1864 թվին*  
*Կուակով՝ դաստակերտում.*

\* \*

Որքան և պերճ չզարդարվես,  
Բոլորն զուր է, սիրելի.  
Որքան հասակիդ չըծոմըսես,—  
Սյադ շորերն քնզ չեն գալի:

Գեղեցկությունը չէ կարստում  
Փայլողության արտաքին.  
Միայն չտեսն է պահանջում,  
Որ աղջիկներն զարդարվին:

Եվ մեզ շուտով հավանելի,  
Թե ներկա էր պարզություն,  
Թե քանցը քո մենթանի  
Չլիներ այնպես ոլորուն:

Եղի՛ր այնպես, ինչպես որ կա՞ս,  
Քո գործը չէ գրավել:  
Ապա թե ու—ես հանապազ  
Կամիմ անձը պարսավել:

*1864 թվին.*  
*Ամառանոցում.*

## ԱՆՏԱՌԻ ՄԵԶ

Ք'զ գու վաստակած օտար անցավոր,  
Ե'կ, հանգստացի՛ր, այստեղ կեցություն  
Կարող ես գտնել, քեզ հովանավոր  
Ելինեն ժառեր, և մի զվարթուն  
Ոզի կսահնաս:—Արրի՛ր, ներշնչի՛ր  
Թարեխառն զեփյուս և օդ բաղցրության:  
Թի հիվանդ ես գու—ինձ հավատացի՛ր—  
Քո զգայարանը՝ և քո զոյություն  
Եվ կնորոգվեն և կառողանան:  
Եվ մի բարի քուն այնքան անդորրիկ  
Կիակեն աշերդ, մինչ վարդանման  
Այդը կրշողա, և նորածազիկ  
Կավետե քեզ օր Այստեղ, սիրելի,  
Թուշում են ժամե՛րն աննկատելի:

1864 թվին.  
Ամարանցում.

## ՄԵԾ ԹԱՏՐՈՆԻ ՄԵԶ

I.

Նայեցե՛ք աշ կողմ—առաջին հարկում:  
Դիտակ ուղղեցե՛ք, մարուք աղավնին  
Անզույգ շնորհով է գեղեցկանում:  
Մաղկում է գարուն նորա շրթունքին:  
Զկարծե՛ք, որ սա լիներ նոցանից,  
Որոնց բարբն ու վարբն է կասկածելի,  
Որ խորհրդավոր այն բողի տակից  
Աշքեր առնելով շատ ամոթալի:

II.

Որ վաճառելով և խիղճը և սեր,  
Աշխարհիս վերա այլ արվեստ չունին,  
Միայն զգվելի անպարկեց հույսեր

Յուրյանց գլխի մեջ պտըտվում էին,  
Որոնք պատրաստ են որոգալթ լարեւ  
Եվ փորձանքի մեջ ձեր անձը ձգեւ,  
Որ ընդդեմ կոչման գեղեցիկ նեռի  
Մեղքեր են գործեւ ձեզ անբուժելին—

### III.

Ո՞վ, թե մեզի մեջ այս կարծիքս ծագի,  
Նա ինքը պիղծ է և չումի հոգի。  
Ազնի'վ պատանիր, ատեցե՛ք դորան—  
Այդ գունատ ժառանդ հեշտասիրության  
Նա, աշքերը ցած, այնքան երկշոտ էր,  
Որ թե անցնելով հայացը ձգեիր,  
Որպես մի սալոր, շառագունում էր,—  
Անբարբա՛ռ էին շրթունք գեղալիր

### IV.

Համեստ է բարբը և բաղցը շարժված,  
Նորա պարանոցն է շուշանագեղ.  
Աշքեր կենդանի, սիրով ներշնչած,  
Եվ նորա վերս ամեն բան շքեղ:  
Շատ ախտաբորբոք երիտասարդներ,  
Մաղկած մանկության վասուն շնորհով,  
Եվ շատ մեծատունք, և շատ հարուսաներ,  
Ոսկու բոնության դալաճանելով,—

### V.

Բախտավոր էին, թե այդ կախարդիւ,  
Այդ մաքուր կուսը մի ժպիտ բաշխեր,  
Եվ նորա պատկերն, այնքան գրավիշ—  
Ամեն ո՞ք յուր մեջ գրոշմած ուներ  
Ահա վարագույրն ընկալ թատրոնի,  
Ողբերգությունը վերջացավ ահեղ,  
Բայց ոչ որի սիրտն ուրիշ վիշտ շունի,  
Թե ևս աեսներ աղջիկդ անմեղ:

# ՊՈԵՏԸ, ՆՅՈՒԹԱՊԱՇՏ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ

I.

Բայց դուք իմացե՞ք, որ այս օրինակ  
իմ սովորությունս—անդադար շրջել,  
Անընդել ձորին, անմարդաբնակ,  
Որպես սիրելուս այցելու լինել,  
Ազրյուրի կողքին նստել խոխոջում,  
Եվ լսել նորա տրտում շշնչյում,  
Արժանալ Հովվի սրտաշարժ սրնդին  
Եվ գգվել սիրով մայող գառներին,  
Հեռանալ մարդից, անտառ երազել,  
Օրով տաղտկանալ, գիշերով սթափվել,—  
Իմացե՞ք, գեռ այդ չէ՝ նշանակում  
Որ ես անդորժ եմ, մենակ աշխարհում,—  
Ո՞ւ, այդ այն է, որ վառ է միշտ հոգիս  
Եվ շատ ցավո՞ւմ եմ քեզ, ծիծաղելիս:

II.

Բայց դու, որ անարդ ճանապարհներով  
Հուսահատվել ես աշխարհի կյանքից,  
Որ Կայենի պես աճով ու դողով  
Փախչում ես արդար ընկերությունից,  
Որ օր ու գիշեր ցուրտ, որպես դամբան,  
Հաշիվների մեջ թաղված ես հոգով,  
Որ անզգա ես և, որպես անբան,  
Զկամիս գրկել ընկերդ ջերմ սիրով,  
Կեղծավոր, խավար և արծաթասեր,  
Դո՞ւ ես խորթ որդին, դո՞ւ ես անընկեր:  
Տե՛ս, ի՞նչ անտառ է, ի՞նչ արձակ հովիտ,  
Ի՞նչ անեմ, ո՞վ մարդ, անկյանք է հոգիդ:  
Ա՞խ, բնության հետ, և բազզավոր եմ—  
Իմ տիուր տաղերս թո՞ղ ես կցորդեմ:

III.

Եվ նյութապաշտը չունի պատասխան。  
Մեռած է հոգին. միտքը գոսացած  
Խավար ախտերից ընշասիրության,  
Պատճառ, փողն է նորա մեծ Աստված:

Նստած է պոետն և մտածում է.  
Առվի ալիքը, մեղմ թավարիկուլը,  
Նորա մտածմունքն հափշտակում է,—  
Եվ նա երգում է առվի հետ սիրով:  
Թայց առա կյանքի դորժերից բրտնած,  
Եվ հասարակի օգտին պարապած,  
Հառաջ է գալի ժիր Քաղաքացին,  
Առողջ, անտրտունջ և հազթամարմին:

IV.

«Ո՞չ Դու և ո՞չ Նա որդի բնության,  
Եվ փայլելու չե ձեր/պիսի վերա  
Սուրբ արեգակը բարերախտության,  
Զեր համար, ասեմ, պայծառ օր չկատ  
Ես ևմ նաւազատ մշակն աշխարհի,  
Եվ իմ կյանքի մեջ ամեն մի վայրկան  
Չափած կշռած է և յուր տեղն ունի.  
Ես անձնազո՞ւ ևմ նասարակորչան,  
Ե՞կ, Պոետ, բաղար, այնտեղ դո՞րժ զո՞ժիր,  
Հասարակի բաղդն ու օգուտն երգի՞ր.  
Դու այն ժամանակ անզամ ես ազդի,  
Եվ արժանի ես մեր սուրբ հարգանքին—  
Այս Քաղաքացին ասաց պոետին,  
Ծառ' պայլերով գնաց յուր դո՞ժին:

1864 թվին  
Բոգորդոսկ.

## ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՆՈՐԱ ՈՐԴԻՔԸ

Եվ գեղեցիկ է Հայաստան աշխարհ,  
Թայց գեղեցիկ չեն նորա բուն մարդիկ  
Հայաստան կանաչ, Հայաստան դաշտ,  
Թայց չոր ու ցամաք նորա խեղճ որդիր:

Ահա սթափված ազգեր ամենայն  
Դիմում են առաջ հզոր բայլերով,  
Ահա՝ բարձրացավ գրոշը ազգության,  
Թայց Հայն բնած է կորսույն քնով.

1864 թվին  
Ամառանոցում.

# ԱՆԱՀԻՏ

Ո՞վ դու Անահիտ, դուստր ոսկեծին,  
Ո՞ւր է քո զարդերն, դործած դոհարից:—  
Ճակատը սեղմած ծունկերի միջին,  
Արյունո՞ւ շիթեր ծաղկում են աշբից:

Ո՞ւր թաղավորներ հարազատ զորբով  
Սուրբ հանգստությանդ արթուն զ հապան.  
Նոքա ծածկվեցան մահի խալարով,  
Քեզ միայն մնաց թախիծ անվայսան.

Ո՞վ դուստր լուսո, չընա՛ղ արեգակ:  
Այդ ինչպե՞ս եղավ, որ անխիլն ռաւդոր  
Դալաճանեց քեզ, երկնի կապուտակ  
Զլացավ քո փառք—անկար գո՞ւր բանտի:  
1864 թվին.

## ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Երևակայական)

Ո՞վ կույս մանկագեղ, կո՞ւյս արևելքի,  
Հրեշտակ սիրո—բայց ո՞չ թհակ'որ.  
Մի հատիկ գոհար փշոված թաղի,  
Լույս ես իմ հոգու, տաճա՛ր փառավոր:

Անձեզութենով փայլում ես պայծառ,  
Որպիս շուշանը հայոց դաշտերի,  
Քեզ այդ շուշանից, հողո՞ւս սիրահար,  
Հյուսում եմ պսակ անթառամելի:

Առաջին անդամ ես այն անմարմին  
Քնքությունը տեսա կանացի,  
Ա'յս, տեղատու է շրթունքիդ վարդին  
Նրագեղ քո՞ղը արևաբացի:

Ես շատ նայեցի խաղաղ աշքերով  
Զմայլիւ սիրիդ փայլատակության,

Վիշտըս վիարատեց գարնան զեփուռով  
վա՛ռ ծաղկահասը վա՛ռ գեղեցկությանը  
ես աշխարհիս մեջ շատ կանայք տեսա,  
եվ շատ կանանց հետ ես սիրանվեր  
Զգացմունքներով ոգեխառնեցա,  
Բայց այժմ նորա—նորա մի ստվեր:

1864 թվին.

Ամառանոցում.

## ԵՎ ՆԱ ՄԵՌԱՎ

Ո՛վ գու նազելի, որ երգիչն այնպես  
Այրվում էր ախտով դրկախառնել քեզ,  
Որին անկաշառ պարգևել էր սեր,  
Անտ' ես արեցիր բո ոսկի հույսեր:

Երբեմն հրեշտակ, երբեմն շար դե  
Զեացար նորան անհաստատ սիրով.  
Շատ վշտացրիր աշխարհիս առչե,  
Վշտացա՛ր և գու, բայց մահի գնով:

Մինչդեռ Փերոսը ոսկեվառ կառնով  
Նոր արշալուսի բացում է դոներ,  
Դամբանիդ վերա չնո՞մ արտասուրով  
Թացում է երգիչն թարշամած վարդեր:

Դու դագաղումն ես—բո պատենիրն պայծառ  
Կրում եմ իմ մեջ, որպես սրբություն,  
Ո՛վ այսուհետեւ իմ սրոտի համար  
Կարող է բերել նոր հիշողություն:

Ո՛վ նախամեծար ընկեր սիրելի,  
Ինչո՞ւ փոխեցար գու այս աշխարհից,  
Ինչո՞ւ իմ կուրծքը այնքան ցավալի  
Ճնշում է մի նոր, մի կծու թախիծ:

Գեղեցիկ է կյանքն, բայց, ա՛խ, նա չունի  
Ո՛չ հաստատում կայք, ո՛չ տեսդություն.  
Ա՛խ, թե նազելիս մնար կենդանի,  
Եվ շցամարե՛ր նորա զորություն:

Սպիտակ սավան քեզ վերջին ընծա՛,  
Եվ խոնավ դամբա՛ն և մի հավերժ քուն,  
Կարծեմ, սոցանից ավել բան չկա,  
Թեև, ասում են, կա այլ դրություն ...

Եվ դո՛ւ, մեզ երգող այս տիտր խոսքեր,  
Ծուտով կստանաս քո կյանքի վախճան.  
Ծուտով կլոեն բնարիդ լարեր,  
Որ այնքա՞ն հնչեց մեզ տա՛ղ արտմության:

1864 թվին.

## ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Առ'ւրի արբեցության անմեղ տարիներ,  
Մաքր'ւր հրճվանքի դու անհոգ օրեր,  
Զեզ երգել եմ ես. երբ անուշահոտ  
Ժպտում էիր ինձ, որպես առավոտ:

Պայծա՛ռ մանկություն, ո՞ւր է ներդաշնակ  
Քո մեղեդիքը, քո թնրուշ վիշտեր.  
Եվ հով, և արև, և սեր անուշակ,  
Եվ երջանկություն, և դալար վարդեր:

Թե դուք գնացիք, անցաք հավիտյան,  
Եվ դառնալու չես, իմ քաղցր երազ,  
Ա՛խ, մի՛թե, Աստված, ալիք ծերության  
Պետք է ծածկեն ինձ,—ո՞վ դառն պատռհամ:

Ա՛խ, մի՛թե և ես մահի զգեստով  
Պիտո է կաղամ մի ոտի վերա.  
Մի՛թե վիզըս ծուռ, գողզոջուն ձեռքով  
Նեցուկ պիտ առնեմ, որ փոքրիկ ուժ տա:

Արի՛ մանկություն, արի՛ և այսօր.  
Թո՛ղ մի ժամ ևս լինեմ բախտավոր.  
Ծաղկազարդ գարնան ուսիների տակ,  
Թո՛ղ դարձիդ կենաց լցնե՛մ ես բաժակ:

Յոլացե՞ր փոքր ևս, բոպե՞ր անդին,  
Այցելո՞ւ եկեք նվաստ ձեր երգչին,  
Հոգու նպատակն փառը՛վ կնքեցե՞ր,  
Եվ այն ժամանակ բարյա՛լ մնացեց:

1864 թվին.

## Ս Ի Ր Ա Վ Ե Պ

Նա սեղմում էր ժպտալով,  
Կուրծքի վերա իմ ձեռք,  
Եվ խիստ ազնիվ զարձվածով  
Պատմում էր. ի՞նչ է սերը,

Նա ասում էր. սերն է կրակ,  
Որ, թե վառիչ նյութ շտան,  
Նույնպես հանգչում է արագ,  
Որպես կայծ մի էլեկտրան:

Սերն է աղբյուր քաղցրության,  
Սիրող սրտի արշալույս.  
Սե'րն—վառ լապտեր մանկության,  
Մատադ կյանքի ոսկի հույս:

Սիրո ձայնն է կախարդիչ,  
Նորա հնչմունք խանդակաթ,  
Բայց առավել զարմուիչ  
Սրբ լեզվով է հարազատ:

Սիրի՛ր, որքան կարող ես,  
Որքան փառում է արև  
Կյանքիդ օրերն նետի պետ  
Բոլուսը են արագաթեւ:

Կզա մի օր, մի սե օր,  
Երբ մեր այդը ոսկնշող  
Կխավարվի,—և անզոր  
Մեղ կծածկե մի բուսն հող:

իմ սիրելի, զդուց կոց,  
Որ լեզուդ շար շխոսն,  
Պատճառ, ոչինչ դհու շասած,  
Ընկերոք արտասկում է:

1864

## Ա Ա Յ Ի Ս

Երկինքը պարզ, օրն մայիսյան,  
Ես ճեմում եմ բուրաստանում,  
Սիրոս ուրախ է, ես, ժպտալով,  
Վարդ եմ բաղում, փոնջ եմ հյուսում:

ԲԿԲԿ զեփյուտ, կանալ ափեր  
Անուշության հոտ են փշում,  
Եվ սոխակի դալլայլիկը  
Քաղցր ականջիս է հասանում:

Նա մի վարդից գեպի մյուսն  
Ոստոստում է ուրախալի,  
Նա հնչում է դաշնակաձայն.—  
Ինչ յուր արվե՛ստն է ցույց տալիր

1864 թվին.

## ԱՐԱՐԱՏԻ ՇՐՋԱԿԱՅՔԸ ԵՎ ՆՈՑԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

I.

Քաղցրը բամբիոռվ այստեղ վիպասանք—  
Այդ մեծ սոխակներ հին Հայաստանի—  
Երգեցին Հայի և կառք, և պարծանք,  
Եվ հաղթանակներ թագավորների:

Այդ վայրենացած քարանձավներում,  
Ուր այժմ միայն բռւեր են կհնում,  
Հսկում էր թնդյուն կորով նետերի  
Հայոց մեծափառ, գյուցաղն Մեծերի  
Ա՛հ, օրեր դնացիք և այդ խորշերին  
Մնաց մի տիտոր տպավորություն...  
Նորա հիշեցին յուրյանց սանկալին...  
Քայլց ձմեռն փշեց, ծածկվեցավ գարուն:

### II.

Այդ լուս տեղերում կարող եք կարծել/  
Որ գեռ չէ անցել մարդկության համար  
Դյութական գարը. և չե՞ն առասպել  
Առասպելները, որ հրաշարայ/  
Ավանդեցին մեզ անցած է մարդիկ,  
Երբ գերբնական երկութիւներով  
Երեան եկան հազարավոյ դիք,—  
Որոնց պաշտեցին երկյալուած սրտով,  
Այստեղ բնությունն է ամենախշան,  
Եվ շատ նման է այն բռնավորի,  
Որ անգութ լախտով հարստահարության  
Կամեր խլել կամք հպատակների

### III.

Բարձր սարերի ձյունապատ շղթան,  
Ուղնս մի տիտոն երկինք վերուղղած,  
Եվ խոր անդունդներ, ուր հազարամյան  
Անշունչ լություն թեր տարածած  
Թագավորում է և բարուտ ձորեր,  
Ուր, որպես առյուծ, բաշ ծածանելով  
Վազում են արագ, փրփրադեզ գետեր,  
Գիշելով ժայռին և փշրվելով,—  
Այս բոլորն, ասես, հափշտակում են  
Անկախությունը ազատ էակի.  
Նա պիտ' հավատա, պաշտե կուրորեն,—  
Այստեղց ազրուուր տգետ խավարի:

1864 թվին  
Ամասնոցում.

## ԻՆՔՆԱԳԵՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կան րոպեք, երբ ամեն բան  
Ենթարկելով քննության,  
Երկմասում եմ, և, համարյա,  
Վարարմունքիս ելք չկա:

Ես պնդում եմ, որ կանխակալ  
Մտքիս կարծիքը հերքեմ,  
Եվ գիտությամբ հանդիսանալ,  
Որ իմ անձը նանաշեմ:

Առանձնացած ես մտածում եմ,  
Որ գոյությունս զարգանա.  
Այդտեղ ես եմ, այդտեղ ես եմ,  
Այդտեղ չկան դու և նա:

Ես եմ էակ, և իմ մեջ կա  
Տիեզերքի մհծություն,  
Իմ մեջ Աստվածն այն գերակա,  
Ալսինքն նշաւարտուրյուն:

Ես մտնում եմ սուրբ տաճարը  
Առարկային մտածուրյան,  
Եվ քննում է իմ նանեար  
Անշարժ օրենք գոյուրյան:

Ես չեմ նայում նյուրի վերա,  
Որպես ծնունդ դիպվածի  
Ես խնդրում եմ պատճառ նորա—  
Հնդհանուր կապ տիեզերքի:

Եվ տիեզերքն է զիրք անագին.  
Ես սերտում եմ ալփարետ,  
Որ վանկ կապն իմ սուրբ հոգին,  
Որ զրուցեմ նորա հետ:

Մե՛ծ է իմաստն այդ մհծ գրքի,  
Մե՛ծ է նորա Հեղինակ,  
Ես անցավոր—որդի—հոդի.—  
Նա Անտաց—անժամանակ:

Նա պատճառ է ինքը յուրյան,  
Միշտ Զուրույուն գործունյա.  
Նա ներքին հիմք և հաստարան  
Եվ ևս շինված եմ նորա:

1864 թվին  
Ամառանոցում.

## ՄԻ ԶՎԱՐԹ ՄԱՆԿԱՆ

Ուրախություն բեզ անպակա՞ս,  
Ո'վ դու մանուկ սիրելի.  
Ծլե՛ս, ծաղկե՞ս և ծերանա՞ս,  
Տալով պտուղ արժանի:

Որպես ծաղիկ, մանուկ, բաղցր ես,  
Եվ շնորհագիղ, որպես օրի  
Մանուկ, մանուկ, ինձ շխարես,  
Միշտ կաց այդպես լուսավոր:

Նայի՛ր վերե, տե՛ս, ի'նչ սիրուն  
Այնտեղ փայլում են աստղեր,  
Եվ անթի՛վ են, և շողշողո՞ւն,  
Որպես երկու բո աշեր:

Այնտեղ, Հոգիակ, բնակվում է  
Մեր սուրբ Հայրը երկնքի,  
Նա՛ է, որ մեզ ուզարկում է,  
Եվ Կյանք, և սեր, և Հոգի:

Նա ծագում է յուր արեգակ  
Ամենալն օր բո վերա,  
Որ դիարձանաս, որպես թունակ,—  
Օրհնի՛ր Անուն սուրբ նորա:

Ունի Որդի մի Միածին,  
Նա՛ է փրկիչ աշխարհի.  
Նա խաչ ելավ, տվեց Հոգին...  
Որ դու լինիս մա՛րդ քարի:

Նա սիրելով յուր թշնամիք,  
Օբհնեց ևաշխն և ներեց,  
Եվ մեզ գրեց յուրյան որդիք,  
Միրե՛լ միմյանց պատվիրեց:

Նա հեղությամբ հաղթեց Զարին,  
Եվ մեզ ասաց, որ և մենք  
Հետևենք այդ օրինակին,—  
Զհպարտանա՞նք մենք երբեք:

Մանո՛ւկ սիրուն, աղոթք արա՛,  
Երբ գու գլուխդ խոնարհած,  
Համբուրում ես պատկերդ ահա՛,  
Ոսկենկար զարդարած:

Եվ ժպտում է, որպես շուշան,  
Անհոգ մանուկն մոր գրկին.  
Այսպես թռչնակը ճյուղի վերան,  
Օրհնում է յուր հրեշտակին:

Եկե՛ք Հայոց Եկեղեցի.  
Այնտեղ կտեսնեք զմայլված  
Պայծառ դեմքը այդ երկնացի,  
Գարնա՞ն վարդը կիսաբաց:

1864 թ.

## Ա Ն Բ Ա Ղ Դ

Նա աղջի՛կ էր այնպես կայտառ,  
Լի մանկական աշխուժով.  
Նա նայում էր այնպես պայծառ,  
Մի շա՛տ պարկեշտ հայացքով:

Նա անմեղ էր. անդորրություն  
Միշտ ողջունում էր նորան,  
Նա ծաղկում էր ուրախ, անհոգ,  
Որպես վա՛րդը մայիսյան:

Մինչ ժագում էր արեգակը,  
Մինչ ժպտում էր առավոտ,  
Երգ երգելով նա ճեմում էր  
Սաղկոցի մեջ բաղցրահոտ

Նա թափում էր սիրո շունչը  
Մանուշակների վերա,  
Անփորձ սիրտը թրթում էր,  
Որպես թռչնակն մոտակաւ:

Բայց այժմ անսե՞ր, ի՞նչ հոգու վիշտ  
Նշմարվում է աշքերում.  
Քնքո՞ւշ էակ, թառամել է  
Այդքան մանուկ հասակում:

Գույնը թռած, անբախտության  
Կնիքը դրած է ճակատին.  
Կյա՞նք չեն խոսում անմահո՞ւթյան  
Շրթունքը այն երկնային:

Շատ կուական, անմեղ հույսեր  
Խավարված են և շիշած,  
Շատ պարզամիտ գգացմունքներ  
Նորա' մեջ թռմավորված:

Այսպես լինում է մահապարու,  
Երբ, հանելով խոր հոգոց,  
Դահճի կացնին նա լուռ, հանդարտ  
Խոնարհում է պարանոց:

Ա'խ, ո՞ւր գնացին, իմ գեղեցիկ,  
Խաղաղության վարդերը.  
Այդ ի՞նչ որպեր շարաբաստիկ  
Խլեցին քո հանգիստը

Եկեղեցում լուռ կանգնած է,  
Անշարժ, որպես գերեզման,  
Փեսայացվի խելքը գնում է,  
Զեւը բռնած աղջկան:

Այդ փեսա'ն է, ա'խ, այդ փեսա'ն,  
Որ տիբում է աղջիկը.  
Նորա սիրտը, նորա կամքը  
Վաճառե՛լ են ծնողիք:

1864 թվին

## ՀԱՆԳԻՍ ԻՄ

Դու իմ Հանգիստ, Հավատ և Հոյս,  
Սով անսահման բարության,  
Դո՛ւ, դո՛ւ դարձյալ սառը հոգու  
Կյանք ես ցողում հարության:

Յողա՛, աղբյուր կենդանության,  
Յողա՛ առատ հոսանքով.  
Եվ իմ ժամերը դառնության  
թո՞ղ խորտակվին բո՞ շնորհով:

Ե՛կ պոետի անկեղծ աշխուժ, -  
Եվ ապագա օրերին  
Ես կավանդեմ անուն անո՞ւշ  
Կապուտաշյա գեղեցկին:

Այն գեղեցկին, որին այնքան  
Դափնի պսակ հյուսեցին,  
Եվ պատանիք ախտաբորբոք  
«Պարտեզ փակված» կոշեցին:

Որի աշերն շողշողում են,  
Որպես աստղերն երկնքում,  
Հայացքի մեջ աստվածեղեն  
Բոլոր դրա՞խտն է ցոլանում:

Մե՛ծ են երկինք, մե՛ծ է աշխարհ, —  
Բայց սիրտս մեծ է նոցանից,  
Եվ առավել իմ սերս պայծառ  
Այն լուսավո՞ր աստղերից:

Շատ գանձեր կան, շա՛տ և ակներ  
Օվկիանյան հատակում՝  
Շատ զգացմունք կան, շատ խորհուրդներ  
Սիրո՞վ վառվածի սրտում:

1864 թվին,

# ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Նմանողություն Դոքըուլուրովի „Մոլոյ  
друг я умираю,, тутъ тощъ ишаинавопрѣнъ”

Ազնիվ ընկեր, մեռանում եմ,  
Բայց հանգիստ եմ ես հոգով.  
Եմ թշնամիքս ես օրհնում եմ,—  
Օքնում եմ բեղ Աստուծով:

Հեռանում եմ, անդի՞ն ընկեր,  
Չգնահատած ոչ որից.  
Բայց հավաստիավ անձնանվեր  
Ազդիս մշակ կհաշվիմ:

Ազնիվ ընկեր, շմուռանաս.  
Անդավաճան, չերմ սիրով  
Ես սիրել եմ իոն հայրենիք,  
Գնա՞ և դու նույն շավդով:

Խեղնուրյունը հայոց ազգի  
Կարեկցաբար մտածի՞ր.  
Ոսկեգրքուկին Եղիշեի  
Քաջ առաջնորդ բեղ ընարի՞ր:

Այնտեղ սուրբ կրոն, աղք միաբան  
Ազատ կամքով և խիզճով.  
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,  
Յուր խնկելի բաշելով:

Հայրենի՞ր,—սեղան սրբության—  
Ես Աստուծո առաջե  
Շատ կաղաքնմ, շատ կարտասվիմ,  
Որ ծագե բեղ նոր արեւ:

Իմ մտերիմ, մահըս մոտ է,  
Բայց հանգիստ եմ ես հոգով,  
Որովհետեւ խիզճս արդար է,  
Ճշմարտության շատագով:

# ԳԵՐԻ ՀԱՅԻ ԱՆՈԹՔԸ

Գո՞՛ք հնը քեզնից, ո՞վ թարերար,  
Օրհնյա՛լ լինի միշտ քո անոն:  
Թո՞ղ արդար արհըդ այդ լուսավառ  
Թերե յուր հետ մեջ փրկություն:

Ո՞չ, ուրախ օ՞ր շընորհիր, Տե՛ր,  
Մեր խղճալի հայրենիթին:  
Նորա սիրուն սարեր, դաշտեր  
Օրհնում են քեզ եռանդագին:  
Մի տար, Աստվա՛ծ, որ կործանվի  
Կուսակըրոն Հայոց աշխարհ.  
Թո՞ղ քաղցր անուն Հայաստանի  
Մնա կենդան միշտ մեր համար:

Բա՛ց դեղ դուռն քո ողորմության,  
Հեռու, Մովսիս մեզ ուղարկի՛ր,  
Որ այս դժնյա Եղիպառոսից  
Ավելյա՛ց մեզ տանեն երկիր  
Ո՞չ, այն աշխարհ, ուր առաջին  
Քարողեցավ Ավետարան.  
Փայլմց դիուշը ծիրանածին,  
Կանգնեցավ Խաչ բրիստոսական:

Ուր նվիրական Նահատակներ  
Դեմ վիշապին դինվորեցան  
Պատերազմի կանաչ դաշտեր  
Նոցա արյունով ներկվեցան:

Ուր հայրեր մեր երանելի.  
Գրիգոր, Ներսես, Մերորապ, Սահակ,  
Մեծարեցին անուն աղպի,  
Եվ ննջեցին ծաղկապսակ:

1864 թվին.

Մ Ի Լ Ր Դ Ա Տ

I.

Ահա գեղեցիկ մի թերակղզի  
Լի հարավային տեսարաններով:

Աշքիդ առաջև կապույտ գաշտ ժովի,—  
Դաշտը ծածկված է անթիվ նալերով...  
Եվ ես տրտում եմ, բայց իմ տրտմություն  
Անհետանում է չգիտեմ ինչո՞ւ.  
Ճակատս պարզեցավ, և ուրախություն  
Տեսի՛ք, գալիս է, կարծեմ, այցելու  
Մանոթ է այդտեղն մեղ պատմությունից.  
Ալեոր դարերն չեն համարձակվել  
Հնչել հիշատակն երկրի երեսից  
Եվ ավերակի ոտի տակ դնեմ

### II.

Այստեղ Պոնտացին—փառավոր Հերոս,  
Նենգության նյութը կարող Հռոմի,  
Մեծ հականակորդ, որով Կեսարոս  
Զկարողացավ ստանալ դափնի.  
Այստեղ Միհրդատ, նորա Լեգեոն,  
Պատերազմի փառք և բազդի հանճար  
Այստեղ մթնել է դոցա հորիզոն,  
Եվ ահա սափորն և հետք շիրիմի  
Նայեցե՛ք այստեղ, զարթնել կարող չեն,  
Եվ հող են նորա, երկրպագեցե՛ք,  
Եվ թող ձեր սրտերն փորբիկ հառաշեն,—  
Հերոսի նշանարք, մարդի՛կ պատվեցե՛ք:

### III.

Անկավ Միհրդատ, անկավ և Պոնտոս,  
Եվ ո՞ւր է հետքը նախկին մեծության.  
Ո՞ւր է քո պարծանք, ո՞լ աշխա'րհ գոռոզ,  
Երբեմն կլանքի դու բնակարան:  
Ո՞ր փիլիսոփոս, կամ ո՞ր իմաստուն  
Կարող են ժամ մի կենդանացնել,  
Այս դամբանական խորին լոռություն  
Հարության կյանքի թնդյունով լցնել,—  
Անմի՛տ ցանկություն, և տխուր հոգով  
Իմաստափերել մնաց մեղ միայն,  
Թհե՛, և մե՛նք այս օրինակով  
Պիտո է գրկենք հո՛ղն ոշնչության:

# ՄԱՍԻՒՄ

## I.

Մասի՛ս, քեզ միայն աղոտ երազով  
կարող էի ես երևակայել,  
եվ արվիստավոր, սերտած տո՛ղերով  
Քո գեղեցկության մեծությունն երգել  
Հեռու ցնո՞րներ, ես ականատես  
Նշմարում եմ լյառն. կանաչ ասպարեզ:  
Որպես մի կապերտ, ձգվում է այստեղ,  
Եվ Հայաստանի ես արյունահեղ  
Հիշում եմ վիճակ: Որբա՞ն ոսոխներ  
Փորձել են այստեղ յուրյանց զորություն,  
Եվ Փակեղ, և Խաչ, և ատրուշաններ  
Կարմիր առվակով ներկե՛լ է արյուն:

## II.

Այստեղ երկրորդ Հայրն մարդկեղեն ցեղի  
Տնկեց բազմաճյուղ ուոր խաղողի,  
Որի տերեսով իսկույն ծաւծկվեցավ  
Նույն բոպեին, երբ որ թմրեցավ  
Զեզ լավ հայտնի է, որ ես մի հերձված  
Սորանով կրոնիդ պատճառելու չեմ.  
Ասովածաշունչի խոսքերն եմ կրկնում,  
Եվ ավանդություն, դարերից եկած,  
Թեև ատելի բան չեմ համարում,  
Եվ մեծ հանցանը չէ այդ նոյին, կարծեմ,  
Թեպես և,—որդին Հորն հետեւելով,—  
Աշխարհըս լցվեց դո՛ւյն իսկ արվեստով:

## III.

Թո՛ղ Թաջը, ո՞վ Մասիս, շթեապարեն,  
Որպես այցելու քո քարայրներին,  
Թո՛ղ Մուզաները բնակիշ շինեն  
Անմարդաբնակ քո մութ խորշերին,  
Թող այսուհետեւ, թողած բոլորից,  
Մերկանդամ մնաս քո նախնի փառքից,  
Մունըր խոնարհած, ես ինձ բաղդավոր  
Այժմ կարծելով, քան մի այլ երդին,—  
Քեզ հարկ եմ տալի. դու մինչեւ այսօր

Սովոր ես ազդել հմայրդ թուի՛շ,  
Ել թոթովում եմ, որպես երեխա,  
Քե՛զ, Աղա՛տ Մասիս, վերջապես տեսա:

IV.

Տեսա ահավոր քո ստորոտներ,  
Ամպի մեջ կորած քո ցոլուն կատար,  
Ել առողջացան բնարիս լարեր,  
Ել քեզ երգ Հյուսից խոսքերով հարժարտ  
Որբա՛ն երկուոված գացումներով,  
Աղոթք շրթումքին, գողգոչ ոտներով  
Մոսկեցել է քեզ Հայ ազգի որդին,  
Որպես այցելու խեղճ Արտավազդին:  
Կրծեցե՛ք, չներ, ժանդուած շղթաներ,  
Թող լույս տեսանն անիծյալ ժառանդ\*.  
Այժմ Հայաստան չունի դպրուիններ,  
Որ զորանալին սոսկալի կապանք:

1865

ԽՈՐՃՐԴԱՎԼՈՐ ԳԻՇԵՐ

I.

Ա'լս, ես չեմ կարող շգովիլ այդ գիշեր,  
Այդ անուշը դիշեր, ուր խողագական  
Փաշըն խումբերով գալիս են ժամեր,  
Ահա՝ լուսինը:—Ե՞նչ անհահական

\* ) Մեր պատմության մեջ կարդում ենք հետագա ավանդությունը—երբ Արտավազդ Ա-ը, ընդունելով թագավորության կառավարությունը, սկսեց գանգասել յուր հոր՝ Արտաշես երկրորդի դեմ, տակլով. «Ես ինչպես թագավորեմ ավերակներին» (որովհետև Արտաշեսի մահին շատերը ևս մնոցրին յուրյանց ըստ սովորության),—այս պատճառով հանգուցյալ Արտաշես անիծեց Արտավազդը և ասաց, «Որս գնալու ժամանակ թող քեզ բանեն բաշերը (շար ոգի, գանձեկ), տանեն Մասիս սարի վերա, այնտե՛ղ մնաս միշտ և երեկ'թ լուս շտես-դեկ), տանեն Մասիս սարի վերա, այնտե՛ղ մնաս միշտ և երեկ'թ լուս շտես-դեկ)։ Հայ պատամերը զրուցում էին, թե Արտավազդ մի ալրի մեջ կապված է շղթաներով, և երկու շուն հանապատ կրծում են այդ շղթաները, որ նա ազատ-է շղթաներով, և երկու շուն հանապատ կրծում են ալրի երեկաթ ծեծելու ձալնից դարձաւ զորանում էին շղթալրը։

Հիշում է դա ինձ գաղտնիքն այն անգին,  
Որ ամենայն մարդ, սրաի հատակում  
Վարագուրելով, — դրախոս աշխարհին  
Զկամի հայտնել և չէ հավատում,  
Բայց թե երջանիկ աշխ անդորրության,  
Եվ անպատճիան այս միայնության  
Ո՛վ, ի՞նչ մրմունչով այդպիսի գիշեր  
Սովոր ենք խնկել մեր առաջին Սեր,  
Թափել արտասուր, մաքուր արտասուր,  
Հառաշել մենակ, որ չտևսնե՞ր դուք:

### II.

Ահա նույն ուսին և նույն խոկ թիկեր, —  
(Ես երկրորդ անգամ տեսնում եմ դոցա.)  
Փոքր ցա՛ծ իշիր, նոր բացված վարդեր,  
Կարող են ամբոր'ս սփռել քո վերաւ  
Մո՛տ զնա, ի՛մ հյուր, նորա անփուշ են,  
Ա՛խ, տե՛ս դու, ո՞րքան ուրախ ժագառում են:  
Դեռ անցյալ զարնան, Մայիսի հնգին,  
Ես այստեղ էի, և հոգուս ընկեր  
Նույնպես այդտեղ էո, նա նայեց վարդին —  
Եվ ես հյուսեցի փունց նորան նըլեր:  
Ա՛խ, առանց սիրո ի՞նչ է մանկություն.  
Ասա՛, նո՞ւն չէ, թե խորին ժերություն:  
Թե սերը գնաց, զրկանք աշխարհի  
Ես հանձն կառնում, և գալուատ մահի:

### III.

Ահա և հովեսու ի՞նչ պայծառ կանաչ  
Ճոճում է նորա մակերեսութին:  
Ի՞նչ ծաղկի ազգեր և հետ, և առաջ...  
Ես չե՛մ նախանձում այլ ևս դրախտին:  
Եվ կապուտակը շքեղ երկնըի  
Իմ հաշտ հաւայըը փաղարշում է,  
Եվ երկու աշերն շիկաներ կուսի  
Եվ նկարում է և ինձ հիշում է:  
Թե՛ չսիրեիր դուք ունայնություն,  
Հարճերի աղմուկ, շոայլ պերճություն, —  
Գուր կարող էիր, մարդի՛կ մոլորդաւ  
Այս արբեցության մեծությունն զգալ:

Պարտե՛զ հանգստյան և խաղաղության,  
ի՞նչպես չգովեմ քո առատ բերքեր,  
ինչպե՞ս շխաղամ ներդաշնակածայն  
Քնարիս վերա: Այդ պերճ պատկերներ,  
Որով զարդարված զեղեցկանում ես,—  
Որ բնությունը կենսագործում ես,—  
Ինձ ընձեռում են և ուժ, և կյանք նոր,  
Որով կարող եմ լինել բաղդավոր  
Քննել մեծությունն Ճարտարապետի,  
Եվ արարության գաղտնիքն ըմբռնել,  
Եվ ոգևորվել հոգով պոետի,  
Անհասի անվան սաղմո՞ս տաղերգել

1865

## Ս Ո Ւ Ա Կ

Սոխակն երդեց և մոռացավ  
Քաղցր ըռնը դիշերի.  
Նա ողջ զիշերն արտասվեցավ,  
Որպես սիրտը սիրողի:

Եվ նա ասաց. ինչո՞ւ համար  
Զկա ոչինչ պատասխան.  
Եվ նա զիտեր դորա պատճառ.  
Սերը չէ ինքնանավան:

1865

## Ս Ի Ր Ե Լ Ի

Մա՞նըր օրեր, զնացե՛ք շունով,  
Գնա՛ ձմեռ Հյուսիսի.  
Գարուն, կանաչ ե՛կ թերով.  
Քող արձակվի ոստն վարդի:

Ես գարնան մեջ հոգուս սերը,  
Սրտիս լարերն թաղեցի,  
Որ գարնան հետ քո պատկերը  
Գովասանեմ, սիրելի:

1865

## ԶԱՆԳԱԿ

Որպես դղրդոց բանտի գոների  
Ինձ տաղտկալի է այդ զանգակի ձայն,  
Գրել, մտածել ինձ անկարելի.  
Լոի՛ր, ո'վ զանգակ, կո'յր ծիսի նշան,

Իմ հոգու լարերն թող աղատ շարժվին,  
Որպիս ազատ է իմ մտածություն.—  
Սրտիս լսելի ես իմ մեծ Փրկչին  
Ահա՛ երգում եմ օրհնաբանություն:

1865

## ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇ

Ես ձի նստաւ Դեպի Մոսկվա  
Ուզզեցի իմ ճանապարհ.  
Մորս արտասուրն այլ շտեսա.—  
Արագ զնաց երիվար:

Ո'վ արտասուրդ, մայր իմ անգին,  
Պետք է սրբե, ասացիւ—  
— Ես կը մնա՞մ այն սուրբ օրին,  
Մինչեւ դառնաս, իմ որդի:

Եվ գնում են հետզհետե  
Եվ շատ օրեր, շատ տարիք,  
Մորս արտասուրն ծովանում է.  
Եվ լուսի՞ ժամ երջանիկ...

1865

## ԿՐՈՆԱՎԼՈՐԻ ԱՂՂՈՔՔԸ

Անհամ Զորություն, որ ծավալվում ես  
Անթիվ շնչավոր էակների մեջ,  
Որ ամենայն բան տնօրինում ես,  
Որ իբրև կանթեղ վառվում ես անշեշ,  
  
Որ սաեղծել ես մարդը իմաստուն,  
Քան այլ շնչավորը բո հրամանի,  
Որ բաշխել ես նուրբ բանականություն,  
Մինչ հայացք միսել անդունդը երկնքի,  
  
Որ կարողապես տվել ես Հանճարին  
Թափանցել ստորինը, բննկլ և գննել  
Ծնդերը տիեզերքի, տիրել բոլորին,—  
Տո'ւր հոգուա գալոցքն այսօր գուշակել,  
  
Եղեմի դրա՞խտ, թե իւավա՞ր գեհեն  
Պիտի հաստատես նորան օթևան,  
Թե այս վա՞տ դամրան... Ո'վ ես Հողեղեն...  
Ինչո՞վ բացեցի դուռն անհաջության,

Այստեղ կմեռնեմ. այս բլուրն ահա  
Կառնու գիսեկը ցուրտ կամարի տակ:  
Տարերը կփոխվին և աշխարհ կերթա,—  
Կերթան և բլուրն, և իմ Հիշատակ:

1865



## Մ Ե Ս Ա Տ Ո Ւ Ն

Այն ի՞նչ իշխան է և ի՞նչ միծատուն,  
Որ ճեղքեց յուր ազգն, մատնեց սուրբ արտօնք,  
Փոխեց կրոնից, պատառեց նորան,  
Եվ գավաղանի հարվածների տակ,  
Տվեց ժողովուրդը Դայլին ինքնիշխան.—  
Ստացավ անփա՛ռը գործի մրցանակ:  
Եվ դառն արտասուր Հայ ծնողների  
Բիսեց որպես ծով. նորա լգտան  
Խորթ կրոնի մեջ յուրչանց հայրինի  
Վարդապետություն—տիսրեցան, մեռան,  
Այդ ի՞նչ իշխան է,—ինձ գուր ասացե՛ք,—  
Հապա երեսին գորա թքեցե՛ք:

1865

# ԻՏԱԼՈՒՆԴԻՔ ԵՎ ԻՏԱԼԱՑԻՔ

(Հիշողությունն դեպի անցածը)

## I.

Ինչո՞ւ ինչո՞ւ իտալացիք,  
Չէ թնդում քաղցր երգեհոն,  
Ինչո՞ւ, քնըուշ իտալուհիք,  
Թողիլ եք ձեր պիանոն  
Մոռացել են դոքա ասես  
Փափուկ սեսը կանացի.  
Մրտում վրեժ, կորիճի պես,  
Դիմում են վրա՞նք ոսոխին  
Որպես տան մեջ, նույնպես կովում  
Կանդնած են հեղ և հպարտ,  
Գնդակներին կուրծք են ուզդում,  
Եվ շրթունքից չէ՝ գնում վարդ։

## II.

Զարմանո՞ւմ եք, ինչ ասում եմ,  
Թե զուք նոցա տեսնեիք  
Խաղաղ օրով, երբ քաղցրադեմ  
Բռնած կիթառն գեղեցիկ,  
Փափուկ մատերն արծաթելար  
Նվագարանին դիպէւով,  
Պարտեզի մեջ ծաղկագալար,—  
Դուք կլսեիք անխոռվ  
Սիրո ձայնը, սիրո հոգին,  
Հյուսած սրտի թելերից.  
Սիրե՞լ գիտե իտալուհին,  
Զրկված բոլոր աշխարհից։

## III.

Շուրջ ճակատով շուշանագեղ  
Ծածանվում են թուխ մաղեր,  
Սև սաթի պես հոնքեր շըհը,  
Վառ ասաղի շուխտ աշեր,  
Դուք լսեցե՞ք, երբ զրուցում են.  
Ամրոց գրախտ փափկության  
Չեր սրտերը կախարդում են,

Որպես տավիղն էուան։  
Եվ սոռնի գոռոզ հոգին  
Միթե չպետք է նվաճի,  
Եվ հաղթության արմավենին  
Դոցա առջև տարածվի։

IV.

Իտալուհի՞ր, և ձեզ նման  
Արեւլըում մի անգամ  
Զեր բույրերը զինվորեցան  
Թշնամու դեմ անդգամ,  
Արյան գնով Հայաստանին  
Գնեցին նորա փրկություն,  
•Եվ թաղեցին հողի ծոցին  
Անմեղ ծաղկած կուսություն։  
Մեռան նորա. բայց կմեռնի՝  
Նոցա գործի հաղթանակ  
Դուք գեղի դաշտ, մենք կենդանի  
Ոմինք նոցա հիշատակ։

V.

Իտալիա, աշխարհ փառքի,  
Դու, բո կուրծքը զրահով  
Ամրապնդած, հաղթանակի  
Կամիս պսակվել դափնիքով։  
Միթե իսպառ պետք է ճնշվի  
Այդ ազգային զորություն,  
Եվ առվի պես արյունդ թափի,  
Հերոսներիդ սուրբ արյուն  
Միթե ձեռներն, միթե սրեր  
Քո ոխերիմ թշնամու  
Պետք է բերեն քեզ նոր ավեր,  
Եվ ստրկանաս դարձյալ դու

Ինձ ասացե՞ք. ո՞վ ձեզանից,  
Որի մեջ մարդու սիրտ կա,  
Չխեղդվելով արտասուբից,  
Կարող է մնալ անզգա,  
Տեսանելով այս ողբալի  
Ծրածության ավերած,  
Եվ սրբությունն իտալիայի  
Նշավակով անարդած  
Անհծում եմ չար ժամանակ,  
Երբ բուրբոնը գիշատիչ,  
Տնկեց այստեղ յուր դրոշակ  
Եվ խաբերա՛, և մատնի՛ց:

## VII.

Մի կամք, մի շունչ ձեզ օգնական,  
Առե՛ք սուսեր—և հառա՛ջ.  
Դուք սիրտ ունիք ասպետական,  
Հարձակվեցե՞ք ձախ ու աչ:  
Ազնիվ գործին ինքը Աստված  
Ուղարկում է յուր վահան:  
Իտալիա՛, փա՛ռք անմռոաց.  
Կթնդա ձայնը փրկության  
Նորից, նորից անուշահոտ  
Կարձակվի քո մրտենին,  
Նոր արշալուս, նոր առավուտ,  
Եվ ավետյա՛ց ձիթենին:

## VIII.

Եվ անցածիդ դեղեցկություն  
Յուր դադարից կզարբնի,

Միայն ավե՛ր և պղծո՛ւթյուն  
Ավստրիան կընդունի:  
Իտալիա՛, դու գորավոր,—  
Եվ կեցցե՛ն քո զավակներ,  
Իտալիա՛, ես հոգենոր

Թերում եմ քեզ իմ տաղեր։  
Եվ հայի մեջ կա կենդանի  
Աղասության արձագանք,  
Եվ թո'դ շասեն, որ հայն չունի  
Ո՛չ ազատ կամք և ո՛չ կյանք։

1864 թվին.

## Ս. ՆԱԶԱՐՅԱՆՑԻ

ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անձեռագործ գու մահարձան քեզ կանգնեցիր։  
Ու հողանյութ, որպես երկաթ կամ որձաքար։  
Հըզոր գըրշով, սուրբ վաստակով և անձանձիր  
Շունչ կենդանի և հետ մահվան հանդիսացար։

Ահա նոր Ազգ և նոր Լեզուդ, յուր ձիթենին,  
Քո ջրով բուսած, քեզ է բերում, ո՞վ Ստեփանոս  
Խաղաղ մնա', մի' վրդովվիր. բռն է դափնին,  
Խավարի մեջ մեզ լուս ծագող, Պռոմեթեոս։

Վշխարհ ծնար, և աշխարհիս գարձար մշակ,  
Բայց լը տեսար այս աշխարհից անդորրություն։  
Վշխատավոր մարդկան բաժին է փշյա պսակ, —  
Ահ, բրտնաջան ոսկրներիդ խաղաղություն։

1679 թ. Մոռկլա.

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԴԱՄԲԱՆԻՆ

(Կվեր Մ. Սադարյանցի հիշատակիմ)

Ահա արեմուտք և օրհասական,  
Որպես գիշերվա թանձրամած խավար,  
Վռա տվին ինձ, մահիճս իմ կալան։  
Ու մի հույս շմնաց նոր կյանքի համաց  
Կյանք, անուշ երազ մատաղ օրեւիս,  
Սիրուն ցնորրիդ անցավ ելենք.  
Եվ վերջին լարը մեռնող քնարիս  
Պատըովինց, որպես սիրտը կուրծքի մեջ։

Երբ որ ինձ թաղեր, մի՛ աբտասվագին  
Մաղիկներ ցաներ դադաղիս վերա.  
Ի՞նչ հարկավոր է անշունչ դիակին,  
Որ մահից հետո սիրո կուռք դառնա:  
Մանուկ օրերից, հուսով սիրավառ  
Երդ հս երդեցի ոգևորության,  
Բայց ինձ ըրլսեց գոռող այս աշխարհ։  
Վա՛յ ձեր վարդերին, որ ահա չը կան։

Եվ թող բնությունն՝ միակ գեղեցիկ,  
Աղջունե երգչիս վերջին հրաժեշտին,  
Եվ երասխաջուր մարգերի ծաղիկ  
Անթառամ՝ խընկե հայրենի այգին։

Աղատ թուխապերից, թող պայծառ շողա  
Արեգն երկնքին միջօրեական,  
Եվ հա՛վերժ մատաղ կյանքի պես խաղա՝  
Եվ լուսավորե իմ կորած դամբան։

1890 թ. Մոսկվա

## Զ Ո Ղ Ե Ր

Մեռավ իմ մուզան, հանգավ և կրակ,  
Անտառը լցվեց չոր տերևներով.  
Երկինքը ծածկվեց, փախավ արեգակ,—  
Ել ևս չեմ ապրում ուրախ երգերով:  
Եվ աստեղազարդ բոլորակ գմբեթ,  
Եվ արծաթափայլ ջրերի խոխոչյուն  
Այլևս չեն խոսում բանաստեղծի հետ,  
Եվ ոչ այցելում ավերված իմ տուն:  
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,  
Մայք մտավ ահա և նշույլ վերջին, —

Հանում եմ զրահս, և զին, և զարգեց,  
Հանձնում եմ զրանց մանուկ սերնդին  
Թայց թող հայկական որդիքն իմանան,  
Որ իմ սուզս նոցա վիճակն է եղել.  
Որ երբեք վախուկ զինվորի նման  
Թշնամուա առջեւ վահան չեմ ձգել:  
Չեմ երկրպագել ես ոսկի հորթին  
Եվ ոչ կուռքերին պաշտել օտարի.  
Այլ միշտ հոգեսոր կարուտ ծարավի,  
Տվել եմ արժանն ամեն մի մարդին:  
Չեմ տաշել դագաղ, ու մատաղ կյանքի  
Կանաչ ծառի պես ծաղկել են հույսերու  
Մրսկել եմ դորանց ջրով կենդանի,  
Որ գալոց ազդին լինեն պտղաբերու  
Եվ հոգուս վրա այսօր իսկ խավար  
Կիտվել է որպես մըրըրիկ ծովի.  
Չորս կողման ձիծաղ, և խնջույք, և թառ,  
Բայց ահա և ձայն կալանավորին:  
Մաշված ու գեղնած դիակի նման  
Լախտեր չափելով կաշեհան մնչքին,  
Քաշում են անպարտ, անմեղ ձիսուսին...  
«Ազատ թարաբբա» գող և ավազակ.  
«Ազատ և Օսման», վճուց ելրոպան.  
«Ենդդեցեր դրան, ջարդեցեր կզակ,  
Շնոր այլ ևս մեզ բողոք չկարդառ  
Եվ թող հայկական որդիքն իմանան,  
Որ և այժմ, կանգնած հայրենյաց շեմքին,  
Լարում եմ զղերս որ շըուլանան  
Գիմակաց լինել ահեղ փոթորկին.  
Քշտիր կոներդ, կարիճ անհման,  
Ա՛ս սուր, հրացան, բլուճն ու կացին,  
Դժվար ճանապարհն անցիր անսասան.—  
Աշ ու ձախ քանդիր, թե որ արգելք կան.  
Ահա նորածին և մանուկն եկալ  
Սուրբ աղատության տաճարին ընծառ.  
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ  
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:  
Եվ գտրնանացին ծաղկազարդ դաշտեր  
Փոխվեցին կարմիր, կապույտ ժիրանի.  
Կարմիր փոխվեցին ծովի ալիքներ,  
Տաշտախիլ դարձավ արդին հայրենի.  
Ո՞չ, մի՛ վախենար թե նահատակի  
Գըլուխը թուավ դահճի երկաթով,

Կը դա ժամանակ, երբ հաղթանակի  
Նա երգ կը հնչե դափով, ծնծղայով,  
Կը դա ժամանակ, երբ ամեն մի դու,  
Տնկած իր առշե թարմ արմավենին,  
Փառավոր նորան կը կանգնե մատուռ  
Եվ անուշանոտ զոհերի բագին:

Ահա նորածին և մանուկն եկավ  
Սուրբ ազատության տաճարին ընծա.  
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,  
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:  
Հենց նահատակի սուրբ ոսկորներից  
Նոր լուս է ծագում աշխարհիս վերա.  
Հենց Գողգոթայի լեռան կատարից  
Կանգնեց նոր Աստված, և անմեղ արյուն,  
Դեպի կյանք մարդիկ կանչելով մահից,  
Տարավ վարդագույն նոր պսակ վշտա—  
Այսքան հաղթող է արյան զորություն  
Հյութ աստվածեղեն, հեղուկ լուսեղեն,  
Եվ ծիրանածին դրոշ փրկության,  
Քո ամեն մի շիթ, ամեն մի հյուկեն,  
Նոր դար է կազմում ստրուկ մարդկության.  
Եվ ամուր բանտեռ, քարե պարսպով,  
Գիտես սառուկությամբ թափալել գետին,  
Լեռներ և դաշտեր ողողել ծովով,  
Վանդակից հանել անճար թշվառին,  
Ահա նորածին և մանուկն եկավ  
Սուրբ ազատության տաճարին ընծա.  
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,  
Դիմեց համարձակ դեպի Գողգոթա:  
Փայլից արեկը նոր արշալույսով,  
Անհետ շքացավ և ժանդ հնության.  
Նորոգման ոգին, կյանք ավիտելով,  
Արյունից կընեց պսակ հաղթական,  
Նահատակները փոփոխին գետնին,  
Գեաինը կակդեց նոր սերմի համար.—  
Նոր գործը մնաց մեր նոր սերնդին.—  
Եվ այսուհետեւ առաջ անդադար  
Ահա լուսածին և մանուկն եկավ,  
Գեղեցիկ՝ որպես ազատն ինքն աստված,  
Արարիշ բազկով շինել սկսավ  
Ազատահության հրաշալի շինված:

1890թ. Մոսկվա

## ՊԱՆԴՈՒԽԻԾ ՀՈԳԻ

(Վկեր Ս. Նազարյանցի հիշատակիմ)

Հողի կապանքից հոգին աղատված,  
Երկնքի անվերջ տարածության մեջ,  
Թռչում էր ուրախ. նորան դրկարաց  
Ողջունում էին աստղերը անշեց:

Եվ քերովբեներ այնտեղ վեցթևյան  
Հանդիպում էին խընկով, բուրվառով.—  
Հանկարծ ցոլացավ փայլակի նման  
Աթոռն ոսկեղեն, լի գոհարներով:

Հանդիստ էր տիրում մշտնչենավոր  
Մարտիրոսների օթևաններում.  
Եվ սըրանց գլխին պսակ փառավոր,  
Ինչպես արևելք՝ հրավառ շողշողում:

Սահում էր այնտեղ և կենդանի ջուր,  
Որպես երեսի արտասունք մաքուր.  
Եվ դրախտահաւալն թըփերի միշին  
Սազմու էր ասում ամենակալին:

Այսօրան կախարդիչ, հրաշալի պատկեր  
Ոչ մի հողեղեն, մի մահկանացու  
Յուր կյանքի օրին երբեք տեսած չէր,  
Եվ ոչ մեծություն զգացել ասուծու

Եվ մտավ հոգին խոստացած աշխարհ,  
Ուր մեր աշխարհի ոչ հոգս կա, ոչ վիշտ,  
Ուր և մեծ, և փոքր միջյանց հավասար,  
Եվ Աղոնայի\* ներկա նոյցա միշտ:

Եվ տըխրեց հոգին հողեղեն մարդու,  
Եվ ընտելացավ Դրախտի վաճառին.  
Ուղում էր թողնել վիճակ կենսատու,  
Ուզում էր ասել յուր հըրեշտակին.

«Թո՞ղ ինձ, թո՞ղ, գընամ դարձյալ այն կայան,  
Ուր ցավ, արտասուր և տառապանք կան.  
Ուր բաղցրության հետ կա և դառն բաժակ.  
Ուր օձն է սողում և վարդենու տակ!»

\*.) Աղոնա կամ Աղոնային, բառ եբրայերեն՝ նշանակում է աստված:

«Սիր ունիմ սըրառումս, լայն այս երկնքից։  
Սմփոփել յուր մեջ չէ կարող դըրախտ։  
Խավար գիշեր է երկինք աստղալից, —  
Այնքան լուսավո՞ր երկրային իմ ըախտ։

«Թո՞ղ ինձ, թո՞ղ, գընամ գարձյալ այն կայան,  
Ուր ցավ, արտասուր և տառապանք կան,  
Ուր բաղցրության հետ կա և դառն բաժակ,  
Ուր օձ է սողում և վարդենու տակ։

1891, ապրիլի 3.

## ԱՆԳԻՆ ԳՈՂԱՐ

I

Յժառո, աղավնյակ, որ գու չես ծընած  
Աշխարհստեղծության վիցերորդ օրին,  
Երբ ճարտարապետ արարիչն ասոված  
Կանանց փափկությամբ նկարեց Եվային.  
Դո՞ւ այն ժամանակ կլինեիր պատկեր  
Եվ չնաշխարհիկ սիրո գաղափար,  
Դո՞ւ անամպ երկինք, նա ամպ ու սավեր  
Եվ ոչ հողեղեն որ թեզ հավասար  
Արի սևաթուզը մազերը կիտլած  
Մալը ծալը ցրված են բարակ ուսերուլ,  
Եվ վառ աշբերի դյութող հայեցված  
Երբեմն սրտակից փայլում է սիրով,  
Բայց և երբեմն, ամպի պիս թիպած,  
Կըա՞կ է թափում այրող կայծերով։

II

Անարատ որպես շըհընձած ցորեն,  
Մեղսապարտ երկրի մաքուր քավարան,  
Ա՛յս թե մեղքերը թեզ չպաշարեն,  
Եվ գու մնաս իմ միակ զոհարան։

Թեթև փշելով մաքրափայլ օդի,  
Թո անուշաբուզը շունչն եմ ես զգամ,  
Նվ խոխոչաձայն խաղում առվակի  
Թո մեղմ, սիրալիր զրուցն եմ լսում.  
Շառի տերևներ, հեղիկ շարժվելով,  
Նազուկ ոտերիդ հիշում եմ շարժված.  
Նվ ծաղկիները, բեղ բարեկելով,  
Ուզում են ասել, որ դու ես աստված.  
Դու համեստ աստղիկ, ամաչկոտ լուսին,  
Դու իմ խնդություն և վիշտ իմ խորին,  
Դու իմ պայծառ օր և տխուր գիշեր,  
Իմ միակ կյանքում դու միակ ընկեր:

1891 թ. Մոսկվա.

## Հ. ԵՎ Թ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՔՍԱՆՀԻՆԴԱՄԵԿԻՆ

Կես գիշեր է: Լուս սենեկում  
Հանդարտ թալլով, փոքր ինչ զրադված,  
Ման եմ գալիս. և անկյունում  
Տեսնիմ. ընարս պատին կախած:

Տերեկի պես դողդողալով,  
Ես մոտեցա հին ընկերիս,  
Եելքըս թռավ. բայց մեղմ ձայնով  
Կանչեցի ես. ողջուն ընարիս:

Առա նորան, և խնդագին  
Փայփայելով, լավ մաքրեցի.  
Կարծիմ, լարերը պակաս էին,  
Բայց տակալին գեռ արծաթի  
Եւ արծաթի տարեդարձին  
Այս տողերը ինձ հնչեցին: —

Թաղդավոր զույգ. որ մտաք աշխարհ  
Սիրտ սրտի հետ և միաբան:  
Սիրով գնացիք ձեր ճանապարհ,  
Լուսապայծառ աստղի նման:

Որ մանկության տռավոտից  
Արդար վաստակ եք վաստակել,  
Որ անտրտունչ այս աշխարհից  
Երբեք աշխարհ չեք անիծել:

Սե՞ր գեղեցիկ, սե՞ր հոյակապ,  
Ամեն տեղ քո շունչն եմ լսում.  
Դու մարդկության հզոր շաղկապ,  
Ամեն լավ բան դու ես ստեղծում:

Եվ այդ Զեր սերն Աստված օրհնեց,  
Նայեց երկինք և հաշտ աշքով.  
Թեթև զեփյուռն Զեզ ողջունեց, —  
Եռաց և կյանք բոլոր շնորհով:

Արևելի շողթը շողաց  
Աղամանդի գոհարներով.  
Շողաց և շաղը շողշողուն  
Մարդարտափայլ կաթիլներով:

Շողաց և ծովըն ծիրանի  
Երկու շքնաղ նավորդի հետ,  
Մինը պսակյալ իսկ թագուհի,  
Մյուսն անխոնչ ճարտարապետ

Քաջ նավորդներ. Զեր գալն բարի.  
Զեզ գեղեցիկ պսակ արծաթի.  
Ա'յս օր հանդես ամուսնական,  
Կեցցե՛ք, կեցցե՛ք այժմ և հավիտյան:

1891 թ. 28 հուն.

## ՀԱՆԳԱՄ ՔՆԱՐ

Այսպիս, իմ քնար, այսքան ժամանակ  
Սիրելով հանգիստ և դատարկություն,  
Իբրև ժայռերից սեղմված մի գետակ,  
Մնացիր անշարժ Խոսնակ դու շարժուն,  
Չը հնչեց լարերդ և ոչ մի դաշնակ:

Ապրում եմ մենակ և առանձնացած,  
Անմասն խառնաձայն ըզրոսանքներին.  
Ապրում եմ, որպես մարդերից փախած  
Աշք շունիմ նայել աշխարհիս կյանքին,  
Տատասկի նըման տապալված գետնին:

Ո՞հ, մի կանչեք ինձ, որ ձեզ բան երգեմ,  
Որ ձեր լսելիքն երգով փայփայինմ.  
Թե ինքն Ապուլոն նորից փունչերով  
Զարդարեց ճակատս, ես, հետ բաշվելով,  
Կասեի նորան. «Մընա՞ս դու բարով»:

Անց կացան օրերս, անցավ և գարուն,  
Երբ գեղեցկացած մանուկ ուժերով,  
Իրը սրբաթյիլ արծըվի կորյուն,  
Թոշում էի, ես հզոր թերով,—  
Զեկա՞ր ինձ արգելք, չըկա՞ր բոնություն:

Ահա և այս թերթս, սեղանիս վերա,  
Առաջ որ զբրիս թաթախում էի,—  
Պառնում էր խեկույն կենդանի վըկա  
Սըրտիս զեղմունքին, և մարդարեի  
Խոսում էր լեզվով, որ այժմ չկա:

Ա՛յս թե և մեր սիրտն ծառի պես լիներ,—  
Չըմեռը կանաչ տերեկց թափովեր.  
Ամառը որ գար, — մանուկ աշխուժով,  
Բանաստեղծական նլեռշներով  
Ցուր թմբությունից նորից ըսթափովեր,

1892 թ. Մոսկվա:

## ՎԵՐՁԻՆ ՓԱՓԱԳ

Նրբ ցուբատ դիակդ, կյանքից գըրկված,  
Մըտնի տապան, իմ անդին,  
Գերշին շունչըս քեզ եմ նվիրած,—  
Եվ ինձ տեղ տուր քո կողքին:

Թո՛ղ Գաբրիելի փողը հնչե,  
Թո՛ղ գա ահեղ դատաստան,  
Իմ նազելի, մեղ այդ փուլթ չէ  
Միրո գըրկում անսասան:

Թե ինձ հասնի երանություն  
Այն լուսեղեն աշխարհի,—  
Մեր հողե ծածկ, հողե անկյուն  
Քաղցր ինձ քան մասն անմահի:

1893

## Օ Գ Ն Ե Ց Ե Ք

Արև բացվեց սարի ծերին,  
Հետն էլ գարուն վարդը ձեռին.  
Թայց տիսուր սիրտս շդտավ մի լար,  
Որ թշվառին երգեր ամի՞ լար»:

Կոռ աշվղի պես, չունգուրը քոքած,  
Որբերի խաթեր դոնի-գուռ ընկած,  
Հայոց հին երգիշն հին երգ է երգում,  
Որ թե սիրում եք Փրկիշն երկնքում,  
Առեք նրա Խաչն և մտեք աշխարհ,  
Օգնեցիք որրին, այնքան վշտահար.  
Անտված բարաքյաթ տա ձեր տուն-տեղին,  
Զեր կալին, հանդին, թաղին ու գեղին,  
Զեր բարեսեր կյանք և աղնիվ ավյուն,—  
Ասցեք, այս չէ՞ մեր անմահություն:

Արև բացվեց սարի ծերին,  
Հետն էլ գարուն վարդը ձեռին.  
Թայց տիսուր սիրտս շդտավ մի լար,  
Որ թշվառին երգեր ամի՞ լար»!

25 դեկ. 1898թ. Մոսկվա



# Լ Ե Վ Ո Ւ Ի Վ Ի Շ Տ Ը Լ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԵՐԲ

ԶՈՐՍ ԳԼՈՒԽ ԲԱԺԱՆՎԱԾ

Ազնիվ ընկեր չմռանանու.

Անդավանան, զերմ սիրով

Ես սիրել եմ իմ հայրենիք, —

Դնա՛ եղ դու նո՞ւյն շալիդով:

(Երգ մեռ. Հայրենասիրի, 202 երես)



Հիսուներորդ տարին Ճեմարանիս հիմնադրության ահա՛ լրանում է, միցանկալի տպավորություն բերելով բոլոր բարյացակամ սրտերին Այո՛, Հիսուսին տարի ապրիլ է նա գեղեցիկ հառաջադիմությամբ. Հիսուսին տարի գնացել է յուր զժվարին և լի՛ ձախորդությամբ ճանապարհը: Գոհությո՛ւն նորա անցյալին, որ կազմել է մեզ մի գալարուն ներկա, և գոհություն նորա ներկային, որ տալու է մեղ մի առավել նախանձելի ապագա:

Դեռարք՝ լու պատանիք, ծրաջա՛ն եղե՛ք այդ սուրբ ասպարիզի վրա. պատրաստեցե՛ք ձեզ որդի մարդկության և ազգության. ո՛հ, քանի՛ մեծակշիռ էր ձեր մատաղ կյանքի խորհուրդը, թե ձեր թանկագին ժամանակը գործ դնեիք նորա զարգացման և հաստատության, քանի՛ բարձրանալու էր Ճեմարանը արժանի պարծանքով, որ պատրաստ է օժանդակել ձեզ ամենայն միջոցներով, եթե միայն կամեիք ուսանել ազնիվ ու անխոռվ աշխատասիրությամբ:

Ազնիվ սրտեր, լցվեցե՛ք ամենաքաղցր շոշափմունքով, պատրա՛ստ կացեք բերել ձեր անկեղծ շնորհակալիքը այդ փառավոր օրի տոնախմբության. գիտե՞ք, — սիրո և երախտագիտության զգացմունքն է, որ մեծարելի է կացուցանում մարդու անունը: — Ծնորհակա՛լ լինինք խոստովանող սրտով պատվական հոգաբարձուիս Խաչառո Հովակիմյան կազարյան, որ լուավորյալ գործակցությամբ բարեկարգել է վիճակը Ճեմարանիս և ոչինչ չ'է խնայել նորա պայծառության համար թե նյութապե՛ս և թե բարոյապե՛ս:

Խաղաղությո՛ւն Զեզ, աղդասե՛ք Հիմնադիրը Ճեմարանիս. Զեր անունը առնմուաց է, Զեր գործը անմահ, որ ահա վերստին անմահանո՞ւմ է այս տոնախմբության օրը:

Երախտագիտ հեղինակը

1864 թվակ. սեպտեմբերի 10.




## ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԸ

Թե ծանր պիտութեն հասարակության  
դարձավ բո համար նյութ մտածության,

թե սրտիդ վերա ծանրացավ ներկտ,  
Որպես բո կլանքի մի մեծ առարկա,

Քեզ, ազգի անդամ և ազգի որդի,  
Լեռնի վիշտը առաջարկեցին:



## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Доволено людей кормили сластями,  
у них от этого испортился желудок:  
нужны горькие лекарства, едкия ис-  
тины.

Лермонтов,

(Гер. наш. вр.)

### I.

Ժամանակակից գրում եմ լեզվով,  
Որ ամենայն մարդ կարգա, հասկանա,  
Որ չնայե այլ ակնոցներով,  
Որ յուր սեփական բննությունը տա.  
Կյանքը ինձ ասաց, Մանո՛ւկ, քեզ դափնի,  
Գնա՛ նոր խոսքով բան մի զրուցել,  
Եվ լաբիրինթոս մուշ գրվածքների  
Հանցա՛նը համարիր ազդիդ նվիրել:

### II

Եվ ես հնագանդ այդ առողջ ձայնին,  
Զկամիմ նմանիլ անառակ որդուն  
Զոհում եմ դրիչս կենդանի լեզվին,  
Որքան ձեռնհամ իմ կարողություն:  
Մանո՛ւկ հրաշագեղ, թոթո՛վ ոգելից,  
Դու աշխարհաբար մեր սրտի թարգման,  
Դո՞ւ մեզ հարազատ ծննդյան օրից,  
Թո՞ղ քեզ նախատեն մարդիկ հնության:

### III

Նորա տեսնում են միայն թերություն,  
Միայն դեռ անհյութ, մանուկ խակություն,

Չեն լուսմ ծայնը մարդարհական  
Նորա ապագա նիրդաշնակության.—  
Նա ևս կը բացվի, կաճե զվարժագին,  
Կը ծանրաբռնվի որպես զիրծ ամառ,  
Եվ բնրուշաշարժ սրտի լարերին  
Եվ գտնի և խոսք, և հնչուն հարմար:

IV

④ Զկամիս Հարկ տալ տնտեսք ապրանքին,  
Այն ուրածո ճարտասանության,  
Ես համարել իմ նորան մահու գին,—  
Ամենամեծ իրծ բթամտության.  
Նորա մեջ տեսա մոռալը հնության,  
Բայց երրեք շտեսա ներկայի հոգին,  
Ենրամանկահյուս բաներ խռոցան,—  
Ես հետեցի պարզ լոգիկալին...

V

Եվ օդ սղոցել կացնե բառերով,  
Եվ միջնադարյան տարածել փոշին,  
Բողոքով է խիզն երկսայրի սրով.  
Այդ անփական չէ մեր ժամանակին,—  
Ալեկոծվեցան ծերերն հնասեր,  
Փրփուրը ժայթքեց մորուքի վրա.  
«Ճա՛ճ, անմիտ կարծիք, վա՛ճ, անմիտ խոսքեր,  
Ճի՛, անհիս տոնենք լեզուն Աղամա»,

VI

Որդեր հսացին և լայն բացվեցան  
Նոցա տուաշե գժոխորի գոնիր,  
Եվ, ո՞վ կատաղի մոլեռանդռաթյան,  
Եկա՞ն, կիտակեցան նախանձի լիռներ.  
Լեզո՞ւ սրեցին, աղե՞ղ լարեցին,  
Որ առատ առատ նետեր արձակին.  
Դատապարտելի գործ ձևնարկեցին—  
Ինչո՞ւ—որ ազգին խավա՞ր մողովին...

VII

«Եսելքրդ ցնդիլ է, լեզվագա՞ր լոկուտ,  
Անպիտ ապրա՞նք է ճարտասանությունը»:

Եվ նոցա գոռը զբղբրդում է օդ,  
Արպիս մրմոռդ քամու սոսափյուն...  
«Բթամտություն», գոշում են ծերեր, —  
Անեծը է վիժում անգույն քերանից.  
Եվ մորուքների մի կանգուն ձարեր  
Գոզում են որպես ահագին հողմից...

### VIII

Անխոռով եմ ես, եթե իմ վերա  
Ամրաստանության գան զիզվեն բեռներ:  
Ե՞րբ են բան տեսել, ինչպես որ նա կա,  
Շշմարտութենից վշտացած աշքեր:  
Կորի՛ր, Զարասե՛ր, լոի՛ր, Ամրարի՛շտ,  
Ես պիտի ճեղքիմ քո նենդ մերենան,  
Պիտի խորտակեմ որտիդ սատանան, —  
Պիտի ժամանեմ իս նավահանգիստ:

### IX

Ո՛չ քեզ, ո՛վ մուզա, բարձր Օլիմպից  
Կանչում ևմ այստեղ, հողանլութ երկիր.  
Գու ինձ մի՛ հյուսիր պսակ դափնիքից. —  
Այն քնարներին կիսաթել շնորհի՛ր.  
Իմաստակների ցնդած ուղեղին  
Գեռ ոմիս ազգել թովիչ զորություն,  
Հաշի՛շ, ո՛վ մուզա, — թո՛ղ թևավորվին,  
Թո՛ղ հարբին — հետո ի՛նչ ճարտարություն:

### X

Ասասպելական կեղծյալ տիտաններ  
Թո՛ղ իոկականի ընդունին պատկեր,  
Հրեշների շարքն երեսլանան,  
Եվ բոլոր ցնորք լայնափոր հնության:  
Վեճափա՛ռ սագե՛ր, քնա՛ր լարեցեք,  
Ո՛չ ձեր պապերը Հոռոմ փրկեցին.  
Առանց հանարի զուռնա փշեցե՛ր,  
Թո՛ղ աշխարհ լսե, թո՛ղ փառք տա երդչին:

### XI

Մաղրածուների գործերն ցավագար,  
Աղջում եմ ես, Ժամ մի դագարեն,

Որոնք համոզմում են, ուստի ալ դադախար  
Այսօր պնդում են, որ էգուց հերքեն.—  
Անտաշ մրողներ, որ գարշ բսություն  
Հանապաղ ունիք ձեզ հաղորդակից,  
Կապեցի՛ք սակավ ձեր ոռղուն լեզուն,—  
Առավել օգուտ ունիք դորանից:

### XII

Անցավ ժամանակն երևակայել  
Ավազուտ դաշտում դալար ծաղիկներ.  
Եվ դադարեցի՛ք ցնորաբանել  
Հայի մեծության ոսկի երազներ:  
Մեր խավարի մեջ մինչ գլուխ թաղած,  
Կամինք հասանել երկնի բարձրություն,  
Մեր բարոյապես անշափի հետ ընկած,  
Մխում ենք մեղ խոնկ և ջարդո անուն:

### XIII

Մեր զարմանում ենք և ծափ ենք տալի,  
Որ Հայը զարթից յուր երկար քնից.  
Բայց մենք շենք տեսնում այն սարսափելի  
Փոսը, որ նորան փորում են տակից,  
Եվ մեզ դովելով և մեզ խարելով,  
Զե՞նք բացում արդյոք դուսը կորստյան.  
Ո՞չ անմտությամբ, ո՞չ շար ձեռներով  
Զդում ենք կամուրջ մեր թշվառության:

### XIV

Մաշեցինք մեր խելքն անօգուտ գործով,  
Գիշեր ու ցերեկ անպտուղ անցան,  
Մենք վսրատվեցանք անցածի սխալով,  
Եվ ձեռնարկեցինք մենք ամենայն բան:  
Մասինցինք գրիշ ոսկու ճաճանշին,  
Վաճառեցինք սիրտ և ազնիվ հոգի.  
Լոեցավ մեր մեջ խիղճը մարդկային,  
Եվ մնաց ավեր կյանքը հայ ազգի...

### XV

⊕ | Եվ ազգ գոչեցինք, և օդի վերա  
Դրեցինք հիմքը նորա կրթության,—

Յգ մենք խարեցանք, որպես երեխա,  
Եվ հայի վերը մնաց անդարման։  
Խամար գրվածներ, կաղ, կույր, բռնադատ  
Բանաստեղծություն և թարգմանություն  
Տվեցինք Հային, և նա հուսահատ  
Փակեց ականջներ և մտավ յուր տուն։

#### XVI

Չգեցե՞ր փետուրն աղավնեական,  
Մերկապարանոց եկե՞ր դուք հանդես, —  
Թո՞ղ լավ ճանաշե աշխարհ ամենայն,  
Որ ագուավ եր դուք կամ բու սեատես  
Այսաեղ կտրում եմ իմ խոսակցություն, —  
Ես շտապում եմ իմ վեպը պատմել.  
Մենք կհանդիպենք մինչ ի տեսությո՞ւն,  
Զեր հետ հաշիվը դեռ չէ՝ վերջացել...

#### XVII

Ո՞վ դու Մուկվա, քո փողոցներում  
Արդեն խոնում է հանդեսն շտապով.  
Այլք ժողովում են մագաղիններում  
Պատրաստել տոնին ընտիր ճաշակով  
Նորագույն զարդեր, փողապատ, ձեռնոց,  
Քորոց, նուրբ բեհեզ, շալեր մետաքսի,  
Պատմուճան, սալոպ, լունետ, հովանոց,  
Թաշկինակ բատիստ, մանյակներ ոսկի։

#### XVIII

Քողեր մեծարվեստ ասեղնագործած,  
Բուռնուս գույնզգույն վերջավորներով,  
Եվ նոր գլխարկներ ոսկեթել նաշխած,  
Եվ բարակահյուս ժապավեններով.  
Եվ ամենայն բան, և ամեն լաթեր,  
Որով պարապ մարդ կարող էր պճենել,  
Եվ որ գեղագետ, և որ նորասեր  
Ֆրահսիացու խելքն է ստեղծել։

#### XIX

Իի են բազմությամբ ժողովարանների  
Թնդում է թատրոն բաղցը երաժիշտով։

Աշ-Ճախ թերելով ճոճում է ոտեր  
Գերասանուշին,—ի՞նչ արվեստով:  
Մափահարությունը ցածից, վերիից,  
Խլացնում են մարդուա լսելիք,  
Եվ թատրոնամերը բաղկաթոռներից  
Չոնում են առատ սիրո Հետ դափնիք:

XX

Բայց նայի՛ր, Մոսկվա, սենյակ մտնելով  
Փակում եմ գոներս երկար միջոցով.  
Մածկիցի՛ք ուրեմն, աղմուկ աշխարհի...  
Եվ թեթևաբայլ գերասանուշի...  
Ողջույն ձեզ, պա՛տեր, ամրաշեն Հիմնած,  
Եվ ծաղկանկար թղթով զարգարած,  
Ողջույն ձեզ, զրի՛շ և թանաքամա՛ն,  
Ողջույն ձեզ, աթո՛ր և զրանեղա՛ն:

XXI

Դեպի գո՛րծ ուրեմն, մի՛ զուցե Հանգչի  
Սրտիս փափագը ոտեր Հյուսելու  
Ի՞նչ պիտի անեմ, թե աշքըդ դիպչի,  
Եվ կիսատ կործիս ուրախանաս զու  
Այժմ ինդրում եմ. թե բարեկամներ,  
Թե շարչացակամբը, ինձ Հետեցի՛ք.  
Չծոե՛ք զրածս բատ Հաճույքին ձեր,  
Ահա՛, և Լեռն,—Հա՛պա լսեցի՛ք:


ԼԵՎՈՆԻ ՎԻՇՆԵ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ॥ ԳԼԽԻ

Լեռնի նկարագիրը, նրա մայրը և ծանոթների անբարեցակամությունը՝ Անոնի ուսման բարի հետևանքը, նա նման չեր յուր ուսումնակիցներին։ Մենք ինչպես կարող ենք լինել հասարակարար ազատ և բաղդավոր։ Լեռնի ցուրտ տիրությունը։ Եվրոպայի ազգային բազագործությունը, և Իտալական սպասարկությունը, որպես շարժառիթ Լեռնի ազգասիրության։ Լեռնի հայ ընկերակիցը։ Նորա սերը, սիրո բնությունը, ախտը և հետևանքը։ Առաջին խոսքը Լեռնի հայի անշարժության վերա։ Կենդանի զրուց ազգության հետ և սուս ազգասերների։ Պարսավանք ուսումնառու հայ երիտասարդության և ոգելից հրավերը ազգասիրության։ Ամենայն բան մնուանում է, միայն բարի գործը չէ մեռանում։ Ճավակիցարար խորհրդածություն ազգի վերա։ Լեռն հոժար է գնալ հայուններ։ Սրտաշարժ հրաժեշտ յուր անցած Սերի հետ, որ ներկայանում է նորան։ Լեռն թօղնում է Սոսկվա, և պատրաստություն է տեսնում այց գնալ հայրենիքին և դպրուան անել նորա խեղճության։

Հեղինակի պարսավանքը ախտավոր ընթերցողին։



## ԼԵՎՈՆԻ ՎԻՇՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԵՐՔ ԳԼՈՒԽ 1

Ты хочешь знать давно--о чем моя печаль  
Которой никогда я не могу забыть!  
Не спрашивай о том; тоску мою  
Кто может излечить?

Байрон.  
(Чайльд—Гарольд пер. Минасова)

Աչ շրերի մոտ, ուր թոշունների  
Նվագում է պարն քաղցր մեղեդիք,  
Կամ անտառներում, ուր տերեալի  
Եվ կանաչազարդ աճում են սոսիք,—

Կամին է և անը կյանքը նկարել,  
Այնտեղ սրբազն էին մեհյաններ,  
Որ քերթողները հանեցան պատվել,  
Այժմ չե՞ն կենում այնտեղ մուգաներ:

Այլ քաղաքի մեջ—և այն աճագին,  
Ուր կհնցաղակոն հոգուներն ենում,  
Ուր ամենայն մարդ տեր է յուր զործին,  
Այնտեղ է և անը ձեզ ներկայանում:

Թե ո՞վ էր և ան, և ի՞նչ նորա ցեղ—  
Չեզ ասելու չեմ,—այդ ավելորդ բան,  
Մի չին հայ տանից, և այն ո՞չ շրեղ,  
Մագում էր և անու—Այսբան բավակա՞ն:

Աչ թի երկուող կա, իմ բարեկամներ,  
Որ մեր և անում է ծածուկ.

Ո՞ւ, ինչո՞ւ ասեմ—երբ օգոստ շուներ,  
Եվ խնդրում եմ ձեզ չնեղանաք դուք:

Մայր մի ուներ ծեր: Նորա տեսության  
Խիստ փափագում էր կեռն կարոտից  
Քաղվում էր հոգին, և առվի նման  
Արտասուր հարուստ թափվում էր աշրից:

Մի մայր էր միայն, ծերության ալիք  
Սրգեն խորշեթած ճակատի վերան  
Տպավորել էր յուր տիտր կնիք,—  
Մասամբ կեռնը պատճառեց նորան:

Եվ սիրում էր շատ այդ ալեսրը.  
Երեմն, ասում են, մաշված վշտագին  
Կը մեռներ կեռն.—բայց պառավ մայրը  
Յուր հիշատակով սաստում էր ցավին:

Ուներ մի բանի և բարեկամներ,  
Որ, ինձ անհայտ է, մի կուրութենով  
Խորտակել նորան ոտով ու գլխով  
Զանադիր էին,—կեռն այդ գիտեր:

Եվ այդ վայրահաշ անառակներից  
Խիստ վշտացել էր առաքինություն,  
Եվ խոռվել էր Աստված դոցանից.  
Խոռվ էր, այո՛, և ճշմարտություն...

Մարդիկ սովոր են, մանավանդ անկիրթ  
Եվ՝ ասիացի նեղատես հոգով,  
Հայհոյել մի մարդ, մի անկաշառ սիրու,  
Եվ ամեն գործին նայել շար աշքով:

Ինչ ատելի է բարեխոռ սրտին—  
Դորա գրկում են և համբուրում են,  
Ողջույն ըբտալով սուրբ հրեշտակին—  
Բանսարկու դեմ նախապատվում են:

Իմ ցավըս այն է, որ այդ գարշելիք  
Պղտորում են կյանքն պարզամիտների,  
Թեև ի վերջո են այպանելիք,  
Պատճառ, չկա բան, որ լըհայտնվի:

Միտ շունելով ևս երկաբանել  
Լեռնի նախկին կրթության մասին,  
Հնմերցողներից կամեի խնդրել,  
Որ այդ պարսավանք ինձ չհամարին:

Այսքան. Լեռնը նման չէր նոցա,  
Որ մտանելով համալըսարան,  
Կամ թե բարձրագույն մի ուսումնարան,  
Զկամին դնել պարտք յուրյանց վերա:

Ողջունել հոգով մայրենի լեզվին,  
Ծնչել նորա կյանք նորից մկրտվել,  
Որպես մտածող անդամ յուր ազգին,—  
Հնդունակ անձը նորան նվիրել:

Եվ մի ազգ թշվառ, որ բարոյապես  
Հասել էր գրեթե յուր անփառք մահվան,  
Կարո՞ղ էր հուսալ դոցանից մի պես  
Վերանորոգիլ հարության նշան:

Լեռն յուր բոլոր ուսման շրջանից  
Այսքան ինչ կարաց հետեւեցնել.  
«Ես պիտի լինիմ մարդ ազատ, անբիժ,—  
Եվ ես կարող եմ իմ ազգը սիրել»:

Ազատ մարդ... որքան սա ավետական  
Խոստանում է մեղ անդին հավաստիք.  
Առանց լիածեռն ազատության,  
Զկա լիածեռն և կյանք երշանիկ:

Եվ ազատություն կարող է լինել,  
Թե դադարեինք երազ երազել,  
Թե գործելով դաշտ մտավորական,  
Խեղդեինք ցնորք—տգետին սիփական:

Եվ բարոյական ուղղություններից  
Մինը ուներ նա հաստատուն կանոն.  
Ճիւարի գործել», —այս, ասում էր կյանքից  
Է այն հազվագյուտ մեղ մավզոլես:

Բարի գործելով մենք ընդհանրաբար  
Կարող ենք գտնել բաղդը աշխարհին.  
Ես բաղդավոր եմ, թե այդ բաղդն ունիս  
Եվ դու և հարուստ, և տնանկին անճար:

Ո՞վ հայրենակիցք, քանի՛ եթ թվով,  
Ո՞ր այդ աշքերով նայեիք կյանքին,  
Ո՞ր վայելեիք խաղաղ, անխռով  
Այդ բարի վիճակ, այդ բաղզ բաղցրապին:

Քանի՛ եթ թվով, որ վեհանձնաբար  
Սկսեիք գործը Հասարակության.  
Ո՞ր ծեր, ծաղկեր, ամոքը բարձրանար  
Ոսկե տաճա՞րը սուրբ բարօրության:

Որ լուս և ուսում այցելու լիներ  
Եվ ըստ պալատին, և քո խրճիթին,  
Որ յուր բաղդն ու կյանք առաստ անձրեւը  
Քրտնած, աշխատած աղդիդ ճակատին:

Տիուր, միակերպ անցանում էին  
Լեռնի օրերն, որտասուշ զրկված  
Հարազաներից, ավել էթ վշտին  
Աճելով աճել, աշխարհից փախած:

Բայց և Հարադատը, արժան է ասել,  
Չկարծեմ, որ վիշտն էլեռնի որտի  
Կարողանային մի օր վիարատել.—  
Ո՞վ, շատ կարծը է սիրտն այդպես մարդի:

Նա կյանք չեր վարում ձգնավորական,  
Եվ, միշտ խնդրելով խոսք ու զրուցներ,  
Պատրաստ էր մեկնել ձեռն մտերմության,—  
Բայց ընդում էին դորան շատ փորձեր:

Աշ մեծ Հանդեսներ, ոչ այլ խրախճանք  
Կարող չեր նորան հաղորդել ծիծաղ.  
Նա որոճում էր մի ներքին վարանք,—  
Ինչպիս կարող էր լինել նա ուրախ:

Եվ ցրտասառուց խավար դագաղի  
Երբեմն ճակատին ալեկոծվում էր,  
Եվ կծու խայթը ներքին տանջանքի  
Խաղաղ բոպեք թունավորում էր:

Աշ որ շգիտեր Հարցանել նորան,  
Ի՞նչ է պատճառը այդ դան դրության,  
Եվ Համբը կուրծից ոչ ձայն, ոչ հնչում  
Չեր դալի վշտի բացահայտություն:

Քայլց թե՝ խորամուս հայացք ձգեիր,  
Փոքը առ փոքը նշմարանք ցավի  
Գուշակում էին, որ նա վշտակիր  
Մըգում է կորուստն հարազատ աղքիւ:

Նա տեսանում էր, որ անօրինակ  
Ոգեկորությամբ ներշնչած ցեղեր,  
Կյանք են նվիրում որպես նահատակ,  
Մահաբեր դաշտը ծածկում են զոհեր:

Նա տեսանում էր և իտալական  
Ծաղկապյալ սիրո միությամբ կնքած  
Հաջողակ դործը, և գորիբալդյան  
Զենքի հաղթություն, այսքան հուշակված:

Փրկության քրիստոն հորդորիւ ձայնով  
Ընթացավ ահա ազգերի միջին.  
Զարթեց բեանավորն նորոգված ողով—  
Ողջունեց սիրով հասարակ դործին:—

Փայլում է դրոշն մեծահոգության,  
Թափկում է արյամ հայրենասիրի.  
Իրավունք, պատիվ, նշանք ազգության  
Վերականգնում են որպես մի կաղնի:

Ո՞վ ձայն Աստուծո, —և աշխատյաներ  
Գալիս են հանգչել մեծ վաստակներից,  
Երկրագություններ, դափնի պսակներ  
Բիրում են նոցա ամենայն կողմից:

Էռաւավորություն, որպես արեգակ  
Հարազատ հողի երկնակամարին,  
Սկսում է սփառել հառագայթարձակ  
Եվ ուսում, և կյանք, և բաղդ մեծագին:

Եվ բանությունը —այդ վատթար գազան,  
Անգութ կորստի գրկում է հարված,  
Մոլի իշխաններ և ողեկործան  
Բարձր գահութից գլորվում են ցած:

Գլորվում են ցած, —և այդուղի դոցա  
Պատրաստ է դամբան արհամարհանքի.  
Ազատ ճանապարհ բացվում է ահա  
Եվ մարդու հոգու, և մարդու մտքիւ:

Բայց Հայոց ազգը — տիսուր անապատ...  
Անբույժ նետերով խոցված վերավոր,  
Խալար, նյութապաշտ, երկու և վհատ,  
Միրող շարություն և փառք անցավոր:

Ահա, ո՞րպիսի մասծություններ  
եռոր շարժում էին կեսնի հոգին.  
Նա մինչև անդամ միշոց չգիտեր,  
Որով ձեռնտու լիներ յուր ազգին:

~~Ե~~սորա համար առավ նա յուր ձեռն  
Սյու մինակ հնարա, որոշեց գրել  
Թյուր սկըզբները այն կորստարեր,  
Որով Հայի կյանքն իսպա՛ռ էր խախտվել:

Կեսն համատիք ընկերներ ուներ  
Նոցանից շատերն պարծենում էին,  
Որ Հայ են ծնվել, բայց Հայի խոցեր  
Նոցա խաղաղ կյանք խանգարում չէին:

Նոցա նպատակ — սնափառություն,  
Նոցա խոսքերը — աննշան հնչյուն:  
Ազգ ու Հայրենիք, պարծանը ու պսակ,  
Կրկնում էին, որպես մի թութակ:

Անգործ պճնասերը, փառքից մոլորված,  
Քան թե երազել կանգնումը Հայի,  
Լավ լինելու չէ՞ր, որ կոկված, ձգված  
Կուռ տայիք փոշին դուք մեծ աշխարհի:

Այնտեղ կարող եր գտնել սիրեկան —  
Տասնուշինդ, տասնումեց, տասնյոթ տարեկան,  
Հրեշտակի լիդվով Ֆրանսիացիք,  
Եվ Ռուս, և Էկհ, և Գերմանացիք:

Նոցա կերպարանը փայլում են սիրով,  
Բայց միայն, ափո՞ս, զահերի շնորհով,  
Երբ օրի լուսը դոցա ողջունեց,  
Ա՛խ, սնը փախալ, գաղտնիքը բացվեց:

Այդ ձեր բանը չէ՞ դուք ծառայական  
Կարող եր հարկ տալ զոցա հաճույքին,  
Գողդոչուն սրտով եղեգնի նման  
Երեք տակ ճկվել և մհա՞լ վարձին:

Հայտնի է, որ Հայք խիստ են այս մասին,  
նվազումում խնձորն փորձության,  
թեև սիրո ախտ դոցացուց տային  
Եթեղ առյուծը մեծ աշխարհական:

Այսպես սովոր ենք կոչել «մեծ աշխարհ»  
Աւո խայտաճամուկ ամբոխը ունայն,  
Քիթը վեր քաշած, սիրում է տխմար  
Չերճությամբ փայլել, ձայն տաւ մեծության:

Մեծ են խոսքերով, բայց վճար հոգով,  
Վերջացած ազնիվ ձգտողութենից.  
Գառարկության մեջ կյանքը մաշելով,—  
Ողորմելի են թշվառականից:

Չըսիրեց կեռն և ո՞չ իսկ մեկին,—  
Սպալինեցավ լուս առանձնության,  
Փախավ ձպիտը, և խեղճի հոգին  
Չըդառավ կայծ մի միհթարության:

Նա զուրկ չէ՞ր սերից. մի ժամանակ կար,  
Երբ սիրո անուզը խորհրդածություն,  
Որպես անձրեւ դարնան զովարար,  
Տալիս էր և կյանք, և նոր զորություն:

Ո՞վ սեր, ո՞ւմ արդյոք, որի մեջ մատադ  
Քեռ ես է գալի մանկական արյուն,  
Քնորուշ պատրանքով, ո՞վ ոդի շքնաղ,  
Զիս գրել թակարդ դեպ ի գերություն:

Եվ պոետական երկութներով  
Ո՞ւմ շրջակայրը շեմ լուսավորել,  
Որ կենդանությանդ վառված նշույլով  
Թեզ սրտի խորքում սեղան է կանգնել:

Սա՞ռն է այս դարը,—և ես ավելի,  
Քան թե մեկ այլ ոք, արհամարհում ևմ  
Նյութապաշտությունն նորա անհոգի,—  
Հակառակ դարիս, Սե՞ր, քեզ երգում եմ:

Երգում եմ թուլնը դառն հարվածներիդ,  
Ռիթը ծաղկում է բաժմակը կյանքի,

Եվ քո, որպես օձ, գալարուն Շմիտ,  
Եվ դժո՞խթ, և դրա՛խտ ճրապուրանքի

Սիրելով միայն ես ճանաշում եմ  
Զարդարո՞ղն աշխարհ, Ստեղծողն երկնի,  
Սիրելով միայն ես բարձրանում եմ  
Դեպ ի վեճավայրն Արարշապետի:

Եվ ես մտախո՞չ կուսի աշքերով  
Գոտանում եմ այն, որ գիրք մի գեռ ես,  
Որ ոչ իմաստուն յուր գրիածներում,  
Ո՛չ պոեան երդով չափանդեցին մեզ:

Թի ցուրտ կանոնը Նյութապաշտների  
Առորբ շեմիդ վերա ուրբ կոխեր, ո՛վ Մեր,  
Մեզ կը կաշկանդեր ձմեռ սոսկալի,  
Եվ հետքըդ անգամ երկելու չեր:

Այլ ես ուրախ եմ, ոտը հնթակա չես  
Ռշինչ իմաստակ եզրափակության,  
Եվ դուխանում եմ քեզ առաջվա պես.  
Կանոնը շռնի մուտք բո ավազան:

Բայց ներողություն, որ ես այս անգամ  
Ընդմիջեցի խոսք և թել զրուցիս.  
Ինքըդ մտածի՛ր, ազնի՞վ բարեկամ,  
Զեմ կարող լոել, ի՞նչ թանկ է սրտիս:

Եվ ես մի մարդ եմ ո՛չ առանց մեղքի,  
Եվ ես սիրել եմ առանց ճանաքի,  
Սիրել եմ մենակ, և բաղդն անարդար  
Զեմ զարդարել իմ սիրո ճանապարհ:

Թիկ Լեռնը սիրեց անհաջող,  
(Թուր ալդ կիմանաք—ալլեւ երկու տուն).  
Բայց ալս դիպվածից չկարծես, ընթերցո՞ղ,  
Որ կեռն և հո—նուզն ենք, մի արյուն:

Համբ'ր, առնում եմ թելք պատմության,  
Թո՞ղ նատի ախտը քո ինքնահավան.  
Ալդ ներելու չէ երրեք քեզ Աստված.—  
Խորթ է սիրո հուրն սրտիդ բարացած:

Եւոն սիրում էր մանկության օրին:  
Այն մի նազելի պարկեցա ազգիկ էր.  
Փոքրիկ փափկամորթ ուներ նա ձեռներ:  
Նորան շուտ թողուց հոգով վրդովմած,  
Երբ նախանձն ձգեց նորա մեջ կանկած,—  
Եվ այս է սիրո ընկեր անմեկին:

Իսկուզն նկատեց աշքը սրատես,  
Որ գիշեր ցերեկ, որպես մի ատվեր,  
Հածում են ախտուտ այն գժոխերես  
Նորա հետքերով երիտասարդներ:

Որբան չերժեռանդ սիրում ենք մեկին,  
Նույնշափ հետամուտ ենք նորա սրտին.  
Ամեն մի կասկած, խոր վարտահամբավ  
Սիրունու վերա—պատճառում է ցափ:

Ապասում է գութ, կրակված աշքեր  
Թափում են նախանձ վրեժխնդրության,  
Եվ պատահում է, ո՞վ ախտ մահարեր,  
Որ զո՞հ է զնում քնքուշ առարկան:

Արյունաշաղախ անկավ Դեզդեմոն  
Կատաղութենից սիրող ամուսնու,  
Բայց մեղավո՞ր էր կրակոտ Օթելո՞ն,—  
Նախանձը խոռվեց կուրծքն Աֆրիկեցու:

Թիկ դժվար է, որ մեր ժամանակ  
Մի երիտասարդ, գրգոված նախանձից,  
Խեղգեր ամուսնի յուր բարձերի տակ,  
Եվ ինքը խեղդվեր ահագին ցավից:

Այժմ տղամարդիկ բատ մեծի մասին  
Մեր կանանց համար երկուզալի շին,  
Նորա հետնում չեն այն ոև Մավրին,  
Թի անսրբության հետք ինչ նշնչարեն:

Բայց միայն նորա մի այլ կին կընտրեն,  
Առնելով լոկ ինչ հավատարմություն,  
Եթե սա խարեց—և նորա նորեն  
Կըգոնեն յուրահանց բաղդավորություն:

Արդեն մանուկ այդն արձակվեցավ վառ,—  
Փալլեց արմելը, օրի հոգսերով  
Եցվեցավ աշխարհ։ Քաղցր դայլալիկով  
Ողջունեցին օր թոշունների պար։

Անդործ ժողովուրդն արդեն կառքերով  
Խնդրում է յուրյան ուրախություններ։  
Բայց էնո՞ն.—Էնոն հուսահատվելով  
Թափում է սրտի կոկիծ ու վիշտեր։

Եվ նա քայլքայված հոգով և մարմնով  
Նմանէ, ասես, ծովին ալեկոծ։  
Արտասվախառն հոնքերն կիտելով,  
Վերջապես հանեց մի շատ խոր հոգոց,—

«Տիուր նայում եմ ներկայի վերա—  
Բոլոր գոյությունս արյո՛ւն է կոխում,  
Եվ Հայի կյանքը կորակոր ահա  
Մի աքտորանքի խուց է երեսում։

Սբածայր նետեր, դաշնակ և նշտար  
Ցցվում են սրտումս,—գեղաթափ չունին.  
Խոցված է ուզեղս, լեռնացած խավար  
Պաշարում է ինձ. —նո՞ր զո՞հ տարտարին։

Հա՛յն, որ կործանիլ արծաթսիրություն  
Պաշտում է որպես նոր ավետարան,  
Հա՛յն, որ ծախել է յուր ազատություն,—  
Կարո՞ղ է հաշվել անդամ մարդկության։

Որ բարոյական ցավի մեջ ինդդված,  
Գարշում է գիտել խորհուրդը կյանքի,  
Որ անշարժությամբ վիճակագրած,—  
Կարո՞ղ է հոնալ մի ապագայի։

Հա՛յն, որ չէ ողբում յուր հայրենիքի  
Հոյակապության փլատակնելը,  
Որ մոռացել է յուր գյուցազների  
Հիշել արյունով կնքած գործերը։

Հա՛յն, որ չէ ծածկում կուրծքը զրահով—  
Այրել խավարը անշեց կրակով,  
Գնալո՞ւ չէ զո՞հ անդարձ կորմայան,  
Որպիս գնացին մարդիկ անշան։

Չկամիմ այսօր, ո՞վ սուրբ ազգություն,  
Զբոցել քո հետ կաշառված գրչով,  
Հեռու մեղանից շողոբորթություն,—  
Թող ողջունե՞ն քեզ ծերերն պիզծ գրկով:

Քե՞զ, ա՞զդ, սիրում եմ, բայց ոչ այն սիրով,  
Ռուզ սիրել են քեզ մինչև այսօր.—  
Այն մեղք է եղել լի շարութենով,  
Եվ տգիտության կեղծավոր ցնոր:

Եվ այդ նման էր այն հիվանդության,  
Ռբից գարշեցան հմուտ բժիշկներ.  
Չունեիր նշան դու կենդանության,  
Լուծվել էր մարմնիդ զգայարաններ:

Եվ ահա՛ ինչու, թշվա՛ռ հայրենիք,  
Չունեիր դու բաղդ և ազատություն,  
Եվ ահա՛ ինչու քո ցափոտ որդիք  
Խեղդվեցան, անկան անդարձ գերություն:

Ա՞խ, թե մի ժանտախտ կարեի բերել  
Այդ հայրենասեր խելադարներին,  
Եվ մի ահադին գերեզման գլորել,  
Եվ նո՞ր սկրզբունք ավետել Հային:

Ապօրինավոր որդիք ազնիվ մոր,  
Զեր հետ է խոսքըս.—Էկե՛ր հրապարակ,  
Դուք, որ պնդում եք թաղել այն հզոր,  
Այն անթաղելին ներկա ժամանակ:

Դուք, ազգեսր, որոնք առագաստ պարզած,  
Սուատ շահվում եք հաջողակ հողմից,  
Ռունք սուրբերի զգեստով ժպտած,  
Մծում եք Հյութը խեղճ Հայի կյանքից:

Որոնց մեջ տարերքն այնպիս են խառնըված,  
Որ բնությունը ինը սարսափած,  
Կարող էր գոչել. «ահա ձեզ մարդիկ,  
Գնայուն մեռյալներ, գեհենի որդիք»:

Ա՞չ, խե՞ղճ Հայ, խե՞ղճ Հայ, քեզ պատառեցին  
Այդ ոչխարինով փաթաթված գալլեր.  
Գլխիդ զարկեցին, զանձերդ խեցին—  
Վակալ հարճերին տանելով նվեր:

Եվ եղիսկական դժնյա ախտերով,  
Անբախտ ժողովուրդ, վարակված ևս զու,  
Հարստահարող երկաթի բաղկով,  
Ո՞չ, կը լափե քնզ կորուստ մահացու:

Անգի՛ն Հայրենիք, — ցավերիս պատճառ,  
Մահ է ընթանում ճակատիդ վերա.  
Հափշտակության ուժին շարաշար  
Սրում է երկսայր գերանդին դժնյա:

Սոսկալի տանչանք, անթաղ դիակներ,  
Ծղթաւէք և կապանք, և դառն արտասուր,  
Անգութ կոտորած, և մրմունք, և սուզ,  
Եվ Հարազատիդ արյան առուներ, —

Գեռ այս դժո՞խրին դու պիտի տանես,  
Թշնամու կողմը բարձյալ կը շարժիյի,  
Գեռ վերքին բաժա՞կը պիտի ըմպես, —  
Եվ այն բաժակն է օրհասականին

Իսկ թե Հորդզուն բացվի կրթության,  
Կը բացգի և քեզ դուռը քրկության.  
Նորից կը ծաղկեն քո բուրաստաններ, — | (P)  
Նոր կլանք կը շնչեն մեռած անդամներ:

Եվ Հայությունը... և, ո՞վ դու ցնոր,  
Ի՞նչ ես ինձ տանջում, աշխարհի առջ  
Աւրացանք Հային և Հայի արև—  
Ի՞նչ պիտի ասեն Հետինք սըգավոր:

Հայրենի ազգ խմ, — տիսուր անապատ,  
Գեռ կարող էի խեղդել արտասուր,  
Թե դառն անցածից բաղելով խրատ,  
Թու վատ սերունդը մեկներ քեզ բազում:

Թե այդ ըս թշվառ վիճակի վիշտը,  
Մերկացած դեմքով յուր կժոխային,  
Ուտեր, թափանցեր թոռներիդ սիրառ—  
Ռոսկ' քհզանով գոնյա ցավեին:

Որդի՛ք մոլորյալ, դուք պիտի Հասկանաք  
Այդ նախատինքը Հայրենի անվան,  
Պիտի հետ բերեք ազգության պատկ,  
Թե շկամիք դուք զնալ գերեզման:

Նո՞ր ազգ, ո՞վ նոր ազգ, դու շես խոստանում  
Հայության լինել պատվար՝ և նեցուկ.  
Հայն հառաջում է,—դու շես նվիրում  
Համազդացության նորան արտասուր:

Նո՞ր ազգ, անփառը է կյանքիդ ասպարեզ,  
Թե ազգիդ համար քրտինը շրթափես.  
Մեռած էիր դու, որպես գիրեզման,  
Թե չկնացիր մշակ ազգության:

Ա՞յս, դուք զգացե՞ք ձեր մոր խիստ կապանք,—  
Դորան կարոտ է թշգառ հայրենիք.  
Ապա եթե ոչ—անչինչ անարդանք  
Ազգը կը դնե ձեր վերա կնիք:

Թո՞ղ քաղաքական մեծամեծ գործեր  
Այսօր չանցանին ձեզ համար ունայն,  
Թո՞ղ ծաղկեն այսօր քաջառողջ սերմեր  
Անդին շինվածի ազգասիրության:

Թող տիուր անցյալ մեր՝ համար փոխվի  
Մի պայծառակարդ փառավոր ներկա,  
Որ վերաճելով ազգության ժիշեր,  
Երեսն հանե ուկե ապագա:

Եվ այն ժամանակ, ո՞վ օր ոգելից,  
Որոտալու է ձայն ազատության.  
Զախշախված, փշրված անարդութենից  
Փողփողելու է դրոշն ազգության...

Փառավոր ձակատ հայրենասիրի—  
Զարդարելու են դափնիք փառավոր,  
Որ նահատակ է փրկության ազգի,  
Արձան կը տնկեն մշանչենավոր:

Քարեր են գնում, դարեր են գալի—  
Ավանդություններ անհետանում են,  
Միայն արդասիք ազգաշեն գործի  
Հասարակ երդով անմահանում են:

Եր մեռանում եմ, որպես շնչափոր,  
Բայց բարի գործերս մեռնել կարող չեն,  
Նորա անմահ են, որպես երկնավոր  
Աբարչի տիեզերք, թիկ դաբը սահեն:

Այսօր ձնել հնը, որ էգուց մեռնենք,  
Որ մեր հողիցը նոր ազգեր դուրս գան,  
Մենք, որպես ալիք, միմյանց փոխում ենք,—  
Այսպես է վճիռն մարդկեղեն կոչման:

Եվ նորա համար իմ կյանքն ունի գին,  
Որ պիտի չնշվի և ոչնչանա,  
Որպես ծաղիկը աշնան միջոցին,—  
Ենչեց փոթորիկ—և ահա՛ չըկա:

Եվ նորա համար ես բանավոր եմ,  
Որ մինչ հետին շունչ պիտի մշակեմ,  
Միշտ մտածելով և բարձրանալով,  
Գիտության Հո'րը ձեռներըս պարզեմ:

Ո՞վ սուրբ հայրենիք, այդ ինչ զորություն,  
Որ կազե քո հետ սերը մեր սրտի,  
Ինչո՞ւ մենք պայծառ, երբ բարօրություն  
Արտերիկ վերա զեղում է ոսկի:

Ինչո՞ւ մենք ամպած, երբ խոնարհում ես  
Փառավոր ճակատ,—մենք մրրկալից  
Չարի առաջեւ կանգնում ենք, որպես  
Դարեւոր կազնին անշարժ նետերից»:

Մի՞թի, ընթերցո՞ղ, դու չես նկատում,  
Որ վաս է կառն որպես մի հնոց.  
Տես ի՞նչ հոսանքով է նա ծավալում  
Ազգասիրության այն սրբազան բոց:

Եյդ հառաջանք է հոգով խոցվածի,  
Մի խորին կսկիծ վշտալի սրտի.—  
Միբար, որ պատրաստ է խսպառ պատառվել  
Եվ հիվանդ եղբար միրկություն գներ

«Յերեկ մրրկված, գիշեր գիշական...  
Յուրատ երա՞զ... բժժա՞նք... և բոնք աշքիս  
Հափշտակվում է—վշտի ուրվակա՞ն:—  
Ո՞չ վերջ, ո՞չ հանգիստ ալեկոծ մտքիս:

Ես շարագործ չեմ, ինչո՞ւ կապուտակ  
Չէ ժամում երկինք: Ո՞ւր օրեր վարդի.  
Ավա՞զ, վաղ ընկան տարտարի հատակ,—  
Աշխա՞րհ Աստուծո, բանտ ես զզվելի:

Թարշամում է սիրտու—ակա՛նչ գրեցեք,  
Այնտեղ կը լսեք մի տխուր շըշյում,  
Ռբակն տերեւ ծառից կիսաբեկ,  
Տալիս է մահին հիվանդու աշուն:

Թեւեր տվեցե՛ք և մի ժամ պարապ,—  
Դեպի արեւելք կանաչազգեցիկ,  
Ահի պարանոց, որպես մի կարապ,  
Ռւրախու կը թռչնի անդին հայրենիք:

Կը թողում հյուսիս, բնության դադար,  
Եվ հիշատակներ պատանեկության,  
Եվ բարեկամներ, և կուս մի շքնար,  
Որ սեր շնչեց ինձ պղատոնական:

Այո՛, այն կույսը, որ իմ սրտիս մեջ  
Մավալեց և սեր, և խաղաղություն,  
Երբ ցնորների բաղցը ելնեց  
Բացեց ինձ դրախու և անմահություն...

Եվ հիշատակը հեռու անցյալի  
Հիշեց կեռնին երջանիկ օրեր,  
Երբ ոգեզմայլիշ և հրաշալի  
Առաքեն սիրու փայլում էր լապտեր:

Եվ ներկայացավ նորա տնաշե  
Մարտուր առագաստն հրեշտակ գնդեցկի,  
Եվ մեզի տակից նշմարեց արև,—  
Երգե՛ց ակամա այսպես մեղեղի:

I.

Թո՞ղ շրսահեն ցողուտ շիթեր,—  
Ժամ' լու է, որ ոռոգում են.  
Ո՛չ մանուշակ և ոչ վարդեր  
Այդ շիթերից կը բանեն:

2.

Ո՛չ սեր իմ մեջ մշտածաղիկ  
Կը նորոգեն բաղցրագին,  
Ա՛յս, դժոխու և վիշտ շարարաստիկ  
Արդեն դոքա շարժեցին:

Որպես հրեա թափառական  
Ամեն տեղ եմ, —ո՛չ մի տեղ.  
Ո՞ւր է վարում բաղդիս ուսկան,  
Մի՛ հարցանիր, կույս անմեղ:

Ես չկամիմ, որ իւանգարվի  
Ոսկի դրախտը մանկության,  
Որ քո աշերդ ցավով լցվի,  
Կամ թե հայացքդ սիրաբժան:

Դու տեսի՝ ես ալեկոծ ծով,  
Երբ փոթորիկ մի ուժգին  
Տարբերվում է մրմուալով. —  
Այդպես է և իմ Հոգին...

Իմ կյանքը ինձ բեռը դարձավ,  
Վերա հասավ սև գիշեր,  
Անուշ ճպիտը հոգուս փախավ, —  
Աստված օրջնի քո օրեր.

Ծիածանի իւաղարկություն  
Թող փայլն զո երեսին,  
Եվ սոխակի նվագածություն  
Միշտ հնեկ՝ քո ականջին:

Ես քեզ մի օր փայփայեցի,  
Որպես պայծառ աղավնյակ,  
Միոր ծոցին քեզ կոչեցի  
Ե՛ւ երկնային, և Հրեշտակ:

Այլ այժմ ների՛ր, ճակատադիր  
Վերսու զրեց լուծ սաստիկ.  
Ես պիտ' շրջեմ երկրից երկիր—  
Մինչև գտնեմ Հայրենիք:

## 10.

Եվ Հայրենիք... բայց ո՞ւր է նա.  
Քանի՛ զնաց արտասուը—  
Երբեք նորան ես չտեսա...  
Չե՛թ երազով վաղանցուկ:

## 11.

Եվ Հայրենիք... բայց ո՞ւր է նա.  
Ահա ուրեմ ծածկվիցան,  
Եվ արեգակն և ծով ահա'  
Մեր աշքերից հեռացան:

## 12.

Այն Հայրենիք, որ կապարդա  
Ծղթաներով կապկած,  
Անբույժ խոցեր կուրծքի վիրա,  
Բնավ դարձել է ալերած:

## 13.

Սի՞րո իմ, սի՞րո իմ, վշտի Հատակ,—  
Պարտե՞ղ թօնուա բուզմերի,—  
Զգացի՛ր ցավու և արդ վիճակ.—  
Գուցե վերջն է բարի:

## 14.

Գուցե, գուցե մի օր կը գա,  
Մի թանկագին ժամանակ,  
Երբ Հայի բեռն կը ճեղտանա, |  
Կըմպէ կըթության բաժակ:

(Y)

Մնա՛ս բարյավ, մաքո՛ւը հրեշտակ,  
Թո՛ղ բու սիրտը շմորմոքի.  
Քեկ մեսնենը այլ աստղի տակ,—  
Բայց մա՛զը մեղ կը զուգե,

Պետք է նկատել, իմ ընթերցողներ,  
Որ կեռն հաջող գիտեր, շնորտած  
Գրքերից, տողել ոգելից երգեր.—  
Ազդու էր բնաբն, լարերը վարժված:

Երբ առանձնություն ախրում էր նորան,  
Երբ հարձակվում էր գեր վիշտերի,--  
Ճապուկ մատներով ներդաշնակածայն  
Զարկում էր քնարին, խիստ ախորժելի  
Տարածվում էին գաշըն ակորդներ,  
Եվ գիշերային անգորությունը  
Նորա կախարդիչ կյանքով լցվում էր—  
Թարում էր կեռն յուր տաղակությունը:

Երբ կինցաղական փոթորիկներ եց  
Ալեկոծվում ենք երկար միջոցով,  
Երբ ներքին ծանր պատերազմներից  
Խոռովում ենք մենք կամքով և հոգով.—  
Մենք՝ զորանալով հիշում ենք օրեր,  
Ամենապայծառ բոպեր մեր կյանքում.—  
Մանկության զուարը—այն առաջին սեր—  
Մեր մուայլ մտքում է կենդանանում:  
Մեղ մի անգամից շեն թողում հրճվանք,  
Հանկարծ չէ զնում և վառ մանկություն։  
Եվ մենք զգալու չէինք մեծ զրկանք,  
Թեկ ուրանար մեղ ուրախություն։  
Բայց անմա՞ն դրախտն այն նվիրական,  
Որ նախկին սերը հասաշ է բերել,  
Բայց ոգևորյալ ժամերն ոյութական  
Երբեք շենք կարող մեր մտքից հանել։  
Արդարեւ այդ սերն կարող է թագչել  
Կամ թե խավարել, բայց ոչ թե հանգչել։  
Այսպես երկինքը, ծածկված ամպերով,  
Ցուր հասակ կապույտ գիտե պահպանել։  
Որ գիտե սիրել, և որի սիրտը  
Բերել է յուր հարկ սիրո տաճարին,—

Չէ՛ մոռանալու այդ բազցը վիշտը.  
Թեհ ծերանար ծերություն խորին.  
Եվ ոչինչ չկա այնքան ցավալի,  
Երբ մենք կարում ենք, հրաժարվելով,  
Հիշողությունքը և կապը սրտի,  
Անհրաժեշտին ճնազանդելով:  
Դեռ երիտասարդ է, իմ բարեկամ,  
Լեռն, քո միտն է, որ նա սիրում էր,  
Ի՞նչ զարմանք բան է, թե վերջին անգամ  
Հավիտյան նորան հրաժեշտ ասեր...

Լեռն տիսուր էր. շրջում էր մենակ,  
Սիրոք ճնշում էր վիշտ և տաղտկություն,  
Եվ թե կատարված էր յուր նպատակ—  
Խնայելու չեր կյանքի գոյություն:

Եվ բարոյապես յուր կոչման վերա  
Խորհրդածելով, որտեղից ձգել  
Խուսաստանի մայր քաղաք Մոսկվա,  
Հետ չնայելով փախչե՛լ և փախչե՛լ

Առաջին գլուխը Լեռնի վշտի  
Խնդրում է այսանդ ճաշակել վախճան,  
Խոկ մնացորդը կը շարունակվի, —  
Այն իրավո՞մք է ոգեսորության,

Նա հարավ կերթա, հյուսիս կըթողնի,  
Շատ բան կանոնն Կովկասյան կողմեր.  
Նորան Կովկասը ժամ ինչ կը գրավե,  
Որ գարդյա քաղե նորանից փուշեր...

Որ զգայակից է խեղճ Լեռնի,  
Գիտեմ, այդ ազնիվն կը ցավե նորան,  
Բայց որ գրկել է նախանձը շարի,  
Նոր գարմ կը լարե կատակերգության:

Եվ այդպես են միշտ ընթացել Հայեր,  
Խորթ է նոցա ձայն սրտի ճամոզման.  
Նախանձ ու նախանձ—խավարի սերմեր—  
Առատ, լիաձեռն վիժել են միայն:

Քո՞ղ կոծի կուրծքը խավարասիրի.  
Նորա վաստակը նորան կըծածկե,  
Եվ արդարության թարմ արմավենի  
Անարվեստ վաստակն միշտ կը պսակե:

Թո՞ղ բառաշխաւը, բզզալով անքոմի,  
Մրե յուր տողերն, որ քանի դաժան,  
Նույնչափ գրվածի և արժողություն,  
Նույնչափ բերթողը հաճ և բավական:

Իմ ընթերցողներ, պարծանք Լկոնին.  
Նորան չէ դիպչում պատրանքը փառքի,  
Թե պիտի սպասե՞ր դեռ գաղաստանին  
Հրապարակ հանած կատակերգակի:

Երեկյան տղետր, որոնց պիտո էր,  
Արակս խարտիլսկ պահ դրան զնել,  
Այժմ, իմ Աստված, առատ գովեստներ  
Չեղած տաղանդով կարծում են ինձ էլ...

Այո՛, իմբագիր մի խելացնոր,  
Գուցե ձեր գործին կը ծափահարի,  
Բայց կրիտիկոսն—այդ սուրբ դատավոր,  
Ի՞նչ վարձ կամ վճիռ պիտի հատանի:

Ի՞նչ է ցանկությունդ, անբաղդ իմաստակ:  
Արդեն քեզ՝ խեղգեց հնության փոշին,  
Գալոց սերնդի, թշվառ նշավակ,  
Ինչո՞ւ գու ծնար.—վայ այդպիս կյանքին...

— — —

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ II ԳԼԽԻ

Ներածությունն Հայի կյանքի առհասարակ խանգարումը Աղբյուրը արք Փանդարման: Փպրոցների պակասությունը Հայ վարժապետները, նոցա հետամնաց ուղղությունը Հայ կրոնուսույցքը: Կրոնի մեծությունը Կրոնի թույլ դասատվությունը: Լոռնի վիշտը բացահայտվում է: Լեռն, շատ գրքեր յուր հետ առած, ճանապարհ է ընկնում դեպի Կավկաս: Ճանապարհին պատահում է նորան հայ բաղար, այսուեղ ժողովուրդը բարկոծում է յուր հովիվը: Հովիվը Լեռն գնում է հառաջ Կազբեկ սարի արծիվը: Նկարագիր բնությունն Լեռն առժամանակ ինչ Կամի մոռանալ յուր վիշտը: Խոսակցությունը քնարի հետ Հայի ընչափությունը: Տխուր մտածմունք ազգասիրության մասին:

Հեղինակի արհամարհանքը անազնիվ տաղաշափին:

## ԴԱՅԱՆԻԱ Ա

Люди привыкают к злу до такой степени, что считают жалобы неравнением, если не преступлением.

Дж. Ст. Милль.

Երանի՝ նորան, որ նախապաշար  
Մերժելով կարծիք, սիրել է լսել  
Սրտի համոզման, և անհիշաշար  
Սուրբ ճշմարտության կողմն է համբռուելու

Երանի՝ նորան, որ նախամեծար  
Առնելով պատիվ անոտի փառքին,  
Ազատ գնում է կյանքի ճանապարհ,  
Զեօք պարզելով յուր նպատակին,

Որ բացել է սիրտն ուսման առաջն,  
Զրահավորված ընդդեմ շարության,  
Պո ներշնչելով գիտության անձրև,  
Պաղագործել է Հոգու անդաստան:

Իցե՞ թե Հայն, մի օր սթափված  
Խավարի գրկից, նախանձող լիներ  
Այս մեծ խրատին, և, պայծառացած,  
Յուր մեռելություն լուսով փարատեր:

Իցե՞ թե, Աստված, Հայն խոստովանե՛ք  
Յուր անոսրամիտ առաջնորդների  
Վարդապետություն, յուր մտքի վերքեր,—  
Եվ թափե՞ր դոցա, որպես թուն իժի:

Հայն գոսացել է, վա՞յ նորա օրին,  
Անդութ խավարի գալազանի տակ-  
եվ խեղճի կյանքը և խեղճի հոգին  
Ապականվելով, դարձել է փլատակ:

հավարն է Հային ճակատագրել  
Կապույտ երկնի տակ հրանյութ շանթեր,  
Եթե ոչ այդպես, պիտո եր կարծել.  
Հայը կը փառե՞ր, հայը կը տիրե՞ր...

Ո՞վ են վարժապետ այդ անբախտ ազգի?  
Ո՞վ բարողիչներ լուսավարության:  
Ո՞ւր են դպրոցներ գիտությունների,  
Քանի՞ աշակերտ ուսումնառության.

Հա՛յ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ վարժապետներ  
Ունիս դու քո մեջ դաստիարակիչ,  
Որ հատանեին խավարի սերմեր,  
Քո բարերության այնքան խափանիչ:

Հա՛յ ազգ, ինձ ասա՛, ի՞նչ ես ինձ տանջում.—  
Եվ լուսն է ազգ, չոնի պատասխան,  
Նա յուր արտասուրն է միայն սրբում,  
Եվ յուց է տալիս վերը խեղճության:

Նա կամի ասել, որ անապատ եմ,  
Ուր շատ վարժապետ մտավ և ելավ,  
Ետ բաներ խոսեց լոկ և անխռնեմ—  
Եվ դորանով ցալս լրինթեացավ:

Այն մարդիկ էին անբարույական,  
Ճշմարիտ լուսից միշտ աքսորական,  
Անկյանք, անպատճ, ծերությամբ ճնշված,  
Ճնության փոշով համարյա մեռած:

Այն փարիսեցիք, որ տրտնջալով  
Խաչեցին Քրիստոսն առողջ կրթության,  
Եվ Հոժարասիրտ խավար գնալով,—  
Որդի՞ր նոցա մեջ միայն շատացան:

\* Ոչ ոք թող կողմնակի մեկնություն շտա մեր խոսքին, իբրև թի մենք  
Հարձակվում էինք հայտնի անձին վերա, այդպես մտածողը ամենեին շէ հաս-  
կացել մեր գործի ներքին կապը ու խորհուրդը:

Վարժապետ և ի վերջո ազգասեր, կրոնոսուց ասելով, ումինք ապացուց  
ու թի Մարկոս, մի Կիրակոս, մի Մարտիրոս, ալլ, համարյա ընդհանուր  
ազգային վարժապետությունը Եթե մեջ ներեր մեր գործի շափը ու պատշաճը  
— մենք կարող էինք մեծարեկի փաստերով համրգել այդ բանի մեջ և նույնիսկ  
ինքնահավան հակառակորդը մեր Բայց թողնենք այժմ, մի ալ ժամանակ գու-  
ցե ձեռնարկենք:

Ով կրոնուսուցց, ծանոթ է այս քեզ,  
Հասկանո՞ւմ ես դու, ինչ եմ խռոամ ես.  
Թացատրե՞լ ես դու այս ըսկղբներ,  
Որ սեր խռոսին քո աշակերտներ:

Դու վարժապետ ես, ասա՛ մեղ արձակ,  
Դու աստվածային տառերի թարգման.  
Կրթեցի՞ս սրտեր, որ մի պատարագ  
Ենկերին անկեղծ կրոնանիրության:

Կակազ է լեզուգ, և հազիվ ահա  
Հնչում է խոսքս, որ արդարանա  
Թե «քո բանը չէ, գու աշխարհական,  
Ուրեմն չունիս մասըն քննության»:

Ո՞չ, իմ հայ եղբայր, ես ցավում եմ քեզ,  
Ցավում եմ հոգով և ոչ խոսքերով.  
Անապատ քո սիրտ—եղբայր իմ, խեղճ ես,  
Անապատ ես դու ցամաք ավազով:

Դու չունիս քո մեջ ոչինչ ուսուցիչ,—  
Թե ոմիս—գայլ են ոչխարի մորթով.  
Ո՞վ պետք է լինի սրափդ սփոփիչ,  
Երբ մենք չափում ենք մեր օդտի չափով:

Եվ մի՞թե կեռն իրավունք չուներ  
Տանջվել ծովի մեջ հուսահատ վշտի,  
Եվ մի՞թե կեռն գոշել կարող չեր,  
Որ Հայի կյանքն է խոնց ախորանքի:

Բավական է այս, մի ա՛լլ ժամանակ  
Զոհելու հմ այդ մեծադնի գործին:  
Բայց այժմ, խնդրեմ, եկե՛ք և գնանք,  
Հետեհնք սակավ ծանոթ կեռնին:

Ի՞նչ եղավ կեռն, տարակուսելով  
Ինձ հարցանում է ընթերցասիրողն.  
Կամի՞ս որ լսենք, —սկսի՛ր շուտով.  
Տա՛ր կեռն Կալկաս, հառաջ տար, բերթող:—

Այդպե՞ս է, ուրեմն թո՛ղ հյուսիս օտար,  
Թո՛ղ քո սիրածը, գնանք միասին,  
Ուր բարձրանում է Կաղբեկ մեծափառ, —

Եվ այն ժամանակ ողջուցն Կավեասին,  
Իսկ թե սա ձածկվի—ողջուցն դաշտերին:  
Փրփրածավալ գետերին ողջուցն,  
Եւ հառաջ կը գա քեզ նոր բնություն:

Ներիր ինձ, Մոսկվա:

Կրկին տեսության քեզ խոսքըս տալով,  
Երկար միջոցով կամիմ բաժանվել,  
Եվ սրտիս հուզման հնազանդելով,  
Իմ կեռնի հետ ճանապարհորդել.  
Պատրաստ կամ:—Ահա—

Աիրած գրքերից մեծ պաշար առած:—  
Տիրուր մեղեդիր Հեյնե պոետի,  
Գեորգի Ֆաուլստ, այս անմահ քերթված,  
Թափառաշրջիկ արկածըն Հարուդի:

Երգիծանիւ զործը Հոմենալի,  
Եվ Թեռանժեի ոգելից երդեր,  
Եվ պատմությունը լրջամիտ Թեորի,  
Եվ Շերսպիրի ողբերգություններ:

Մի քանի համար Մեղվից Պոլիսի,  
Մի քանի երգեր մեզ ծանօթ Կոմսի,—  
Եվ այս բոլորը ամուր կապկած,  
Անմեղ լրագրի թերթերով փաթթած:—

Գնում է կեռն: Խոտորնակ որպես  
Յուր սլացման մեջ ծիծառը գարնան,  
Թռչում է կեռն հեռու ասպարեզ,—  
Դյութիւ արկելք—ճնշված Հայաստան:

Արձակ ձբում է յուրյան ճանապարհ  
Օդում սավառնող արձվի թոփչըով,  
Նա հատանում է դաշտեր ծաղկավատ,  
Հայրենի երկիր ուղիղ դիմելով:

Եվ ահա քաղաք... և այն հայ քաղաք:  
Այսուեզ խոսված ժողովրդականը,  
Պախարակում են վարքը անսուակ  
Ամբարիշտ հովվի անբարոյական...

Խավար բոնավոր և ծնունդ դահճի,  
Դահճին արարքով և դահճին հողով,  
Հովվամ է հոտք մեր կուսավորչի  
Անուղղա բարքով, թյուր քարոզերով.

Մեծ արվեստ ունի Հրապուրանքի  
Եվ խորամանկ է այդ շարի հոգին,  
Ռոպես անդունքը օվկիանոսի,  
Գիտե բանտարկել յուր անեղ դադոնին:

Ռոպես գիշերի թանձրամած խավար,  
Նորա կուրծքի մեջ անձոռնի միտքեր  
Աչեկոծվում են, նա սորկաբար  
Լուսմ է նոցա, պարզում է ձեռներ...

Եվ ամբողջ դժոխքն ամբարշտության  
Ճնշում է Հովիին, նա զայտագողի,  
Պղծելով կնիքն ձևոնադրության  
Նա զավաճա՞ն է յուր // Հալբապետի:

Կը ճնշվես բաղդից, եզվի՛տ ինքնիշխան,  
Եվ կը ճնշե օհկ առարինություն,  
Եվ այս բո պատիժ, խորամանկ շղթան,  
Որ ճնանում է բո մեջ ցանկություն:

Եղթայել կամքը խեղճ ժողովրդի,  
Զարօրությունը ոտնակոփ առնել, —  
Ճնշելու է քեզ, Լայոլի որդի. —  
Պատրաստ է քեզ փոսն, որ դու հա փորել:

Այն գործը միայն փառը է պահանջում,  
Որ բաղաբացու փայլում է կյանքով,  
Որ ազգի վիճակն է բարեկարգում,  
Որ զարդարում է աշխարհս շնորհով:

Գու չար եա կործում և կամքիս, որ այդ  
Հանցանքի իմք մենք բարի՛ հաշվինք,  
Եվ ճշմարտության լարել որոգայթ  
Գու խիստ Հոժար նս, մի՛թե չդիտենք:

Ծնկեր քո դործին՝ դժոխք սկամած,  
Եվ բոլոր դեեր բո հետ դինվորված,  
Ուր շարագործ է մատնիլ մի տպեղ,  
Գու տասնապատիկ Հուդա նս այնտեղ:

Պատասխանի՛ր մեզ, ուր է արգասիք  
Քո վաստակների, ինչո՞վ կարացավ  
Քո անբաղդ հոտք լինել երջանիկ,  
Գու դիտեն, Հովի՛վ, բանի վշտացավ...

Մթին ախտերով զբաղված է նա,  
Կամի գրավիկ սիրութ քաղաքի,  
Որ յուր հանցանը անպատիժ մնա,  
Որ նա առավիկ հասանե փառքի:

Բայց ժողովուրդը հոգով բարկացած,  
Շատ չշտացած է գավազանի տակ.  
Բողոք է կարգում ձեռք ձեռքի տըված,  
Պատրաստ է հանել նորան հրապարակ...

Կանգնում է կեռն, կամի բան խոսել,  
Բայց լծած է կառու Հովիվն շտապով  
Գիմում է հյուսիս, կամի գանգատել,  
Որ օրենքն լինի նորան շատագով:

«Անմիտ սև եղբայր», զոշում է կեռն,  
«Գան է բո գալոցը, ուր ես շտապում»  
Ահա մինեցավ կյանքիդ նորիզոն,  
Ինը օրենքը ըեզ մա՞ է վճռում»...

Եվ հառաջ կեռն: Սարեր, Հովիտներ  
Անհետանում են նորա աշքերից.  
Մի շնաշխարհիկ բացվում է պատկեր  
Մպիտակափոռ Կաղբեկի դլիից:

Մպիտակ կատարն բարձր լեռների,  
Կարծես, երկնքի դիպչում են ամպին,  
Եվ ձյունից հյուսած թագ աղամանդի  
Պճնում են նոցա հպարտ գաղաթին:

Եվ քարանձավից արծիվ մինավոր,  
Թհերը լայնած, գիտե սալառնել  
Աշնքան անթափանց և աշնքան հզոր,  
Մինչև հնտամուսո աշքերից Կորչել:

Ա՞վ արծիվ, արծիվ, բանի՛ օդապար  
Վերացել ես դու կապուտակ սահման,  
Ա՞խ, եթե Հայի դրոշը բարձրանար  
Անարդ կապանքից մինչ ա'յդ աստիճան».

Ա՞խ, եթե Հայի ուսերը ճեղքեր  
Ռիսերիմ լուծը յուր բոնավորի,  
Որպես ճեղքում ես դու արձակ եթեր,  
Եթեղ կազմությամբ կարո՞ղ թերի:

ի՞նչ գեղեցկությամբ փովում են գաշտեց  
Հայացքի առջև նորատես մարդի,  
Ոսկի հոսանքով գույնգույն ծաղիկներ,  
Ծոճվում են, որպես խաղացքն առվակի:

Բայց, ափսո'ս, ինչպես շտապ բալերով  
Ճանապարհորդը ոտքը է կոխում,  
Նա սկսում է անիծել հոգով  
Այն, ինչ առաջուց դրախտ էր թվում,

Տեղ տեղ պղծած է ավաղակների  
Գաղանաբարո ամերածներից.  
Սշերդ լցվում են արյունով ցավի,  
Խոր արձակում ես հոգոց ու կսկիծ:

Անպիտա'ն ցեղեր, արժանի՝ եթ դուք  
Վայելել բարիքն այդ պերճ երկրի.  
Քանի՛ թափել է ձեր վայրագ բազուկ  
Անմեղ արյունը խեղճ անցավորի:

Քանի՛ ծնողներ գառն արտասուքով  
Ողբացին կորուստ հարազատների,  
Քանի՛ ծովացան լացով, կոկիծով  
Առագաստները նորեկ հարսների,

Ահագին ժայռեր և ապառաժներ,  
Մավալված լուսով նոր արշալուսի,  
Ցըցված են այստեղ, Մարգագետիններ  
Առողված ցողով հանդս են գալի:

Հառաջ և հառաջ,—և ոչ մի վայրկյան  
Չէ կանդնում կեռն թերվում են սարեր:  
Մածկվում են կաղնիք,—և նոր տեսարան,  
Նոր փոփոխություն, և նո՞ր հրաշքներ:

Թո՛ղ մեղկ, նրբասեր որդիք բնության  
Չսիրն էնոն, որ, թափառական,  
Չափում է վայրեր, անմարդ անապատ,  
Վերջ շղնելով ախտին հուսահատ  
Ոչինչ հաճություն թո՛ղ շպատճառ  
Նոցա, որ անբաժ են կնոջ ծոցից,  
Որոնց դատարկ կյանք անհոգ սահում է  
Զբոսանքի մեջ աղաղակալից.

Հեռնի հոգին, որ այնքան ցավով  
Ատում է հանգիստ, նման է կյանքին  
Հարազատ ազգի, որ լի բաժակով  
Ճաշակում է թույն դագաղի կողքին:

Զմբխայա դաշտեր, այստեղ համասփյուռ,  
Մանուշակ, հասմիկ—գարում սիրելի—  
Գալար հովիտից փլում է զեփյուռ,  
Թաղդր, որպես շունչ դեսարուս կուսի:

Տե՛ս, ականակիտ այստեղ ջինչ առվակ  
Հեղիկ վաղաւմ է ծաղիկների տակ.  
Վայրի շուշանը գլմիկը կախած,  
Գղվում է շուրը և է զմայլած:

Հեռն կարծում է, որ այդ պարզ շրեր  
Հեռու կտանեն կոկիծը սրտի.  
Կը ժպտա գարուն. Կը գան ծիծառներ,  
Փոքր ինչ կը զարթի վշացած հոգի:

Զարկում է բնարին,—բայց նա հնչում է  
Մի սրտասարուռ, տիտոր եղանակ.  
Ոլդրա՛, պատանի», նա շնչում է.—  
Ծեղ վաղ է բմպել փրկության բաժակ:

Դու կորցրեցիր այն բոպեից  
Բաղզի ժպիտը, երբ Հայաստանի  
Փշրեցավ փառքը քո հատուկ ձեռից,—  
Եվ կը դտանես, երբ նորից կը կանգնի:

Ա՛հ, մի՛ խնդրիր ինձ, իմ դկն-թախծություն  
Ռւտում է հոգիս այնպես կատաղած:  
Անմի՛տ պատանի, ի՞նչ ուրախություն,—  
Հայր սրտի մեջ դժո՞խը է ծածկված:  
Դժոխը է, ասեմ, այն տգիտության,  
Որ, որպես ճճի, ուտում է նորան,  
Որ խանգարելով և ուսում, և լուս,  
Չէ թողել նորան բարօրության հովու:

Նա ամենայն բան պատրաստ է գործել,  
Հայրինիք, պարծանք թշնամուն մատնել,  
Փո՛ղ նորան տվեցեք, նա փող է սիրում,  
(Միայն առանց փո՛ղի դագաղ է զնում:)

Նյութապաշտ է Հայն, ցուրտ որպիս սառուց՝  
Հաշիվների մեջ թաղված և մեռած,  
Նա արդեն սրտից մերժել է վազուց  
Դեղեցկի տիպը—վկա է Աստված:

Արծաթ—և նորան փայլեցավ արև,  
Վառվում են աշբեր, թոշում է հոգով.  
Ո՞վ Արծաթ, դու միշտ Հայի առաջեւ  
Ներկայանում ես դրախտի դեմքով:

Ով և դու լինիս, թե շար ախտակիր,  
Թե պիղծ խարերա, թե ազնիվ հոգի, —  
Հայն կառաջարկե թեզ միշտ մի՛ խնդիր.  
Ի՞նչ է, Հարուստ հս, ոմնի՞ս շատ սսկի:

Մեծատո՞ւն ես դուշ բոլորի առջեւ  
Գոներդ բա՞ց ենց սեղանդ ծածկվա՞ծ.  
Եվ լի՞ք են պարկերդ, մենք այսուհետեւ  
Հա՞յր և որդի՛ ենք, ուխտով հաստատած:

Եվ այս են նոցա օրի հոգսերը.  
Ենչ որ կարող ես, բանդի՛ր, կործանի՛ր.  
Ո՞վ է Հարցանում, գանձ թեզ մողովի՞ր, —  
Թող մենոնի՛ տնանկ, կորչի՛ արդառը:

Գեթ մի ցավ, մի գութ, մի կարեկցություն  
Անուն աղքատին ցույց տալին դոքա: —  
Այդպիս ես դու միշտ, ո՞վ Հարստություն—  
Երբ թեզ տիրում են կարողը անզգաւ:

Գեղեցիկ է կյանք և հարստություն,  
Թե աթոռակից է և գիտություն,  
Բայց թե վերջինը, լուրսը պակասեր, —  
Լի աղտեղությամբ կյանքը դամրաներ:

Լուցավ Քնարն, արտասանելով  
Մասությունը այս նշանագոր:  
Կանգնած է Լիոն, ցավից խեղզվելով  
Բացադաշտում է նա կոսկածավոր:

Գիտե՞ր, բարեկա՞մք, ի՞նչ զգաց հոգիս. —  
Բայց ինչո՞ւ խնձորն երկպառակության  
Զգեմ անվրդուկ ձեր կյանքի շրջան.  
Ա՞յս, դուք չեք կարող օգնել ցավերին:

Նիրհեցի՛ք անո՞ւշ թո՛ղ թեաւարտէ  
Հսկեն ձեր վերա անմեղ հրեշտակներ.—  
Ամսիակա՛լ կարծիք,—անլույս թանձրացած  
Խավարում շրջող մահաթո՛ւյն դեր:

Մանր բնկան վերաս անգութ շդթաներ,  
Եվ այն ժամանակ ես ստուգեցի,  
Թանի՛ խավարեն Հայրենի աստղեր,  
Խավա՛ր և սիրոն Հայրենասիրի:

Եվ շր շնչե օդ սարերի աղատ—  
Նուզն է, թէ շկա և երանություն, —  
Եվ շարրել հոսանք կյանքի հարազատ—  
Հիվա՞նդ է, հիվա՞նդ և մահկանացուն:

Եվ երբ գիտության կը կփայլի դրոշակ  
Իմ անբաղդ եղրոր Հայի ճակատին,  
Ես այն ժամանա՞կ, ես այն ժամանա՞կ  
Կը տեսանեմ կյանք իմ ազգի ծոցին:

Ասաց այս կեն, աշքերը ձգեց  
Դեպի արևելք, մի խոր ախ քաշեց.  
Այն կայծակնահար վերքի նշան էր,  
Որ գեպ Հայաստան նորան գրավում էր:

Նա վշտանում է, բայց վշտի հարված  
Բև որի աշքին տեսանելի չէ, —  
Եվ այդ գաղտնի գնն, աղեղը լարած,  
Հանոպագ նորան առաջնորդում է:

Նորա ներքին կյանք—թախիծ տրտմության:  
Մտքի շարժունքը—այեկո՛ծ մի ծով,  
Աւրախության դուռն, կնքած համբայան,  
Այլ փշելու չէ՝ նորան գարնան հով:

Նորա մատադ սիրա, որ երրեմն պայծառ  
Ծաղկում էր, որպես պարտեղ նազելի,  
Խեղղված կուրծքի մեջ, բամում է խոպան  
Փորձության բաժակ, որ նորից լցնի:

— — —  
Կնճռում է ճակատն և դողդողալով  
Բացում է Հարուստն գանձերը պարկի,  
Նա ոսկի ոճի և նա դորանով  
Ամրող է զնել սիրան ճեղինակին

Նառվեցավ Զոին, նալեց դեպի վեր.  
«Պիա՝ կորչի Չարը, պիտ՝ կորչի՛ Հայեա-  
ջոշեց սաստկությամբ, թոթափեց թեհը,  
Թռավ, ոտք զրեց բարձր Հելիկոն։

Ների՛ր գու Երգիշ, անշարժ աշխարհին,  
Գնրեզմանատան ուրվականների. —  
Կոխում եմ անեծքդ հաստատ բայլերով,  
Խորին նախատինք բեղ նվիրելով։

Ասա՛, ո՛վ Զոիլ, ի՞նչ ես մասնում,  
Ի՞նչ ծածուկ թակարդ ես ինձ պատրաստում.  
Գու կարմրո՞ւմ ես, Հրե՛շ անհեթեթ,  
Կապվե՛լ է լեզուդ, — է՛հ, Աստված բեղ հետ։

Թշվա՛ռ ծաղրածու, մահապա՛րտ գաղան,  
Քերթի՛ր ճաշակը բանաստեղծության,  
Բայց մեծ է քո մեղք և աններելի,  
Մեր պարսալանը քո վերա լինի։

Սև գործի հետքը կնքած ճակատիդ,  
Քեզ խոստանում է Վարձ մի խայտառակ,  
Եվ, կամիմ կարծել, անպարծանք գլխիդ  
Նա կիշուցանե մի դժնյա պսակ։

Ո՞ւր է զգացմունք մարդկեղեն պատվիր,  
Ո՞ւր ազնըլություն, ո՞ւր է դրոշակ  
Այն սուրբ վաստակի Ա՞լս, թե կործանվի  
Քո վերա, Երգի՛շ, մեղքիդ աշտարակ։

Թո՞ղ կատաղի Զարն, — բայց ես հանգիստ եմ.  
Ինձ հասկանում են մարդիկ բանագետ:  
Եսկ երկրորդ զլիին, բարեկամք, կարծեմ,  
Արժան է զնել այստեղ վերջակետ։

Այս՛, այստեղ վերջ. — մյուս արկածներ  
Հետո կը պատմեմ. Հկա՛ զորություն,  
Ա՞լս, արթո՞ւն մուղայք, ա՛լս յո՞թը բուլընը —  
Դե՛մ մինը ձեզնից գար ինձ օգնություն...»

— — —

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ III ԳԼԽԻ

Արեգակը, դուրս փայլելով, փախստական է առնում գիշերը։ Համառուսկադիր բնության։ Լևոն տիսուր և տրոտում մտանում է Կավեաս։ Նորան երկում է մի նոր քաղաք Կիրակի է։ Անգործ և պերճասեր հարստականը։ Հայ աղջիկները Լևոն հավանում է նոցա գեղեցկության, բայց, ի վերջո շգտնելով նոցա վերա ազգության նշան, մեղադրում է հանդիմանելով։ Լևոնի ազգասիրական դրույցը դոցա հետ Եղիշե։ — Հինգերորդ դարի օրիորդները և մեղադրած աղջիկների պատասխանը։ Հայ ծնողների անհոգությունը դաստիարակության մասին։ Կանանց ազատությունը ( émancipation ) որպես շարժառիթ ազգային լուսավորության։ Պահարականը Հայ ծնողներին։ Լևոնի վսեմ երդիծառանությունը։ Տիսուր մտածմունք ազգի խեղճության։ Եթանշանից կաշառված Մեծատաւնը։

Խոսք անկոչ քերթողների և մատենագիրների հետ։

### ԴԱՌԻՆԵ Ի I

Ուր զանձի ձեր են՝ անց եւ սիրտ ձեր յնդիցին։  
Աւետարակ։

Гласность не препятствует злу и  
не побуждает к доброму, если общество  
не обращает внимания на самое дело;  
но без гласности, как препятствовать  
злу, как поощрить добро, если и вы-  
деть то их нельзя?

Дж. Ст. Милль.

Գիշերը փախավ։ Երկնակամարից  
Նուգը և թափանցիկ վարագուցըն ընկավ։  
Մածկվեցավ լուսին Եթերն աստղալից  
Թրքում-ծիրանի հանդերձ զգեցավ։

Վարդյա այգածին  
Ավետում է օր։ Որպես զուտ ոսկի,  
Սփռելով նշույլ նիրհող յեռներին,  
Հանդես է գալիս Սկալն երկնքի։

Ահա թռչուններն եղանակում են  
Մի եղեմային երաժշտություն,  
Եվ լույս Տվողին նորա կարդում են  
Բացարական օրհնաբանություն։

Եվ կրոնասերն երկուուզած սրտով  
Զայնում է Աստված տաք արտասուրով  
Եվ բարձրանում է նորա օթեան  
Աղոթքը, սրահո ցողն առավոտյան։

Զարթում է Լևոն։—Ահա աշխարհ նոր  
Շատ խայտաճումակ բնակիչներով։—

Հայ, Թուրքը, Օսետին, Զերբեզ ահավոր,  
Հրեա խորամանկ, Ծուռ ինքնագով:

Եվ թեթևամիտ ազգը Վրացի,  
Անտես առնելով փառքը հայրենի,  
Միշտ դատարկաձեռն, շոր չունի հագին,  
Անդամ կարոտ է օտար փշրանքին:

Ասելու բան կա և լսելու բան,  
Շատ հետաքրթիր վեպը ու զրուցներ...  
Եվ շատ ցավում եմ, որ իս չեմ իշխան,  
Որ արձակ խոսել կարելի լիներ:

Ի՞նչ ձայնը զզրդոց: Լայն մեջտաններում  
Խռովում է ամբողիս:—Եվ ի՞նչ պերճություն:—  
Չլինի՛ Մամոն ոսկելվառ կառում  
Տոնախմբում է յով իշխանություն:

Ա'զգ, մի՛ խաբիր քեզ սնուտի հուլսերով,  
Երբ սոված, ծարավ մոտեցար մահին,  
Որ այդ մարդիկը քո խեղճ վիճակով  
Վայրկյան մի գոնե, ասեմ, շարժվեին:

Թե շորերդ ճոթուած, թե մերկ քո մարմին,  
Թե մուրացկություն ծանրացավ վերադ:—  
Խաղալի՛ր դարձար անդամներին,  
Ցեխո՞վ ծեփեցին քո անմեղ ճակատ:

Մհնը գնահատել չգիտենը ազգություն,  
Նորա ցավերին դեղ-դարման անել.  
Ահա՛, ինչո՞ւ մհնը սովոր ենք ատել,  
Որ ատում են սուս առաքինություն:

Տեսե՞ր, նանրասեր, դատարկաշրջիկ,  
Փայլում է լուսմբը հարստականների,  
Ո՞ւր եթ շտապում, մեղկացած որդիք, —  
Կլել սրբություն, ո՞ւմ ոչ այդ հայտնի:

Միայն Համբարն է, որ համեստ բարեթվ  
Սիրում է վաստակ, հեռու վատ կյանքից:  
Հպարտ է Համբարն. պարզերս դեմքով,  
Ոչինչ ահ չունի զեխոտ հարստից:

Եվ նա սիրում է յուր ազգի պարծանք,  
Բայց ո՞չ գիտակից. կույր է այդ սիրը.  
Նա հայտացին բերում է զրկանք...  
Երբեմն փայլում է նորա սուսերը...

Օր է յոթերորդ: Ժաղիտ շրթունքին  
Ճեմում են այստեղ ընկերք մուզայի.  
Մտվեր է անկյանք սոցա առաջին  
Գումաթափ, գեղնած աղջիկն Հյուախիւ:

Մազերը սանրած, գեղեցիկ հասակ—  
Հավանելի են շրջահած աշբեին...  
Ո՞վ երիտասարդ, բե՛ր դոցա պսակ,  
Թո՛ղ տա յուր հարկը քո մատաղ հոգին:

Կերպարանք զվարթ, խոշոր, սև աշբեր,  
Գիշեր հաղորդող ցերեկի լուսին,  
Ճղած վարդի պես վառվում են թշեր,  
Թո՞ց ու կրակ է դոցա երեսին:

Բնական է այդ ո՞չ արվեստական,  
Բայց ահա՝ շինծու ներկն եվրոպայի.  
Բերում է դոցա մի սաստիկ հերձված—  
Յուր մեռած փայլը,—Աստված այդ շանի:

Ո՞ւր է այն պոետ, որ բացահայտիլ  
Խոսքերով պատմեր շարժվածք գծերի,  
Ո՞ւր այն բանաստեղծ, և ո՞ւր նկարիչ,  
Գեթ իրագործեր կեսն այդ հայացըի:

Ո՞վ դու Հելլադա, ուր անդրանիկ  
Վաղուց հռչակված է գեղեցկություն,  
Այստեղ ճանաշի՞ր ամեն երշանիկ  
Կախարդիչ սիրո կատարելություն:

Եվ չնաշխարհիկ դու հտալիա,  
Ոսկեշող պնորթ բանաստեղծների,  
Խլեցին դափնիդ այստեղ սևաշյա  
Օրիորդները նիրհող կավկասի:

Մշտագեղ գարնան ձոնում են հույսեր,—  
Թի այդ առ աշոք երա՞զ խաբուաիկ.  
Աստվածատի՞պ եք մրահոն կույսեր,  
Ա՞խ, եթե երրեք շթառամեիք:

Բայց ծարավի սիրտս, սիրո ցնորը  
Անտես առնելով, միշտ որոնում է,  
Գոյա մեջ գտնել հայության տարրը,—  
Երբեք չեմ հասնում փափագիս—զո՞ւր է:

Օտարի բարբառ, օտարի լեզուն,  
Հայոց օրիորդներ, ինձ չե գրավում.  
Ինչո՞ւ չոմիք Հայ դաստիարակություն,  
Ինչո՞ւ Հայ խոսքը ձեղ չե զարդարում:

Թե կարծո՞ւմ եք դուք որ նա չէ կարող  
Հայտնել ձեր սրտի և ցավի, և հրճվանք.  
Ո՞վ, և նորա մեջ կան շատ կախարդող  
Եվ սիրո խոսքեր, և մեղմ թոթովանք:

Եվ ձեր շրթունքը մե՞ղք են ծորում,  
Եվ ձեր աշքե՞րը կրակ են ցայտում,—  
Հրաշալի՞ Կավկաս, քեզ անդյո՞ւս ավելի,  
Ազգի համա՞ր չեք, Արմենուհինե՞ր:

Ծաղկեցե՞ր, որպես ծիծաղող գարուն,—  
Բայց ծաղկելու չէ հայրենի այդին.  
Կրծաղկի Կավկաս, ձեզ կամ Վրացին,  
Կամ Ռուս, կամ Թուրք կտանեն կնություն:

Զեր գատարկ կյանքը կանցանե ունայն...  
Երբեք բաղդավոր լինել կարող չեք,  
Զեզ կնախատի աշխարհ ամենայն,  
Դուք ձեր ծնունդը անիծել կոկեք:

Կը գան ձեր դուռը Երդիներ անտուն,  
Կասեն, Տիկիններ, մայր մեր Հայաստան,  
Հիվա՞նդ է, մե՞րկ է—հասե՞ր օգնություն,—  
«Չենք հանաշում ձեզ»,—այս ձեր պատասխան:

Ո՞ւ դառն արտասուր, ո՞ւ ձայն դողդոշյուն,  
Ո՞ւ հայրենիքի անարդ պղծություն,  
Կարող չեն ձեր մեջ առաքինական  
Արծարծել գութ մի բեկված հայության:

Բայց այդպես չեին ձեր անցյալ քրոյրեր,  
Նորա սիրեցին անուն ազգության,  
Նորա սրբեցին մայրենի վերքեր  
Անմեղ արյունով և անմահացա՞ն:

Քաղցրածայն Բամբիռն մի ձեռն առնելով,  
Զինավառեցան Հայոց ազդիկներ,  
Եվ մատաղ կուրծքը խաշակնքելով,  
Պատերազմական հնչեցին տաղեր:

Կին էին ծնել, բայց երբ հայ ազգին  
Ավեր ուղարկեց Պարսիկն այն գոռող\*\*  
Տկորուստ», գոռացին և սուրբ ձեռին  
Երիվար Հեծան, որպես մի հերոս

Սուրբ առագաստը մոռացան նորա,  
Եվ Հիշեցին Խնջուլքն հարսնության,  
Ազգ ու Հայրենիք շրթունքի վերա,  
Փովեցան դաշտում, — ով մեծ քաշության:

Եվ փոշոտեցան, և ծխոսեցան  
Անկողինները նորեկ հարսների,  
Տրտմեցան նորա և աշխով տեսան  
Անողորմ տանջանք սիրող ամուսնի:

Գարունը Հասավ, եկան ծիծառներ,  
Վարդը բացվեցավ: Եվ անհոգ մարդիկ  
Տեսան, խնդացին: — Բայց նորա, խեղճեր,  
Երբեք շտեսան յուրյանց սիրելիք:

Շատ տարիք անցան... Լացով, կսկիծով  
Անուշ Հայրենիք հիշատակեցին...  
Եվ նորա համար մեռան անխոռվ, —  
Եվ այսպես յուրյանց սերը ցույց տվին:

Սպիտակությունը սուրբ ոսկերի  
Խնկով որսկեցին դաշտն Ավարայրի: —  
Զարմացան ազգեր, եկան և տեսան: —  
Մանուշակ, շուշան նոցանից բուսան:

Գափնիք անթառամ թո՛ղ ձեզ պատեն,  
Թո՛ղ ձեր ոսկերը շերժ արտասուրով  
Հայրենասերի աշքերը թացեն: —  
Խաղաղություն ձեզ սուրբ սաղմոսներով:

\* Եվագարան կամ գործիք, որով մեր նախնիքը երգում էին ազգային հերոսների արարքը ու քաշագործությունը:

\*\* Հաղկերտ երկրորդ:

Մինչ դեռ Հայկական ծավալվում է ցող  
Աշխարհիս վերա—Հայն ձեզ կը հիշե,  
Եվ քեզ, ո՞վ անցրիս կենդանագրող,  
Ո՞վ ոգեսորված շքնաղ եղիշե:

Անմահ է վաստակն, որ ավանդել ես  
Հարազատ ազգիդ գրականության.  
Հայ լսելիքը դու կախարդում ես,  
Որպիս հանճարեղ մի պատկերահան:

Ո՞վ մեծ եղիշե, որպիսի՞ լեզվով  
Նկարում ես դու անցըը աշխարհիս...  
Ոգելից ես դու. դիրքըդ կարդալով,  
Ես մկրտվում եմ սուրբ անդամ ազգիս:

Բայց դուք, ո՞վ պայծառ և շնորհալի  
Հինգերորդ դարի Հայոց աղջիկներ,  
Քանի՛ օրհնություն խոստովան սրտի  
Զեղ անկեղծաբար բերել են նըլեր:

Դուք Զեղ կանգնեցիք շիրիմ անմոռաց,  
Ազգամիրության գործով պատկած,  
Բայց վա՛յ անարժան թոռներիս օրին,  
Որքա՛ն ցած ենք մենք,—հո՛ղը մեր գլխին,

Դուք Զեղ զո՞հեցիք Հայի պարծանքին,  
Բայց ձեր բուլընը, —ո՞հ, արտասուրից  
Խեղակում է ձայնը... անպե՞տք են ազգին...  
Հանդիմանեցե՛ք դոցա շիրիմից:

Արդար չէ արդյո՞ք, ինչ զրուցում եմ,  
Ո՞վ հայ աղջիկներ, ստո՞ւգ չեմ խոսել  
Բայց ներեցե՛ք ինձ, եթե հարցանեմ.  
«Դիտե՞՛ք հայերեն կարդալ և գրել»:

«Մենք մեղավոր շենք, ազնիվ ազգաւեր,  
Շշնչում է ինձ մի կանացի ձայն,—  
Մենք կը բանեինք դրոշն ազգության,  
Այդ արգելեցին մեզ մեր ծնողներ:

Մենք կկապեինք մայրենի խոցեր,  
Նորա կտայինք բոլոր մեր զարդեր.  
Մենք Հայի վիշտով կվշտանայինք,  
Եվ թշնամու դեմ սո՞ւր կհանեինք:

Եվ երանություն չէ բացվում ձեզնով,  
երբ գուը նայում եք աղջկա վերան.  
Տեսե՛ք, ի՞նչ տխուր գծագրներով  
Ներկայանում է քուր մեր անպաշտպան:

Ահա՝ ժամանակ հասակ պսակի, —  
Նա մտնում է կյանք, ի՞նչ խորհուրդ ունի,  
Ի՞նչ մայր կարող էր լինել այդ աղջիկ,  
Երբ տղամարդին դարձավ խաղալիկ:

Այստեղ անօգուտ սուրբ ամուսնություն,  
Նա մարմնական է միայն ցանկություն,  
Այդտեղ տղամարդ կնոջ բռնավոր. —  
Կի՞նը հնազանդ, կի՞ն անձայն, անդորր:

Նա ծառա, նա հարճ, նա ցած աղախին,  
Նա ցավով ճընշված մայր զավակածին. —  
Այդ ա'յն եվան է, որ մահի կնրով  
Ստացավ վիճակ Մովսեսի գրչով:

Այդ ա'յն եվան է, որ, մտնելով կյանք,  
Պիտի վշտանա և տանի զրկանք,  
Այն եվան, ա'յն կին, որ հարյուրներով  
Գնացին հարեմ, մեռան տանշվելով:

Ո՞ւր է քո պատիմին, կի՞ն թրշվառական,  
Ո՞ւր է կանացի տաճարն սրբության.  
Աստված ստեղծեց քեզ մեզ հավասար, —  
Բայց ի՞նչ տեղ տրվեց քեզ անարդ աշխարհ:

Ի՞նչ սկզբունքով քեզ ջատագովից  
Եվ օրենստան և իրավաբան,  
Դու միշտ երեխա—օրենքը վճռեց,  
Եկ միշտ անձնատուր հոգաբարձության:

Բա'ց սրտիդ վերը աշխարհիս առջև, —  
Անարդարություն թո՛ղ այսօր մեռնի,  
Թո՛ղ հորիզոն գա փրկության արև,  
Գեղեցկությունը թո՛ղ փառոք զարթնի:

Ո՛վ Հայոց հայրեր և Հայո՛ց մայրեր,  
Ինչո՞վ կարող եք ձեր խիզճը սրբել,  
Ի՞նպես աշխարհում այդ խեղճ աղջիկներ  
Կարող են յուրյանց բաղդավոր առնել:

Մանր է ձեր գործը, բան թունով թափած  
Անեծք ու նզով դառն հանցավորի.  
Զեղ ներելու շէ երկնային Աստված,  
Զեր առջև դժոխսը օ՞րն դատաստանի:

Մայր մեղ տվեցե՞ր, որ սնուցաներ  
Մեղ սուրբ կաթովը աղդաշինության,  
Որ մի օր անբաղդ Հայն լուսավորեր  
Յուր խեղդված մահով կյանքի գերեզման:

Մայր հնը պահանջում, կատարյալ մի կին,—  
Այդ մեծ վարժապետն մարդկեղեն սրտի,  
Այդ առողջ, բնբուշ կրթության որդին,  
Որ տա՛ր ազգություն, որ տա՛ր մեզ հողի:

Մենք այն ժամանակ լինելու չեինք  
Եվ խորթ, և օժար, և անպետք անդամ,  
Որ միայն Հայի անուն պղծեինք,  
Որ նորա հոտը շտեսած անդամ:

Մենք այն ժամանակ կդադարեինք  
Ամոթից խեղդված կարմրատակեւ,  
Եվ Եկոպային մենք կը հայտնեինք,  
Որ այժմ ազգ ենք... մեզ պե՞տք է սիրել:

Այ՛ս, մենք ազգ ենք և Հայի որդի,  
Մարդկության մշակ և գործակատար,  
Թո՛ղ մեր առաջն անարդելք բացվի  
Լուսավորության աղատ ճանապարհ:

Այս դուք չկամիք, Մնողը հայկական,  
Թո՛ղ այստեղ կեռն բանա յուր բերան,  
Թո՛ղ յուր պարսավանք թափի ձեր վիրա,  
Լսեցեք նորան, — սկսում է նա.

«Ա՞խ, եթե խավարն լուսով ծավալեր,  
Որ ձեր չորս կողմին թագավորում է,  
Դուք կը տեսնեիք ի՞նչ կորուստ, ավեր,  
Այդ շա՞ր սատանան ձեզ պատրաստում է»:

Ո՞վ դուք Հայ ծնողք, Հպարտ եք հուսով,  
Թե սրբությունը պղծեցիք կեղտով,  
Եվ ծափ են տալիս ուշաբարձ, տեսե՞ք  
Երբ ձեռք բերեցին ավելորդ կոպեկ:

Եվ բարձրանում են առավել և՛ վեր,  
Քան լուս, բան Աստված՝ բան Հրեշտակնե՛ր—  
Եվ երազում են երկնային ծաղկել  
Երանությունով,— փառքով պսակվել:

Բայց երբ անողոք հարվածներ բաղդի  
